Դիլիջանը

19-20-րդ
դարերում

Երկար սպասված աշխատություն է Դիլիջան քաղաքի պատմության մասին, որն ինձ անսահման հոգեհարազատ է: Գիրքն ստեղծել է Դիլիջանի համայնքային կենտրոնի նվիրյալների թիմը: Աշխատությունը թափանցող լույսի պես ընթերցողին մեկ շնչով տեսանելի է դարձնում 19-20-րդ դարերի Դիլիջանի հարուստ պատմության հավաքական նկարագիրը: Այստեղ ներկայացված են մեր դրախտային քաղաքի ճարտարապետությունը, արվեստը, մշակույթը եւ քաղաքաշինությունը:

Վստահ եմ, մեր համատեղ ջանքերով ստեղծված այս պատմական ակնարկը ծառայելու է իր նպատակին եւ երկար ճանապարհ է անցնելու՝ ուղեցույց լինելով թե՛ ներկա, թե՛ ապագա սերունդներին:

Արմինե Հովհաննիսյան
«Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ-ի նախագահ

Գրքի հեղինակային իրավունքները պատկանում են «Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ-ին (ԴՀԿ): Դիլիջանի համայնքային կենտրոնը 2014 թվականին հիմնադրել են բարերարներ Ռուբեն Վարդանյանը եւ Վերոնիկա Զոնաբենդը: ԴՀԿ-ի առաքելությունը գիտելիքահեն, մասնակցային, ներառական համայնքի ձևավորումն է՝ համայնքի ներուժը հզորացնելու եւ ցկյանս ուսումնառությունը խրախուսելու ուղիով:

DILIJAN COMMUNITY CENTER

Ruben Vardanyan FOUNDATION

Դիլիջանը 19-20-րդ դարերում

06 Ներածություն

10 **ԴԻԼԻՋԱՆ. 19-ՐԴ ԴԱՐ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿ**

13 Պատմական ուսումնասիրություններ
13 Անվան ծագումնաբանությունը եւ քաղաքի հիմնադրումը
14 Բնակչությունը
15 Ճարտարապետությունը
16 Տնտեսությունը
18 Կրթական-մշակութային կյանքը
18 Դիլիջանը՝ առողջարանային քաղաք

20 **ԴԻԼԻՋԱՆ. 20-ՐԴ ԴԱՐ**
Քաղաքաշինություն եւ ճարտարապետություն

22 Կենտրոն
24 Պապանինո
25 Գոլովինո
27 Շամախյան
29 Ջրհոողեր
30 Կաղնի խաչ
31 Թախտա
32 Անդրանիկի թաղամաս
33 Հայաստանի N1 տուբառողջարան
35 Դիլիջանի մանկական հակատուբերկուլոզային առողջարան
37 Աղասի Խանջյանի ամառանոց
39 Դիլիջանի տուրիստական հանգրվան
40 «Լեռնային Հայաստան» առողջարան
42 Շարամբեյանի անվան փողոց
44 Իջեւան-Հրազդան երկաթուղի՝ «Դիլիջան» կայարան
47 Սեւան-Դիլիջան ավտոճանապարհային թունել

48 Տնտեսություն

50 Ջրաղացներ
51 Սովխոզներ
52 Դեղատուն
55 Խանութներ
57 Հյուրանոց
59 Ճաշարաններ
61 Մեղվաբուծություն
61 Աղյուսի գործարան
62 Կահույքի գործարան
63 Հանքային ջրերի գործարան
65 Դիլիջանի ֆաբրիկա
67 Կաթի գործարան
68 «Իմպուլս» գործարան
70 Հաց-հրուշակեղենի գործարան

72 Մշակութային կյանք

74 Ռոտոնդա
77 Թատրոն
79 Փողային նվագախումբ
82 Կինոթատրոն «Շիրվանզադե»
83 Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահ
85 Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանի Դիլիջանի մասնաճյուղ
88 Կոմպոզիտորների ստեղծագործական եւ հանգստի տուն
91 Կինեմատոգրաֆիստների տուն
92 Մշակույթի պալատ
94 Ղազարյանների ընտանիք
95 Ոսկանյանների ընտանիք

96 Կրթական համակարգ

99 Դիլիջանի կենտրոնական գրադարան
101 Դիլիջանի N1 ավագ դպրոց
105 Դիլիջանի N2 հիմնական դպրոց
106 Դիլիջանի N3 դպրոց
107 Դիլիջանի N4 հիմնական դպրոց
107 Դիլիջանի N5 միջնակարգ դպրոց
108 Դիլիջանի N6 հիմնական դպրոց
109 Դիլիջանի արվեստի պետական քոլեջ
112 Նկարչական դպրոց
114 Մարզադպրոց
115 Դիլիջանի N19 գիշերօթիկ դպրոց
117 Բուժուսումնարան
118 Դիլիջանի ռադիոտեխնիկական տեխնիկում
120 Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետի Դիլիջանյան մասնաճյուղ

122 Տոներ, փառատոներ, համաքաղաքային խաղեր

124 Պիոներիայի երթ
124 Մայիսյան տոներ
126 Երգի տոն
128 Ծաղկի տոն
128 Քաղպաշտպանություն
130 Շախմատի մրցույթ
131 Խոտհավաք
132 Լոտոխաղարկություն
133 Դիլիջանյան ձմեռ
134 «Իմպուլս» ֆուտբոլային թիմ
135 Խորհրդային ղողանջներ
137 Ամփոփում

Ներածություն

«Դիլիջանի արխիվ» ծրագրի ղեկավար՝
Սոնա Բուդաղյան

Հետազոտողներ՝
Ալբերտ Սիմոնյան
Նունե Զաքարյան

Լեռնային խիտ անտառներով ու ալպյան մարգագետիններով շրջապատված Դիլիջան քաղաքն իրավամբ համարվում է Հայաստանի Հանրապետության այցեքարտերից մեկը։ Ծովի մակերեւույթից 1250-1510 մետր բարձրության վրա, հանրապետության հյուսիս-արեւելքում՝ Աղստեւ գետի հովտում սփռված Դիլիջանն աչքի է ընկնում անմրցելի չնաշխարհիկ բնությամբ, միջին եւ բարձրլեռնային կլիմայով, բարենպաստ թթվածնային ռեժիմի եւ բուժիչ հանքային ջրերի առկայությամբ, ինչի շնորհիվ էլ դարձել է հանրաճանաչ առողջավայր։

1996 թվականին իրականացված վարչատարածքային բաժանմամբ քաղաքը ներառվել է Տավուշի մարզի կազմում, իսկ 2016 թվականի համայնքների խոշորացման ծրագիրը գործի գցելուց հետո Դիլիջանին են միացել Հաղարծին, Թեղուտ, Հովք, Գոշ, Աղավնավանք եւ Խաչարձան գյուղերը։ Զբոսաշրջային հիմնական կենտրոններից մեկը լինելով՝ Դիլիջանը բարեկարգ ավտոճանապարհներով կապված է մայրաքաղաք Երեւանին (96 կմ), Վանաձորին ու Իջեւանին (35-40 կմ), իսկ 1986-ից՝ նաեւ հանրապետության երկաթուղային ցանցին (Դիլիջան-Երեւան հատվածը՝ 144 կմ)։

«Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ-ի «Դիլիջանի արխիվ» ծրագրի շրջանակում՝ 2021 թվականի սեպտեմբերից մինչեւ 2022 թվականի հունիս ընկած ժամանակահատվածում իրականացվել է Դիլիջան քաղաքի պատմության հետազոտություն, որի նպատակն է Դիլիջանի պատմամշակութային ժառանգությանը նոր շնչառություն հաղորդելը, պահպանելը եւ հետագա սերունդներին փոխանցելը։ Հավաքագրվել եւ ի մի են բերվել մի շարք՝ առնվազն 62 պատմական ակնարկներ, 19-20-րդ դարի Դիլիջանին առնչվող արխիվային լուսանկարներ, բացահայտվել են այնպիսի հիշարժան պատմական մանրամասներ, որոնք հնարավոր չէ գտնել տպագիր այլ աղբյուրներում։ Ուսումնասիրվել են Դիլիջանի քաղաքաշինությունը, ճարտարապետությունը, թաղամասերի, կրթամշակութային օջախների ու հաստատությունների հիմնումը, տնտեսությունը, փառատոներն ու համաքաղաքային խաղերը, անդրադարձ է կատարվել հայտնի երաժշտական ընտանիքների գործունեությանը եւ այլ կարեւոր իրադարձությունների ու պատմական դրվագների։

Ուսումնասիրության աղբյուրները հիմնականում Դիլիջանի պատմության վերաբերյալ մի շարք հեղինակների աշխատություններ են, իսկ լիակատար տեղեկատվության համար նաեւ հարցազրույցներ են անցկացվել Դիլիջանի 100 բնակչի հետ։ «Դիլիջանի արխիվ» ծրագրի տեղեկատվական պաշարի հարստացման առումով նրանց ներդրումը նույնպես անուրանալի է։

ԴԻԼԻՋԱՆ. 19-ՐԴ ԴԱՐ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿ

Պատմական ուսումնասիրություններ

Դիլիջան քաղաքը եւ նրա շրջակայքը հարուստ են մ.թ.ա. 1-ին հազարամյակից մինչեւ մ.թ.ա. 12-13-րդ դարերի վաղեմությամբ հնագիտական եւ պատմաճարտարապետական հուշարձաններով։ Քաղաքի պատմության ուսումնասիրման հիմնասյուները նրա մերձակայքում գտնվող հռչակավոր հնավայր Ռեդկինի լագերում դեռեւս 1850-ականներին կատարված պեղումների արդյունքում հայտնաբերված գտածոներն են եւ ավելի ուշ շրջանում քաղաքի տարբեր հատվածներից պեղված հնագիտական իրերը։ Հնավայրն անվանակոչվել է ի պատիվ ռուս ինժեներ Ի. Ռեդկինի. 1850 թ.-ին նա ղեկավարում էր Աղստեւի հովտում՝ Դիլիջան բնակավայրի տարածքում իրականացվող ճանապարհաշինարարական աշխատանքները։

19-րդ դարի 50-ականներին Ռեդկինի լագերի գտածոները մեծապես հետաքրքրել են ոչ միայն հայ, այլեւ ռուս ու եվրոպացի հնագետներին՝ Ֆ. Բայերնին, Ե. Շանդրին, Ժ. Մորգանին եւ այլոց։ Այսօր նշանավոր հնավայրի գտածոները ցուցադրվում են Էրմիտաժում, Մոսկվայի, Թբիլիսիի, Երեւանի պատմության թանգարաններում, մի մասն էլ՝ Դիլիջանի երկրագիտական թանգարանում։

Ցավոք, վաղ միջնադարում եւ հաջորդող մի քանի դարերում Դիլիջանի տարածքում բնակության մասին տեղեկություններ չեն պահպանվել, սակայն ճարտարապետական հոյակերտ վանական համալիրների՝ Հաղարծինի, Գոշավանքի եւ Ջուխտակ վանքի շրջակայքում հայտնաբերված գյուղատեղիները, գերեզմանոցները եւ կոթողները վկայում են, որ միջնադարում եւս Աղստեւի հովիտը բնակեցված է եղել։

Դիլիջան քաղաքի ներկայիս տարածքը մտնում էր Մեծ Հայքի Այրարատ նահանգի Վարաժնունիք գավառի մեջ (մ.թ.ա. 331 թ.-ից մինչեւ մ.թ. 428 թ.)։ Ենթադրվում է, որ պատմական Հովքը Արշակունի թագավորների օրոք (մ.թ. 66-428 թթ.) եղել է ամառանոց եւ արքայական որսատեղի։ Դիլիջանով է անցել հայտնի «Մետաքսի ճանապարհի» մի հատվածը։

Դիլիջանի անվան ծագումնաբանությունը եւ քաղաքի հիմնադրումը

Տեղանվան եւ հիմնադրման վերաբերյալ առաջին հիշատակումներին հանդիպում ենք Մ. Ստեփանյանի «Գեղարքունիքի ծովազարդ գավառ» գրքում, ըստ որի՝ 1544 թվականին Դիլիջան անունով իշխանը բնակություն է հաստատել այդտեղ եւ կամուրջ կառուցել։ Այս տեղեկության առաջին շրջանառողը քաղաքի պատմության հետազոտող Վանիկ Բեգլարյանն է։

Առավել ուշադրության է արժանի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի հիշատակումը. 1670-ականների սկզբին Թիֆլիսից Երեւան ուղեւորվելու ժամանակ, անցնելով Աղստեւի կիրճով, մի շարք տեղանունների շարքում Շարդենը թվարկում է նաեւ Դիլիջանի անունը։ Ըստ Շարդենի՝ Դիլիջանում այդ ժամանակ եղել է 300 տուն։

Քաղաքի անվան մասին մեկ այլ հիշատակություն նույնպես տարածված է տեղացիների շրջանում, համաձայն որի՝ Պուճուր Դիլի գյուղից Դիլիջան քաղաքի տարածք տեղափոխված վերաբնակիչները նոր գյուղն անվանել են Դիլիջան։ Մինչ օրս քաղաքի անտառային հատվածում պահպանվում են «Պուճուր Դիլի» գյուղատեղիի մնացորդները, իսկ արեւելյան կողմում դեռ կանգուն է մի քանի խաչքարով եւ տապանաքարով փոքր գերեզմանոցը։

Կան նաեւ բանահյուսական այլ վարկածներ, որոնք եւս մոռացության չեն մատնվել։
Միով բանիվ,, Դիլիջանի հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ, կան միայն բանավոր վկայություններ այն մասին, որ Դիլիջանի մի խումբ անվանի մարդիկ 1936 թվականին ցանկացել են նշել քաղաքի 100-ամյակը։

Բնակչությունը

Դիլիջանի վերաբերյալ տեղեկություններով համեմատաբար հարուստ են 19-րդ դարի առաջին քառորդի փաստագրական աղբյուրները։ Ըստ դրանց՝ 1825 թվականին քաղաքում ապրում էր 60 ընտանիք, իսկ Պողոսքիլիսայում՝ 44 (այժմ՝ Շամախյան թաղամաս)։

Դիլիջանը եւ հարեւան գյուղերը մեծ դեր են խաղացել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի շրջանում։ Տարածքն արդեն ռուսական տիրապետության տակ էր եւ կարեւոր ռազմավարական նշանակություն ուներ։ Դրա լավագույն վկայությունը գեներալ Մադաթովի նամակն է Ղազախի գավառապետ Օրբելյանին, որում նա խնդրում է ապահովել բնակչության անվտանգությունը, նաեւ կարեւորում է կիրճի պաշտպանության ռազմական նշանակությունը։ Բնակիչներն ակտիվորեն մասնակցել են կիրճի պաշտպանությանը, նաեւ գործուն աջակցություն են ցուցաբերել երեւանյան արշավանքի ժամանակ։

1848-1849 թթ. Ռուսաստանից գաղթած մոլոկանները հիմնադրում են Պապանինո եւ Գոլովինո գյուղերը։ Վկայակոչելով արխիվային փաստաթղթերը՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մխիթարյանն իր «Էջեր Դիլիջանի անցյալից» ուշագրավ հոդվածաշարում նշում է, որ 19-րդ դարի վերջին Դիլիջանում արդեն ապրում էր 107 ընտանիք՝ 895 շնչով։ Ոչ միայն Ա. Մխիթարյանը, այլ հեղինակներ նույնպես այն տեսակետի կողմնակից են եղել, որ Դիլիջանի այսօրվա բնակիչների մեծամասնության նախնիները տեղափոխվել եւ այդ տարածքում բնակություն են հաստատել 19-րդ դարի 30-ական թվականներից։ Խոշոր գերդաստանների մեծ մասը տեղափոխվել է Իջեւանի Սարիգյուղ եւ Սեւքար գյուղերից, մի մասն էլ Հրազդանի շրջանից, ոմանք էլ եկել ու հաստատվել են այդտեղ Մեծ Պարնի գյուղից եւ Նոյեմբերյանի տարածաշրջանի գյուղերից։

Սեւքարից եւ Սարիգյուղից տեղափոխված Գյուլզատյաններից ու Դավթյաններից բացի, Դիլիջանում բնակություն են հաստատել նաեւ Սահակյանները, Ուլիխանյանները (Ծիվնանք), Ամյանները (Գյոգոնք), Սաղաթելյանները, Վաթինյանները, Սարգսյանները (Հյուռնանք), Մանթաշյանները, Սանթրոսյանները, Մանուկյանները (Ջելոյանք), Երիցյանները (Պոշոլանք), Շահնազարյանները (Ղլդոշանք), Ալափարսից եւ Դդմաշենից տեղափոխվել են Գրիգորյանները (Դանելանք), Ալիխանյանները եւ Աղավելյանները, Պարնի գյուղից Փահլեւանյանները (Կոմբռոյանք), Կոթի գյուղից Մամյանները, Գաբրիելյանները, Հովհաննիսյանները (Բոյախնոնք)։ Իջեւանի շրջանի տարբեր գյուղերից Դիլիջան են տեղափոխվել Ոսկանյանները, Մեհրաբյանները, Անանյանները, Ղազարյանները, Սիմոնյանները, Աչաջրից՝ Խառատյանները (աղբյուրը՝ Մկրտիչ Գրիգորյան, «Դիլիջան», 1989 թ.)։

Ճարտարապետությունը

19-րդ դարի առաջին կեսին դիլիջանյան տներին բնորոշ էին մեկհարկանի պարզ լուծումները. կառույցների ներսում կային թոնիր ու մառան, իսկ պատուհանների բացակայությունը լրացնում էին ավանդական երդիկներից ներթափանցող լույսի շողերը։ Երբ դարավերջին տարածվեց Դիլիջանի բուժական, առողջարարական համբավը, փոխվեցին նաեւ տնաշինական ավանդույթները։ Անդրկովկասի մեծահարուստները՝ հատկապես Թիֆլիսի հայերը, սկսեցին այստեղ ամառանոցներ կառուցել իրենց հիմնական բնակավայրերի ոճով։ Այդ նոր ոճերը համադրելով դիլիջանյան ճարտարապետությանը, նաեւ գաղթած մոլոկաններից ընդօրինակելով որոշակի տարրեր, քաղաքում ստեղծվեց թարմ եւ յուրահատուկ ճարտարապետական ոճ, որն աստիճանաբար տարածվեց Աղստեւի ողջ հովտում։ Երկհարկանի այդ տներին բնորոշ էին կարմիր կղմինդրով երկթեք տանիքները, ընդարձակ նախշազարդ պատշգամբները եւ ճերմակ պատերը։

Նախնական շրջանում այդօրինակ տներ եւ ամառանոցներ կառուցվեցին Քարվանսարա-Երեւան-Ղարաքիլիսա խճուղու դիլիջանյան հատվածում։ Ավելի ուշ նման տներ կառուցվեցին նաեւ քաղաքի հիմնական՝ Էրեվանսկի փողոցի երկայնքով (այժմ՝ Մյասնիկյան փողոց), որը հատում էր գրեթե ողջ քաղաքը՝ արեւմուտքից արեւելք։

Այդպիսի գեղեցիկ տներ էին կառուցվել 26 կոմիսարների եւ Մանթաշյանի (Դավթյանների թաղամաս), Կալինինի (նախկինում՝ Պապանինո), Լերմոնտովի (Քյարամի քյուչա, այժմ՝ Շարամբեյանի) եւ այլ փողոցներում։ Ողջ գավառի մասշտաբով շքեղություն են համարվել Յարալովի տունը, Միխո Ճավճավաձեի, Մարիամ Թումանյանի, Սամսոն Բեկ Հարությունյանի, հույն Տրիգունովի, Մելիք Փարսադանյանի եւ այլոց ամառանոցները։ Խորհրդային տարիներին՝ հատկապես 60-ականներից հետո, քաղաքի կառուցապատմանը զուգընթաց, այդ շինությունների մի մասը քանդեցին, եւ ակներեւորեն վերափոխվեց քաղաքի տեսքը, բայց, ընդհանուր առմամբ, քաղաքը պահպանեց իր ճարտարապետական դիմագիծը։ Այժմ Դիլիջանում պետական պահպանության կարգավիճակ ունի 220 ժողովրդական տուն։

19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի Դիլիջանի ճարտարապետությունը հիանալի ներկայացված է 1983 թվականին կառուցված «Հին Դիլիջան» պատմամշակութային համալիրում (նախաձեռնության հեղինակ՝ Հովհաննես (Վանիկ) Շարամբեյան, ճարտարապետներ՝ Թելման Գեւորգյան, Հայկ Թելումյան)։ Հետագայում համալիրը վարձակալության տրվեց Ջեյմս Թուֆենկյանին պատկանող «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ընկերությանը, որն էլ իրականացրեց մեծ ծավալի հիմնանորոգման աշխատանքներ՝ 2008 թվականին լիովին ավարտելով պատմամշակութային փողոցի աշխատանքները։

◀ Խանութ Դիլիջանում, 1934-35թթ.

▶ Դիլիջանի ամառային («Լետնի») ճաշարանը

Տնտեսությունը

Դիլիջանի բնակչությունը, անասնապահությունից ու երկրագործությունից բացի, զբաղվում էր նաեւ արհեստագործությամբ ու առեւտրով, քաղաքում կային փոքր ձեռնարկություններ, արհեստանոցներ, խանութներ, ճաշարաններ։ Հիշատակվում է Մատինովի գինետունը, վանեցի վարպետներին պատկանող վիեննական աթոռների փոքր արհեստանոցները, Միխո Ճավճավաձեի հաց վաճառող դուքանը, նրա եղբայր Իլիկոյի եւ Իրանից ժամանած Գեւորգ Ինջիկյանի ճաշարանները, Տիգրան Մեհրաբյանի եւ Սուրեն Մարտիրոսյանի խանութները։

Քաղաքում գործում էր Հակոբ Քյոխվենց ջրաղացը։ Գոլովինոյում կար փայտամշակման արհեստանոց, որը պատկանում էր Ճավճավաձեին։ Արտադրական գործընթացին բնորոշ աղմուկի պատճառով այդ տարածքն ստացել էր «Խրտանոց» անվանումը, որն, ի դեպ, նշանավոր հնավայր է։ Քաղաքում գործում էին հացի փուռ, դարբնոց, սայլաշինական արհեստանոց, ընդ որում՝ սայլապանությամբ զբաղվում էին միայն մոլոկանները։ Հույն Տրիգունովին էր պատկանում մի փոքրիկ պղնձաձուլարան Գոլովինոյում, որն արդյունահում էր սեւ պղինձ։ Աշխույժ առեւտուր էր տիրում քաղաքային շուկայում, որը գտնվում էր ներկայիս քաղաքային ամֆիթատրոնի տեղում։ Այստեղ առեւտուր անող «պարսկական թաթ» ցեղի անվամբ տեղացիները տարածքն անվանում էին «Թաթերի յալ»։

1848 թվականին ստեղծվեց Դիլիջան-Քարվանսարա (այժմ՝ Իջեւան) ձիաքարշ տրանսպորտային հաղորդակցությունը։ 20-րդ դարասկզբին Կովկասի բազմաթիվ քաղաքներում ձիակառքերին աստիճանաբար սկսեցին փոխարինել շոգեքարշերը եւ ավտոմոբիլները։ Վկայակոչելով «Մշակ» թերթի 1912 թվականի մայիսի 5-ի համարում հրապարակված հոդվածը՝ քաղաքի պատմությունը հետազոտող Հենրիկ Խառատյանը նշում է, որ տրանսպորտային նոր միջոցով երթեւեկության կազմակերպումը իրականացրել են Դիլիջանի բնակիչներ Տիգրան Ասլանյանը եւ Վահին Մատինովը։ Ամեն օր մատչելի գներով երթուղիներ են գործել Աղստաֆա-Դիլիջան-Մեծ Ղարաքիլիսա, Դիլիջան-Սեւան ուղղություններով։

ԽՈԵՈՐԴՈՏՏ ՎԱՀԱՆ ՉԱՓՈՒՈՒՄ ՎԱՄՈՒ ԵՎ-ՕՀ ԻՑ ՄՈՒ ԵՎ-ԳԼ. ՂՐՑՎԱԿԻ

Կրթական-մշակութային կյանքը

19-րդ դարի երկրորդ կեսից մեծ առաջընթաց է ապրում քաղաքի կրթական-մշակութային կյանքը։ 1868 թվականին բացվում է առաջին դպրոցը, դարավերջին բացվում է նաեւ ռուսական դպրոց, իսկ Պողոսքիլիսայում՝ ծխական դպրոց։

Դիլիջանում գործում էին թատերախմբեր, իսկ դարավերջին կառուցվում է հռչակավոր Ռոտոնդան՝ Կովկասահայ մտավորականության հայտնի հավաքատեղին եւ մշակութային ակումբը, որը գործել է մինչեւ 1936 թվականը։ Դարավերջին Դիլիջանում կար նաեւ փողային նվագախումբ, իսկ 1908 թվականին բացվում է գրադարանը, որը հետագայում անվանակոչվել է Ղազարոս Աղայանի անվամբ։

Դիլիջան. առողջարանային քաղաք

19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին աստիճանաբար աճում էր քաղաքի առողջարանային համբավը։ Դիլիջանի առողջարարական գործոնների ուսումնասիրությամբ զբաղվել են ոչ միայն հայ, այլեւ ռուս եւ եվրոպացի շատ նշանավոր կուրորտոլոգներ։ Քաղաքի մասին ուսումնասիրություններ ունեն Վ. Ալեքսանդրովը, Ի. Ֆիգուրովսկին, Գ. Չուրսինը, Պ. Կորոստիլյովը, Վ. Դիկը, Ս. Սոկոլովը, Գ. Սաղյանը, Ա. Հակոբյանը, Ռ. Գյանջեցյանը եւ ուրիշներ։

Դիլիջանի հանքային ջուրը հետազոտել են ե՛ւ բազմաթիվ մասնագետներ, ե՛ւ մի շարք ինստիտուտներ։ Առաջին անգամ հանքային ջրի ակունքը 1907 եւ 1914 թվականներին ուսումնասիրել է Ի. Կուրցիսը, այնուհետեւ 1915 թվականին ջրի ակունքը հետազոտել է Մեշկովը։ Հանքային ջուրը պատկանում է նատրիում-հիդրոկարբոնատային դասին եւ համարվում է ֆրանսիական «Վիշի» եւ վրացական «Բորժոմի» ջրերի համատիպը։

Առաջին հիվանդանոցը՝ Լազարեթը, կառուցվել է 1888-89-ականներին եւ ունեցել է 3 բժիշկ։ Հանքային ջուրը Բլդանի ձորից տակառներով հասցվել է զինվորական հոսպիտալ, որտեղ գործածվել է որպես դեղամիջոց՝ «Դիլիժանկի» անունով, իսկ 1889 թ. նաեւ դեղատուն է հիմնվել։

Ինչպես Մկրտիչ Գրիգորյանն է վկայում իր «Դիլիջան» գրքում՝ Թիֆլիսում լույս տեսնող «Բուժական Կովկաս» ամսագիրը մեկ ամսվա ընթացքում՝ 1915 թվականի դեկտեմբերին, երկու հոդված է հրապարակել Դիլիջանի առողջարարական ռեսուրսների մասին։ 20-րդ դարի առաջին երկու տասնամյակում արդեն իսկ ստեղծվել էին որոշակի նախադրյալներ քաղաքի հետագա զարգացման եւ նրա առողջարանային համբավի առավել տարածման համար։

► Դիլիջանի թատերախումբը 1920-ականների սկզբին (երկրորդ շարքի կենտրոնում դերասանուհի եւ թատրոնի ղեկավար Հասմիկն է)

► Դիլիջանի Հասմիկի անվան ժողթատրոնի թատերախումբը «Օթելլո» ներկայացումից հետո

ԽՈԵՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱ ՂԱԶԱՐՅԱՆ ԿԱՄՈՒ ԵՎ ԿԱ ՄՈՒ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐ ԵՎ 19-ՐԴ. ՂՐԹԱԿԱՆ



ԴԻԼԻՋԱՆ. 20-ՐԴ ԴԱՐ

Քաղաքաշինություն եւ ճարտարապետություն

Կենտրոն

Հին Դիլիջանի կենտրոնը ձեւավորվել է Երեւանսկի (այժմ՝ Մյասնիկյան) փողոցի շուրջբոլորը։ Կենտրոնի հիմնական հատվածն ընդգրկել է ներկայիս հրապարակից մինչեւ Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահի տարածքը։ Այստեղ են կառուցվել որոշ գերդաստանների տներն ու բակերը, շուկան, փայտաշեն խանութների շարքը, արհեստանոցները, առեւտրի կետերը, վարսավիրանոցն ու բաղնիքը եւ այլ սպասարկման ծառայություններ, նաեւ՝ փոստ-հեռագրատունը, ճաշարանն ու գինետունը։ Կենտրոնում է եղել Սուրբ Աստվածածին եկեղեցին։ Անդրկովկասի մեծահարուստները նույնպես ձգտել են իրենց տներն ու ամառանոցները, նաեւ ժամանցի վայրերը կառուցել կենտրոնի մերձակայքում։ Օրինակ՝ ներկայիս ոստիկանության շենքի տեղում եղել է Թիֆլիս-Երեւան ճանապարհի ինժեներ Յարալովի տունը։ Կենտրոնական փողոցի վրա են գործել նաեւ երաժշտական եւ N1 դպրոցները, գրադարանը, նկարչական ստուդիան (գրադարանի շենքում)։

Մինչ օրս Մյասնիկյանի, Մանթաշյանի, Հակոբջանյանի անվան փողոցների վրա՝ քաղաքի փառահեղ պատմության վկաների պես, կանգնած են 19-րդ դարի վերջին տասնամյակներում եւ 20-րդ դարի սկզբին կառուցված յուրահատուկ դիլիջանյան ճարտարապետության մարգարիտները՝ Մատինովի աղբյուրը, ցարական դատարանի շենքը, նախկին արհեստանոցները, գինետունը, Դալլաքի տունը (վարսավիրանոց) կամ պարզապես անհատական տնաշինական նմուշներ։ Միայն կենտրոնում դրանք երեք տասնյակից ավելի են, բոլորն էլ ձեւափոխման ենթակա չեն եւ գտնվում են պետության հատուկ վերահսկողության տակ։ Կենտրոնում մինչ այժմ պահպանվել է նաեւ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կառուցված ներկայիս «Հազար ու մի մանրուք» խանութի բազմաբնակարան շենքը (ստալինկան), որը ժամանակին քաղաքային կոմիտեի շենքն էր։

Քաղաքը ներկայիս տեսքը ստացել է հիմնականում 1961 թ.-ի գլխավոր նախագծի իրականացման շնորհիվ։ 1970-ական թվականների ակտիվ շինարարության պայմաններում հրապարակի շուրջը ձեւավորվել է ներկայիս վարչական կենտրոնը։ Այդ տարիներին կառուցվել են քաղկոմի (այժմ՝ քաղաքապետարանի) նոր շենքը (ճարտարապետներ՝ Խ. Վաթինյան, Ս. Ավետիսյան), քաղխորհրդի վարչական շենքը (ճարտարապետներ՝ Ս. Գյուրզադյան, Կ. Մատինյան), հանրախանութը (ճարտարապետներ՝ Ջ. Սարգսյան, Լ. Գասպարյան), որոնց կառուցմանը զուգընթաց՝ բոլոր փայտաշեն խանութների շարքը տեղափոխվեց հանրախանութ, իսկ մի մասն էլ փոխարինվեց քարաշեն խանութներով, կապի բաժանմունքի շենքը (ճարտարապետ՝ Գ. Աչյան), մշակույթի պալատը (ճարտարապետներ՝ Խ. Վաթինյան, Ս. Ավետիսյան, Ռ. Գեւորգյան), քաղաքային գրադարանը (ճարտարապետ՝ Գ. Առաքելյան), կինոթատրոնը (ճարտարապետներ՝ Ա. Մակարյան, Լ. Ինջիկյան)։ 1981 թ.-ին տեղադրվեց նաեւ Լենինի արձանը (ճարտարապետներ՝ Ռ. Եղոյան, Ս. Ավետիսյան, Ե. Վարդանյան), որը հանվեց 90-ականների սկզբին՝ Հայաստանի անկախացումից հետո, եւ Մայիսյան ապստամբության զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողը։ Մյասնիկյանի կիսանդրին, որը տեղադրված էր ոստիկանության շենքի պուրակում, վերոնշյալ հայտնի իրադարձությունից հետո հանվեց եւ միայն 2019-ին կրկին տեղադրվեց, բայց այլ վայրում՝ իր իսկ անունը կրող գլխավոր փողոցի թանգարանին հարող հատվածում։

21-րդ դարի առաջին տասնամյակում կառուցվեցին թանգարանի նոր շենքը, ամֆիթատրոնը (ճարտարապետ՝ Նվեր Դանիելյան), նոր քանդակներով ձեւավորվեցին կենտրոնական հրապարակը, կենտրոնական հատվածի հենապատերը, մայթերը՝ կենդանակերպ քանդակների կիրառմամբ (ճարտարապետ՝ Նվեր Դանիելյան)։ Վերանորոգվեցին եւ ոճավորվեցին նաեւ քաղաքի կանգառները, Աղստեւի կամուրջները։ Լյուքսեմբուրգի Պետանժ քաղաքի հովանավորությամբ բարեկարգվեցին Ավագ դպրոցի շենքը եւ բակը։ Ներդրումային ծրագրերի աջակցությամբ դիլիջանյան ոճով ձեւավորվեցին նաեւ կենտրոնի բազմաբնակարան շենքերը։ Հակասողանքային խոշորամասշտաբ ծրագրի իրագործման շնորհիվ 2009-2013 թվականներին քաղաքի ողջ կենտրոնական հատվածում ստեղծվեց դրենաժային հուսալի համակարգ, մաքրվեցին եւ բետոնապատվեցին նախկին ստորգետնյա թունելախորշերը՝ ստեղծելով հուսալի սեյսմակայունություն։

▶ Քյարամի քյուչա՝ ներկայիս Շարամբեյանի անվան փողոց («Հին Դիլիջան» պատմամշակութային համալիր)

▶ Դիլիջանի կապի բաժանմունքի նախկին շենքը

Պապանինո

Պապանինոն Դիլիջանի պատմական թաղամասերից է, որը 1848-1849 թվականներին հիմնադրել են Ուղղափառ եկեղեցուց հեռացված եւ Նիկոլայ 1-ինի հրամանով հայրենիքից արտաքսված ռուս մոլոկանները: Պապանինոն սկզբնական շրջանում կոչվում էր Մոլոկանսկոյե Սելո (մոլոկանների գյուղ), իսկ ավելի ուշ՝ Սլոբոդկա, եւ ընդգրկված էր Ելիզավետպոլի գուբերնիայի Ղազախի նահանգի կազմում՝ որպես առանձին գյուղ:

Սլոբոդկան (թարգմանաբար նշանակում է քաղաքին հարող ոչ մեծ բնակավայր) 20-րդ դարի սկզբին վերանվանվել է Նոր Դիլիջան (հանդիպում է նաեւ Դելիժան տարբերակը), իսկ 1938 թվականին անվանափոխվել է Պապանինո՝ ԽՍՀՄ կրկնակի հերոս, հեղափոխական, բեւեռախույզ, գիտնական Իվան Պապանինի անունով:

Գնահատելով Աղստեւի հովտի այս հատվածի առավելությունները՝ տեղանքի հարաբերական հարթ դիրքը, արեւառատ ցածրադիր մշակելի հողատարածքների առկայությունը, մոլոկաններն այստեղ հաստատվել եւ ժամանակի պահանջներին համապատասխան նկատելիորեն զարգացրել են բնակավայրը: Ըստ արխիվային վկայությունների՝ այս թաղամասը 1873 թվականին ուներ 269 բնակիչ, 1939 թվականին՝ 1328: Աշխատասեր մոլոկաններն այստեղ ստեղծել են իրենց կարիքները բավարարող սպասարկման ծառայություններ՝ արհեստանոցներ, սղոցարան, ջրաղացներ եւ այլն: 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին Աղստաֆա կայարանից Դիլիջան եւ Դիլիջանից Ղարաքիլիսա կամ Երեւան բեռնափոխադրումներն ու ուղեւորների երթեւեկությունը մեծ մասամբ հենց մոլոկաններն են սպասարկել: Հետագայում թաղամասի հիմնական փողոցը Իջեւան (Քարվանսարա)-Ղարաքիլիսա հատվածում կոչվեց Միխայիլ Կալինինի անունով:

Տարածված լինելով երթեւեկելի ճանապարհի ողջ երկայնությամբ՝ այս թաղամասի բնակիչները վկաներն են բոլոր տրանսպորտային միջոցների առաջընթացի՝ սկսած սայլերից, քառատեղ կառքերից, վերջացրած առաջին ավտոմեքենայի եւ հանրային տրանսպորտի ներմուծմամբ:

1958 թվականին, երբ Դիլիջանին տրվեց հանրապետական ենթակայության քաղաքի կարգավիճակ, Պապանինո գյուղը միացավ Հին Դիլիջանին: 1960-ականներից բուռն քաղաքաշինական գործընթացի ժամանակ խնդիր էր դրված պահպանելու թաղամասի ճարտարապետական դիմագիծը: Եվ այդ շրջանում Գետափնյա փողոցի վրա թափ առան ծավալուն բնակարանաշինական ծրագրերը:

Պապանինո թաղամասի հիմնական կառուցապատումն իրականացվել է փուլերով. սկզբում գետը պարսպապատվել է, որից հետո սահմանազատված գոտիներում ընթացել են մեծ ծավալի շինարարական աշխատանքներ: Ըստ քաղաքի գլխավոր հատակագծի՝ Աղստեւ գետի ձախ ափը վերածվել է խոշոր բնակելի զանգվածի. կառուցապատվել են Կալինինի եւ Գետափնյա փողոցները՝ հինգ կամ ինըհարկանի բազմահարկ բնակելի կոմունալ շենքերով (1960-ականներից մինչեւ 90-ականներն ընկած ժամանակաշրջանում Դիլիջանի 100-ից ավելի բազմաբնակարան շենքերի գերակշռող մասը կառուցել է տարածաշրջանային նշանակության N12 շինտրեստի N50 շինվարչությունը), իսկ գետի աջ ափը վերափոխվել է հանգստյան գոտու, որտեղ նույնպես, 1960-ականներից ի վեր, սկսվեցին կառուցապատման ակտիվ աշխատանքներ:

Պապանինո թաղամասում դեռեւս 1940-ականներից գործում էր յոթնամյա հայկական դպրոց, իսկ 1947 թվականին շահագործման հանձնվեց ռուսական դպրոցի հիմնական տիպային շենքը: Թաղամասում ակտիվորեն գործել է նաեւ N2 կուլտուրայի տունը, իսկ ահա 1965-ին բացվեցին մարզադպրոցը եւ քաղաքային մարզադաշտը: 1970 թվականին այստեղ տեղափոխվեց Բաբաեւի անվան երաժշտական դպրոցը: 1960-70-ականներին բացվեցին նաեւ խանութներ, ունիվերսամ, փոստի բաժանմունք, մանկապարտեզ, առողջարան, կինոթատրոն:

Աղստեւի հոսքի ուղղությամբ փռված անտառածածկ լանջին 1963 թվականին կառուցվեց տուրիստական հանգրվանի նոր շենք, 1965-ին՝ մանկապատանեկան մարզադպրոց, որից մի քանի տարի հետո շահագործման հանձնվեց նոր տիպային մարզադաշտը՝ շուրջ 3000 նստատեղով. ի դեպ, ժամանակին հանրապետության լավագույն մարզադաշտերից էր: 1980-ականներին կառուցվեց նաեւ մարզադաշտի վարչական շենքը, 1972 թվականի մայիսի 1-ին բացվեց քաղաքային զբոսայգին, նույն թվականին շահագործման հանձնվեց «Դիլիջան» առողջարանային համալիրը (այժմ՝ Դիլիջան Ռեզորթ & ՍՊԱ) եւ այլ կառույցներ: Ակտիվ շինարարական աշխատանքների շնորհիվ քաղաքը բազմիցս արժանացել է խրախուսական պարգեւների:

Նախկին տուրիստական հանգրվանի՝ Տուրբազայի տարածքում 2012-2014 թվականներին կառուցվեց Դիլիջանի միջազգային դպրոցի խոշոր համալիրը, որի հիմնադիրն է հայտնի գործարար, բարեգործ Ռուբեն Վարդանյանը:



Գոլովինո թաղամասը, 1930-ականներ

Գոլովինո

Գոլովինո (Գոլովինկա, Գոլովինովկա) գյուղը հիմնադրել են 1848-1849 թվականներին ցարական Ռուսաստանի իշխանությունների հրամանով Տամբովի նահանգից արտաքսված բողոքական մոլոկանները։ Թերեւս, ռուսական ցարը հեռահար նպատակ էր հետապնդում իրեն ենթակա Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի հարավային ուղղությամբ տեղակայել կազակների զորագունդ եւ քրիստոնյաներով բնակեցնել այդ տարածքները։ «Գոլովինո» անվանումն էլ ծագել է գեներալ Եվգենի Գոլովինի անունից, որը 1837-42 թվականներին նշանակվել էր Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար, նաեւ՝ Վրաստանում, Հայաստանում ու Կովկասի տարածաշրջանում քաղաքացիական եւ սահմանամերձ շրջանների վարչության գլխավոր հրամանատար։

Տարիներ շարունակ Հովաջուր գետակի (վերջինս նույնպես վերանվանվել էր Գոլովինի անունով) հովտում բնակություն հաստատած

մոլոկանները զբաղվել
են անասնապահությամբ
ու երկրագործությամբ։ Արհեստներից
տարածված էր փայտի ու երկաթի մշակումը։
Տարածքի հանդեպ հանրային ուշադրությունն
աճեց 1869 թվականից՝ Թիֆլիս-Երեւան
միջանցիկ ճանապարհի կառուցմանը
զուգընթաց։ Արդյունքում Գոլովինոն դարձավ
նահանգի (այժմ՝ Տավուշի մարզի) հարավային
դարպասը։ Թաղամասի գլխավոր՝ Կամոյի
փողոցը միջպետական ճանապարհի
մի հատվածն է։

19-րդ դարի վերջին այստեղ բնակվել
է 139 մարդ։ 20-րդ դարի սկզբին Օսմանյան
Թուրքիայի սանձազերծած կրոնական
հալածանքների հետեւանքով բնակավայրում
հաստատվեցին նաեւ Արեւմտյան Հայաստանից
գաղթած քրդեր՝ իրենց ընտանիքներով, ավելի
ուշ՝ նաեւ Սեւանի ավազանից մի քանի
տասնյակ հայկական ընտանիքներ, որոնք
նույնպես արմատներով Արեւմտյան
Հայաստանից էին։ 1939 թվականին Գոլովինոյի
բնակչության թիվն աճել է՝ հասնելով 350-ի։
Բնակչության կազմով բազմազգ այս թաղամասի
ուրույն պատկերն ավելի է հարստացել,
երբ 1946 թվականից սկիզբ առած
զանգվածային հայրենադարձության
ընթացքում՝ մասնավորապես Լիբանանից
եւ այլ երկրներից ներգաղթած
հայրենադարձներին տնաշինության
նպատակով տրամադրվեցին հողեր ու վարկեր։
Արդյունքում Մաքսիմ Գորկու փողոցից դեպի
Գոլովինո ձգվող հատվածում ծնվեց մասնավոր
տներով նոր թաղամաս, որը ոչ պաշտոնապես,
տեղացիներն անվանակոչեցին «Ախպարաշեն»։
Հայրենադարձների շրջանում կային շնորհալի
արհեստավորներ եւ փորձառու վարպետներ,
որոնք անմիջապես ներգրավվեցին Դիլիջանի
նորաստեղծ արդյունաբերական
ձեռնարկություններում՝ իրենց ներդրումն
ունենալով քաղաքի զարգացման գործում։
Հետպատերազմյան տարիներին
թաղամասում գործել են խանութներ,
ռուսական դպրոց, մանկապարտեզ, մշակույթի
ակումբ, գրադարանի մասնաճյուղ։
1958 թվականից Գոլովինոն դարձավ Դիլիջանի
թաղամասերից մեկը։ Շուտով Դիլիջանը
հայտարարվեց հանրապետական
ենթակայության առողջարանային քաղաք եւ,
ըստ 1961 թվականին մշակված Դիլիջանի
գլխավոր հատակագծի՝ թաղամասը գծագրվեց
որպես հանգստի եւ առողջարանային գոտի։
Թափ առած շինարարության արդյունքում
շատ շուտով Գոլովինկա գետի աջակողմյան
սարալանջին կառուցվեց եւ 1961 թվականին
շահագործման հանձնվեց տուբերկուլոզով
հիվանդների հետ շփված երեխաների
ապաքինման եւ կրթության համար
նախատեսված գիշերօթիկ հաստատությունը,
1963 թվականին՝ Կոմպոզիտորների
հանգստյան եւ ստեղծագործական տունը,
1970-ականներին՝ «Լեռնային Հայաստան»
առողջարանը, «Հաղարծին» ռեստորանը,
Երեւանի գինու գործարանի հանգստյան
տունը (այժմ՝ Best Western Plus Paradise Hotel
Dilijan), «Հայպետնախագիծ» ինստիտուտի
հանգստյան տունը եւ բազմաթիվ վարչական
փոքր տներ եւ պանսիոնատներ։ 1960-
70 թվականներին կառուցվեցին N6
միջնակարգ դպրոցը (1976), մանկապարտեզը,
փոստի բաժանմունքը, խանութներ։ Այստեղ
է գործել ԴՕՍԱԱՖ-ը, նաեւ քաղաքի
կենտրոնից տեղափոխվել են տպարանն
ու դատարանը։

Բարդ ռելիեֆի պատճառով թաղամասում
կառուցվեց ընդամենը 2 բնակելի բազմահարկ
շենք, եւ բնակարանով ապահովվեց
54 ընտանիք։

Թաղամասի տարբեր հատվածներում
(Խրթանոց, Ցերկով թալա, Ռուսկի բալկա
եւ այլն) պեղումներ են կատարվել,
եւ հայտնաբերվել են բրոնզեդարյա
գտածոներ, դամբարանադաշտեր։ Տարածքը
հարուստ է նաեւ հնագիտական արժեք
ներկայացնող ավերված բնակատեղիներով,
7-17 դարերի մատուռներով ու
գյուղատեղիներով։

Շամախյան

Շամախյան բնակավայրի պատմական անվանումը Պողոսքիլիսա է, քանի որ գյուղամիջում գործել է 17-18 դարերում կառուցված Սուրբ Պողոս եկեղեցին։ Սկզբնական շրջանում եկեղեցին հիշատակվել է նաեւ Սուրբ Աստվածածին անվամբ։ Ի տարբերություն Հին Դիլիջանի կենտրոնում գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցու՝ մոլեռանդ աթեիզմի շրջանում Սուրբ Պողոս եկեղեցին չի քանդվել, բայց ժամանակի ընթացքում անուշադրության մատնվելու հետեւանքով եկեղեցին այսօր անմխիթար վիճակում է։

Պողոսքիլիսան ծննդավայրն է բազմաթիվ անվանի մարդկանց. մեծանուն գրող Վախթանգ Անանյանի, գիտնական, սոցիալիստական աշխատանքի հերոս Անահիտ Անանյանի, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Աղասի Եսայանի, Հայաստանի ազգային հերոս Ռուբեն Սանամյանի եւ շատ ուրիշների։

Պեղումների ընթացքում այս վայրում հայտնաբերվել են բազմաթիվ կիսավեր մատուռներ, խաչքարեր, ձիթհան, գերեզմանոց, գյուղատեղի եւ այլն։

Պողոսքիլիսա գյուղի մասին առաջին վկայություններից է Հասան-Ջալալյանի «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» գրքում առկա նկարագիրը (Մասն Ա, Տփխիս, 1842)։ Ըստ Հենրիկ Խառատյանի՝ երկրորդ պահպանված հանրաճանաչ աղբյուրը Մակար Բարխուտարյանի «Արցախ» գիրքն է (Բաքու, 1895), որտեղ նույնպես գյուղի մասին համառոտ նկարագրություն կա, ըստ որի՝ Հասան խանի օրոք (1795-1796 թթ.) Պողոսքիլիսայում բնակություն են հաստատել Երեւանից եւ Արզնիի Գյամրիզ գյուղից տեղափոխվածները։

1887 թվականի օգոստոսի «Նոր դար» հայկական թերթի 141-րդ համարում նշվում է Ղազախի գավառի գյուղերի բնակչության թիվը, որտեղից տեղեկանում ենք, որ Պողոսքիլիսայում այդ շրջանում եղել է 53 տուն, բնակչությունը՝ հայեր։ Հիշատակվում է նաեւ, որ նույն շրջանում Գոլովինո գյուղում եղել է 13 տուն, Դիլիջանում՝ 72։ 1890 թվականին Պողոսքիլիսայում բացվել է առաջին դպրոցը, եւ Կաթողիկոսի կոնդակով (կաթողիկոսական պաշտոնական գրություն) ծխական դպրոցի հոգաբարձու եւ ուսուցիչ է հաստատվել եկեղեցու քահանա Կարապետ Թումանյանը։ Նա կատարել է թե՛ կրթական, թե՛ հոգեւոր աշխատանք։ Խորհրդային շրջանում գյուղը վերանվանվել է Շամախյան՝ կրելով նախկին ուսուցիչ, այնուհետեւ հեղափոխական գործիչ, Դիլիջանի առաջին գավկոմի նախագահ Եղիշե Շամախյանի անունը։

1958 թվականին Հին Դիլիջանի մերձակա երեք գյուղերը միացան, եւ Շամախյանը դարձավ քաղաքի թաղամասերից մեկը։ Խորհրդային առաջին տարիներին այստեղ ստեղծվեց կոլտնտեսություն, որի բազայի հիման վրա կազմավորվեց Լենինի անվան սովխոզը. սա համարվել է քաղաքի խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններից մեկը։ Խորհրդային շրջանում գյուղում գործում էին սկզբում ութամյա, ապա՝ միջնակարգ դպրոցը (հետագայում՝ Վախթանգ Անանյանի անվան), մշակութային ակումբը, N3 մանկապարտեզը։ Աստիճանաբար այստեղ տեղափոխվեցին քաղաքի սպասարկման կարեւոր նոր ծառայությունները՝ հրշեջ ծառայությունը, սանիտարական-հակահամաճարակային կայանը, կառուցվեց հացի գործարանի նոր շենքը, որն այժմ չի գործում։

1988 թվականի դեկտեմբերյան ավերիչ երկրաշարժի ժամանակ, երբ ողջ աշխարհը, նաեւ ԽՍՀՄ հանրապետությունները օգնություն էին ցուցաբերում Հայաստանին, այս թաղամասում լայնամասշտաբ շինարարություն ծավալեցին Մոլդովական ԽՍՀ-ից ժամանած շինարարական կազմակերպությունները։ Այդ ժամանակահատվածում ոչ միայն ամրացվեցին թաղամասի բազմաբնակարան շենքերը, այլ նաեւ սեյսմակայուն պահանջներին համապատասխան կառուցվեցին նոր շենքեր։ Բնակելի նոր զանգվածը մինչ այժմ անվանում են Մոլդովական թաղամաս, հարակից փողոցն էլ կոչվում է Մոլդովական։

2000-ականների առաջին տասնամյակում Դիլիջանը ֆինանսական կենտրոն դարձնելու նպատակով թաղամասում կառավարությունը նախաձեռնեց շինարարական մեծամասշտաբ ծրագիր։ Աշխատանքն իրականացնում էր «Ռենկո Արմէստեյտ» իտալական ընկերությունը, եւ կարճ ժամանակում կառուցվեց շուրջ 200 երկհարկանի քոթեջ։ 2000-ականների երկրորդ տասնամյակում Կենտրոնական բանկի աշխատակիցների համար կառուցվեցին նաեւ բազմաբնակարան շենքեր։ 2013 թվականին «Այբ» կրթական հիմնադրամը ՀՀ կենտրոնական բանկի հետ համագործակցությամբ, այս թաղամասում բացեց Դիլիջանի կենտրոնական դպրոցը։

ՊԱՐԿԱՅԻՆ. 20-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԵՎ ԳՈՒՄԱՐԱԿԱՆ ՀՈՒՆ ԿՀ-02

▲ Զրհողեր եւ Կաղնի խաչ թաղամասերի համայնապատկեր

◀ Դիլիջանի N4 միջնակարգ դպրոցի շենքը, 1970-ականներ

Զրհողեր

Զրհողերը Դիլիջան քաղաքի խոշոր թաղամասերից է։ Անունը ստուգաբանվում է այսպես. թաղամասի տարածքում խորհրդային տարիներին եղել են կոլտնտեսային մեծ այգիներ, որոնք ոռոգվել են որոշակի ռեժիմով։ Այստեղից էլ ծագել է Զրովի հողեր կամ Զրհողեր տեղանունը։

Մինչեւ 1960-ական թվականները Զրհողերով է անցել միջպետական ճանապարհի մի հատվածը։ Դիլիջանի միակ ավտոձեռնարկությունը հենց այդտեղ էր գտնվում՝ ներկայիս Դիլիջանի N4 դպրոցի տեղում, իսկ ավտոկայարանը տեղակայված էր քաղաքի կենտրոնում՝ ներկայիս Ավագ դպրոցի դիմացի տարածքում։

Թաղամասի կառուցապատումը հիմնականում իրականացվել է ըստ քաղաքի 1961 թվականի գլխավոր հատակագծի։ Զրհողերի կենտրոնական փողոցը կոչվել է հեղափոխական Ստեփան Շահումյանի անվամբ։ Մյուս փողոցները նույնպես կրում են հեղափոխականների՝ Գայի (Հայկ Բժշկյանցի) եւ դիլիջանցի Վաչե Հովսեփյանի անունները։

Շահումյանի եւ Գայի փողոցների ողջ երկայնքով շարված են չորս ու հինգհարկանի բազմաբնակարան շենքեր՝ «խրուշչովկաներ»։ Դրանք զանգվածային շինարարության առաջին սերնդի տիպային շենքերն էին՝ փոքր բնակարաններով եւ ցածր առաստաղներով։ Սենյակներն ու միջանցքները նույնպես փոքր էին, բայց յուրաքանչյուր բնակարան ապահովված էր սանհանգույցով, խոհանոցով։ Չնայած որոշակի անհարմարություններին, դրանք կոչված էին բարելավելու բնակչության կյանքի որակը, եւ հազարավոր ընտանիքներ բնակարանի տեր դարձան։ Այդ կարգի շենքերի շինարարությունը նաեւ լրացուցիչ խթանեց Դիլիջան քաղաքի ուրբանիզացմանը։

Ի վերջո, 70-ականներին Դիլիջանում կառուցվեց լիովին նոր թաղամաս՝ իր խանութներով, հանրախանութով, փոստի բաժանմունքով, դեղատնով, դպրոցով ու մանկապարտեզով, «Եղնիկ» սրճարանով, «Մանուշակ» կինոթատրոնով։ Արտադրական ձեռնարկություններից այստեղ էին գտնվում քաղաքի արդյունաբերության առաջատարը՝ «Իմպուլս» գործարանը, կաթի գործարանն ու սպանդանոցը։ Թաղամասին յուրահատուկ հմայք է հաղորդում եղեւնիների ծառուղին, որը վերջերս թարմացվեց սամշիտի նորատունկ թարմ թփերով։

Կաղնի Խաչ

Ասում են՝ թաղամասը կոչվել է Կաղնի Խաչ, որովհետեւ այստեղ կաղնու ծառերից մեկի տակ խաչքար է եղել։ Քաղաքի հյուսիս-արեւելյան հատվածում գտնվող նախկինում ամայի այս վայրը 1961 թվականի գլխավոր հատակագծի շահագործման արդյունքում դարձավ Դիլիջանի նորակառույց, հարմարավետ թաղամաս, իսկ 1970-ականներին կամրջի շնորհիվ միացավ քաղաքին։ Այս թաղամասի հիմնական երթուղիները Գայի եւ Հովսեփյանի փողոցներն են, հենց այստեղ էլ կառուցվել են չորս եւ հինգհարկանի սեյսմակայուն շենքերը։

1974 թվականին «Դիլիջան» թերթն իր փետրվարյան համարում գրել է, որ Կաղնի Խաչ թաղամասում արդեն իսկ շահագործման է հանձնվել երկու քառահարկ բազմաբնակարան շենք, եւ բնակարանի տեր է դարձել 38 ընտանիք։ Դրանից հետո կառուցապատումը շարունակվել է, եւ բնակելի շենքերի թիվը հասել է 10-ի։

Թաղամասի առաջին շենքերը նորառոճ, կասկադային կառուցվածք ունեին։ Յուրաքանչյուր հարկ ընդհանուր միջանցքով միացած էր կողքի շենքին, որը հարթակի ու աստիճանների միջոցով ապահովում էր բնակիչների ազատ տեղաշարժը եւ միաժամանակ նպաստում ջերմության պահպանմանը։ Այդպիսով, շենքերն ունեին տարբեր, բայց միաժամանակ ընդհանուր մուտքեր, ինչը բարելավում ու ապահովում էր նաեւ երկրաշարժի ժամանակ ինքնապաշտպանության հնարավորությունը եւ շենքից դուրս գալու արագությունը։

1988 թվականի մայիս ամսից թաղամասում սկիզբը դրվեց հակասողանքային միջոցառումների՝ ըստ Հայաստանի պետական նախագծի։ Սեյսմակայունության բարելավման նպատակով կառուցվեց թունելախորշ, որի շնորհիվ նույն թվականի դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժի ընթացքում շենքերը նկատելի դիմադրողականություն ցուցաբերեցին։

Բնակելի շենքերի հետ մեկտեղ, թաղամասում հաջորդաբար ստեղծվեցին սպասարկող ենթակառույցներ՝ կաթսայատուն, խանութներ, հարսանյաց սրահ։ Կառուցվեց ներկայիս N2 մանկապարտեզը, որը դրական համբավ ունի հանրապետության նախադպրոցական համակարգում։ Թաղամասի ջրամատակարարումը կարգավորելու նպատակով, բացի հիմնական ջրագծից, կառուցվեց նաեւ օրվա կարգավորիչ ջրամբար։ Քանի որ այս թաղամասի փողոցները բնական լանդշաֆտով պայմանավորված նկատելիորեն թեք են, ինչը բարդացնում է դրանց շահագործումը, թաղամասի խիտ կառուցապատումն անհնար էր։
Դա է պատճառը, որ այդտեղ որոշ հանրային ծառայություններ բացակայում են։

Թաղամասի ներքին հատվածում ձյունառատ տարիներին մշտապես կազմակերպվել են համաքաղաքային մարզական տոնախմբություններ, օրինակ՝ «Դիլիջանյան ձմեռ» մարզատոնը։ Թաղամասին հարող հատվածում ամռանը գործել է «Զանգակ» ճամբարը։ Կաղնի Խաչի վերին հատվածում է գտնվում Պուճուր Դիլի պատմամշակութային գոտին, որը հայտնի է իր բնական հանքային աղբյուրով, 7-17-րդ դարերից մեզ հասած ավերված գյուղատեղիով, բազմաթիվ խաչքարերով։



Դիլիջանի մանկական հակատուբերկուլյոզային առողջարանի
նոր շենքը, 1989 թ.

Թախտա

Թախտա թաղամասն իր անվանումը ստացել է երկրաբանական գործընթացների հետեւանքով հարթ (թախտի նմանվող) լինելու պատճառով։ Ինչպես ժողովուրդն է ասում՝ կարծես սարն իջել է եւ ներքեւում հարթվել։ Իր բացառիկ դիրքի շնորհիվ թաղամասից կարելի է տեսնել Աղստեւի հովտում սփռված Դիլիջան քաղաքի սքանչելի համայնապատկերը։

Այս թաղամասի կառուցապատման հիմնական աշխատանքները սկզբնավորվել են քաղաքի 1961 թվականի գլխավոր հատակագծի իրագործմանը զուգընթաց։ Թաղամասը կառուցվել է հստակ նախագծով եւ ներառում է միմյանց զուգահեռ հինգ նրբանցք, որոնք հատում են Օրջոնիկիձեի փողոցը։

1960-ականների վերջին տարիներից ի վեր՝ մասնավոր տներ կառուցելու նպատակով բնակիչներին հատկացվել է 600-ական քառակուսի մետր հողակտորներ, ինչի շնորհիվ բնակեցվել է թաղամասի մեծ մասը։ 1970-80-ականներին Թախտայում կառուցվեցին տասից ավելի երեք, չորս եւ հինգհարկանի բազմաբնակարան շենքեր՝ 208 ընտանիքների համար, դրանց թվում՝ նաեւ երկու շենք Դիլիջան-Սեւան թունելի աշխատակիցների համար։ Այս ամենից զատ, երկաթգծի կառուցման տարիներին շինարարական կազմակերպություններն աշխատողների համար թաղամասում տեղադրել են ֆիննական տնակներ։

Թաղամասն իր տեղանքով հետաքրքրել է Երեւանի, նաեւ հանրապետության տարբեր շրջանների բնակիչներին։ Կարճ ժամանակում կառուցվել են բազմաթիվ առանձնատներ՝ թաղամասը

դարձնելով ամենագրավիչ հանգստյան գոտիներից մեկը։ Մինչ այժմ, օրինակ՝ 4-րդ նրբանցքը համարվում է ամառանոցային, որին բնակիչները տվել են «дачный тупик» (ամառանոցային նրբանցք) անվանումը։ 2000-ականների սկզբից թաղամասում կրկին թափ է առել հյուրատների, հանգստյան գոտիների եւ հյուրանոցների կառուցումը։

Խորհրդային տարիներին թաղամասում կառուցվել եւ երկար ժամանակ գործել են հանրապետական նշանակության մանկական առողջարան, գեղարվեստական կոմբինատ, մանկապարտեզ, գրադարանի մասնաճյուղ, մթերային խանութ։ Թախտա թաղամասում է գործել նաեւ քաղաքի պրոֆտեխուսումնարանը։ Արհեստագործական ոլորտի տարբեր մասնագետներ պատրաստելու նպատակով ստեղծված այդ հաստատությունում ներգրավված էին քաղաքի ճանաչված վարպետներ։ Մեծ թվով ուսանողներ էին գալիս հանրապետության այլ մարզերից ու արտերկրից։ Հետագայում պրոֆտեխուսումնարանը տեղափոխվեց ռադիոտեխնիկումի շենք՝ դառնալով դրա բաժիններից մեկը։

Այժմ այստեղ են տեղակայված «Հ. եւ Տ. Հակոբյաններ» ՍՊԸ-ի դիլիջանյան գրասենյակն ու գարեջրի գործարանը։

Գերմանիայի Բավարիա մարզի իշխանության հովանավորությամբ 2018 թվականին կառուցվեց զբոսաշրջային քայլարշավային երթուղի, որը ձգվում է Թախտա թաղամասին հարող անտառից մինչեւ Պուճուր Դիլի սրբավայր։ Բարեկարգվեցին նաեւ Թթու Ջուր հանքային աղբյուրի ակունքն ու շրջակա տարածքը։

Անդրանիկի թաղամաս

Անդրանիկի թաղամասը Դիլիջանի ամենաերիտասարդ թաղամասերից է։ Գտնվում է հեռուստաաշտարակի դիմացի գեղատեսիլ լանջին, որտեղից փառահեղ տեսարան է բացվում դեպի անտառածածկ սարալանջերը։ Ըստ երկրագիտական ուսումնասիրությունների արդյունքների՝ այդ տեղանքը սողանքային չէ եւ սեյսմակայուն գոտի է համարվում։

Թաղամասի պատմությունը սկիզբ է առնում 1989 թվականից. 1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետեւանքով վթարային շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու, նաեւ քաղաքի բնակելի մակերեսն ընդլայնելու նպատակով հեռուստաաշտարակի դիմացի լանջին քաղաքի բնակիչներին կառավարությունը տրամադրեց հողամասեր՝ սեփական տներ կառուցելու համար։

Կարճ ժամանակ անց գեղատեսիլ այդ անկյունում կառուցվեցին հարյուրից ավելի ժամանակակից տներ, իսկ 2000-ականների առաջին տասնամյակում ասֆալտապատվեցին փողոցներն ու նրբանցքները, ստեղծվեցին համապատասխան ենթակառույցներ՝ ջրագիծ, կոյուղագիծ, գազաֆիկացում եւ այլն։ Անդրանիկի թաղամասը ներառում է երեք փողոց՝ Անդրանիկի, Տիգրան Պետրոսյանի եւ Արցախի։

Այժմ թաղամասը հագեցած է հանգստի գոտիներով, ժամանցային վայրերով՝ ռեստորաններով, սրճարաններով։ Մոտակա անտառը թաղամասի բնակիչների հանգստի եւ զբոսանքի սիրելի վայրն է։

Հայաստանի N1 հակատուբերկուլյոզային առողջարանը

Հայաստանի N1 տուբառողջարանը

Դիլիջանն առողջարանային քաղաք դարձնելու բարեհաջող մեկնարկը պայմանավորված էր այն իրողությամբ, որ դեռեւս 19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսական կայսրությունն, ընդլայնելով իր տարածքները դեպի Կովկաս եւ Անդրկովկաս, մանրազնին ուսումնասիրել էր նաեւ պատմական Հովքի շրջանը։
Այդ ուսումնասիրությունների արդյունքում էր, որ 1877-78 թվականների ռուս-թուրքական պատերազմի ժամանակ որոշվեց Դիլիջանում հիմնել Լազարեթը՝ վիրավոր զինվորների բուժման կայանը։

1915 թվականի «Բուժական Կովկաս» թիֆլիսյան ամսագիրն իր դեկտեմբերյան համարում գրել է. «Դիլիջանի շրջանն իր գեղեցկությամբ եւ բնության հարստությամբ, առողջարար կլիմայով եւ հանքային ակունքների առատությամբ աշխարհի հրաշալի անկյուններից մեկն է։ Դա է պատճառը, որ բուժական վայրերի զարգացմանը նպաստող կովկասյան ընկերությունն անհրաժեշտ համարեց առաջին

հերթին հիշյալ շրջանում ուսումնասիրություններ կատարել»։

Ահա Դիլիջանն այսպիսի նախադրյալներով առաջին տարածքն էր հանրապետությունում, որտեղ, մինչ քաղաքը պետական առողջարան դարձնելու վերաբերյալ Ժողկոմխորհի 1926 թվականի հատուկ որոշման ընդունումը, հնարավոր է դարձել արագորեն կազմակերպել տուբերկուլոզով հիվանդների բուժումն ու վերականգնումը։

Այսպիսով, 1921 թվականին իշխանուհի, հասարակական եւ մշակութային գործիչ Մարիամ Թումանյանի նախկին ամառանոցներից մեկում, որն իշխանուհին նվիրաբերել էր այդ կարեւոր գործին, սկսեց գործել ընդամենը 25 մահճակալանոց Դիլիջանի N1 տուբերկուլոզային առողջարանը, որը հիմնադրվել է հանրահայտ բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր Գրիգոր Սաղյանի նախաձեռնությամբ։ Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ տարում՝ 1921 թվականին, Սաղյանը եկել էր Դիլիջան՝ նվիրվելու տուբերկուլոզով հիվանդների բուժման գործին։ Ավելի ուշ հնարավոր դարձավ բարելավել առողջարանի պայմաններն ու մահճակալների թիվը հասցնել 75-ի։ Սահմանափակ պայմանների պատճառով հիվանդներն այդտեղ բուժվելու հնարավորություն են ունեցել մեկ ամիս ժամկետով։ Խիստ անհրաժեշտության դեպքում ժամկետը երկարաձգվել է եւս երկու շաբաթով։

Ի դեպ, Գրիգոր Սաղյանի նախաձեռնությամբ Դիլիջանում 1927 թ.-ից սկսել են գործել նաեւ մանկական հակատուբերկուլոզային դիսպանսերն ու հիվանդանոցը՝ ներկայիս ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի տեղում։ Սաղյանի գիտական աշխատություններում ծանրակշիռ տեղ է հատկացված Դիլիջանում թոքերի, ոսկրահոդային տուբերկուլոզի բուժման խնդիրներին։ Նրա հետազոտական աշխատություններից մեկը, որը հրապարակվել է Մոսկվայում, այդպես էլ կոչվում է՝ «Դիլիջանը՝ որպես լեռնակլիմայական եւ ջրաբուժական առողջարան»։

Հետագայում՝ 1926 թվականի պետական որոշմամբ, ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ Դիլիջանի N1 տուբերկուլոզային առողջարանը ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու նպատակով։ Միջոցառումներն ընդգրկում էին նոր օժանդակ շենքերի կառուցումը, ջրմուղի կառուցումը, պոմպերի տեղադրումը, որոնց միջոցով արտեզյան ջրհորների ջուրը հասավ առողջարան, առանձին մանկական բաժնի կառուցումը, սանիտարահիգիենիկ եւ բուժական պայմանների բարելավումը։

Առողջարանն ուներ համամիութենական նշանակություն։ Սովետական տարիներին ընդլայնվելով՝ առողջարանը դարձել էր հանրապետության ամենամեծ տուբառողջարանը՝ արդեն 420 մահճակալով, գործող երեք բաժանմունքով՝ թոքային տուբերկուլոզի, ոսկրա-գեղձային հիվանդների եւ մանկական։ Առողջարանը պատշաճ կահավորված էր, ուներ դիագնոստիկ լաբորատորիա եւ բուժական սենյակներ։ Ապահովված էր իր ժամանակի առաջատար բուժական սարքավորումներով եւ գործիքներով։ Առաջինն էր, որտեղ կիրառվել է արեւաճառագայթային եւ օդային լոգանքների բուժումը։ Ի դեպ, տեղի հանքային ջրերը բուժման նպատակով օգտագործվել են դեռեւս ռուս զինվորների ապաքինման համար, իսկ առողջարանում լայնորեն կիրառվել են հիվանդների սննդակարգը կարգավորելու նպատակով։

Առողջարանի վաստակաշատ գլխավոր բժիշկն էր Զավեն Բաբայանը, եւ բնակիչները հաճախ էին առողջարանն անվանում «Բաբայանի սանատորիա»։

1980-ականների վերջին, արդեն իսկ Դիլիջանում ունենալով առողջարանային, բուժական եւ հանգստյան, կուրորտային գոտիների բաժանումներ, առողջարանն, ինչպես նաեւ հիվանդանոցը հանվեցին քաղաքի հանրային գոտու շրջագծից։ Այսինքն, առողջարանի եւ հիվանդանոցի գործունեությունը չէր կարող իրենց համապատասխան գոտիներից դուրս լինել։ Որոշ ժամանակ անց առողջարանն ու հիվանդանոցը դադարեցին գործել։

► Դիլիջանի մանկական առողջարանի առաջին շենքը

Դիլիջանի մանկական հակատուբերկուլոզային առողջարան

Դիլիջանի մանկական հակատուբերկուլոզային առողջարանը հիմնադրվել է 1951 թվականին։ Մինչ այդ, Դիլիջանի առաջին առողջարանի հովանու ներքո վատառողջ երեխաների համար գործել է մանկական բաժանմունք։ Հիմնադրման տարիներից ի վեր այս առողջարանի հեղինակությունը բարձր է եղել, եւ վերջինս առաջատար է համարվել մնացած մանկական առողջարանների շարքում, քանի որ դիլիջանյան բնության անսպառ հարստությունը հնարավորություն է ընձեռել առողջարանում կազմակերպելու ոչ միայն դեղորայքային, այլ նաեւ կլիմայական՝ արեւային ու օդային լոգանքների միջոցով համակցված բուժում։

Առողջարանի առաջին շենքը տեղակայված էր Գոլովինո թաղամասին հարող տարածքում՝ նախկինում մասնավոր, իսկ խորհրդային կարգերի առաջին տարիներին պետականացված ամառանոցներում, որոնք հարմարեցվել էին բուժսպասարկման պահանջներին՝ բուժական մաս, խոհանոց, սանհանգույցներ, լվացքատուն, ննջասենյակներ՝ շուրջ 100 մահճակալով։

Ողջ տարվա ընթացքում առողջարանն իրականացրել է ե՛ւ տուբերկուլոզով հիվանդացած-բուժված, ե՛ւ կոնտակտավոր երեխաների առողջության վերականգնողական աշխատանքներ՝ այդ ժամանակաշրջանի բուժական չափորոշիչներին համապատասխան։ Քանի դեռ ապաքինման կարիք կար, երեխաները հնարավորություն

ՊԱՐԿԱՅԻՆ. 20-ՐԴ ԳԱՄԱՐՅԱՆԻ ԵՎ ՊՈՒՇԿԻՆԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

ունեին մնալու առողջարանում՝ երբեմն նույնիսկ մեկից երկու տարի։ Առողջարանում գործում էր նաեւ դպրոց, որն ապահովել է երեխաների ութամյա կրթությունը։ Այդ տարիներին առողջարանն ի վիճակի էր սպասարկելու տարեկան շուրջ 100 երեխայի։

1989 թվականին Դիլիջանի մանկական առողջարանը տեղափոխվեց լուսանկարում պատկերված նորակառույց շենքը, որը Թախտա թաղամասում էր՝ սարալանջի վրա եւ շրջապատված էր բարձրադիր անտառներով։ Առողջարանն ընդարձակ էր, ուներ առանձին վարչական, օժանդակ տնտեսական, ուսումնական, բուժական, ննջասենյակային (185 մահճակալ) մասնաշենքեր, հարմարավետ բացօթյա հանգստի գոտի։

Նախորդ դարի 90-ականների սկզբից այս առողջարանը միակն էր հանրապետությունում։ Այդ տարիներից փոփոխվեցին երեխաների ընդունելության կանոնները, ապաքինման ժամկետները կրճատվեցին, իսկ ուղեգրերը, որպես կանոն, տրամադրվում էին 50 օրով։ Առողջարանն սկսեց աշխատել առավել ծանրաբեռնված ռեժիմով։ Տարեկան այստեղ հնարավորություն են ունեցել պրոֆիլային վերականգնողական բուժում ստանալ շուրջ 800 երեխա։ Հաճախ էր պատահում, որ ամռան ամիսներին բոլոր ուղեգրված երեխաներին սպասարկելու համար ստիպված էին լինում ննջասենյակներում պահեստային մահճակալներ տեղադրել։ Նրանց թիվը հաճախ գերազանցում էր 220-ը։ Աշխատող անձնակազմի թիվը, ցավոք, կրճատվել էր՝ մոտ 50 հոգի։

Իր գործունեության ընթացքում առողջարանի բարձր հեղինակությունն ու կանոնակարգված աշխատանքն ապահովել են առողջապահական ոլորտի հմուտ կազմակերպիչներ, փորձառու եւ գործի նվիրյալ բժիշկ-տնօրենները՝ Յաշմելա (Միրա) Միրզոյանը եւ Եվգենյա Հովհաննիսյանը։

Մանկական առողջարանը գործել է մինչեւ 2019 թվականը։

◀ Հեռվում Խանջյանի տունն է, 1930-ականների վերջ

Աղասի Խանջյանի ամառանոց

Խորհրդային շրջանի կուսակցական եւ պետական գործիչ Աղասի Խանջյանի ամառանոցը դիլիջանյան ճարտարապետական մարգարիտներից է, հանրապետական նշանակության հուշարձան։ Շենքը գտնվում է Դիլիջան-Երեւան մայրուղու աջակողմյան փշատերեւ եւ սաղարթավոր անտառներով ծածկված լանջին։ Ամառանոցային համալիրը բաղկացած է երկու շինությունից՝ հիմնական եւ ննջարանային մասնաշենքերից, որոնք կառուցվել են 1928-36 թվականներին։ Հիմնական ամառանոցը շրջանաձեւ կառուցվածքով շենքն է, երկրորդը «բելվեդեր» (արևնակ՝ շենքը պսակող աշտարակ) է։ Հարուստ բնության գրկում բազմած՝ այս շինությունները հիանալիորեն ներդաշնակվում են միջավայրին, եւ այդ համալիրի բարձր դիրքի շնորհիվ տեսանելի է Աղստեւի հոսանքի երկայնությամբ փռված ողջ Դիլիջան քաղաքը։

Դիլիջանում հանգստյան տուն կառուցելու գաղափարի հեղինակը Աղասի Խանջյանի անձնական բժիշկ Գրիգոր Սաղյանն էր։ Խանջյանը նույնպես համարձակ նախագծերի ջատագով էր եւ ճարտարապետ Գեւորգ Քոչարի հետ կյանքի է կոչել Սաղյանի մտահղացումը։ Ամառանոցն իր ճարտարապետական լուծումներով տարբերվում

amanullhanyaphoto

◀ Աղասի Խանջյանի ամառանոցի հիմնական մասնաշենքը

է 1930-ականներին իշխող շինարարական տիպային չափանիշներից։ Իր ոճով այս համալիրն ավելի մոտ է 20-րդ դարի 2-րդ տասնամյակի առաջադեմ ճարտարապետների «ժառանգության յուրացում» ոճին՝ դասական սյունաշարեր, ճաղավանդակներով զարդարված պատշգամբներ, ներքին նրբագեղ հարդարանք, նախշազարդ սանդուղքներ, նկարազարդ առաստաղ, պատշգամբ, պատուհաններից երեւացող կանաչապատ դրախտային միջավայր։

Ցավոք, պատվիրատուն՝ Աղասի Խանջյանը, չհասցրեց վայելել ամառանոցի հմայքը։ Ըստ տարեց դիլիջանցիների հուշերի՝ շահագործման հանձնելուց հետո նա ընդամենը մեկ անգամ է այցելել ամառանոց։ Այդ դժնդակ տարիներին շրջանառության մեջ դրված պաշտոնական վարկածով՝ ժողովրդի սիրելի եւ հարգված ղեկավարը 1936 թվականին ինքնասպան է եղել։ Հետագայում առավել փաստարկված Խանջյանի մահը սպանություն է որակվել՝ կապվելով Լավրենտի Բերիայի անվան հետ։

Խանջյանի մահից հետո ամառանոցը դարձել է կառավարության ընդունելության տներից մեկը, պատկանել է առողջապահության նախարարության 4-րդ վարչությանը եւ հյուրընկալել է հանրապետության առաջին դեմքերին, այլ բարձրաստիճան հյուրերի։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ամառանոցը լքված էր ու մոռացության մատնված։ Հետպատերազմյան շրջանում վերականգնվել է եւ գործել է հիմնականում 4-րդ վարչության համակարգում։ Սակայն, 1970-ականներից՝ սողանքների ակտիվացման եւ ժամանակի ներգործության հետեւանքով ամառանոցի շրջանաձեւ շենքը սկսել է փլուզվել։ Մյուս մասնաշենքը, որը գտնվում է համեմատաբար բարվոք վիճակում, 1997-2016 թվականներին տրամադրվել է Երեւանի կառավարման ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարանի դիլիջանյան մասնաճյուղին։

Խանջյանի ամառանոցի տարածքում է գտնվում նաեւ անվանի քանդակագործ Արա Սարգսյանի «Անտառի արքա» քանդակը, որն իր շուրջն է հավաքում զբոսաշրջիկների խմբերին։ Այժմ այս տարածքը մասնավոր տիրույթ է, եւ պատմամշակութային ժառանգության ցանկում գտնվող Խանջյանի ամառանոցի վերականգնման համար պահանջվում են ծանրակշիռ եւ ծավալուն հակասողանքային միջոցառումներ։

Դիլիջանի տուրիստական հանգրվան

Դիլիջանի տուրիստական հանգրվանն իր առաջին քայլերն արել է փայտաշեն տնակներում, 1960-ականների սկզբին Գոլովինո թաղամասում էր գտնվում՝ Գոլովինկա գետի ափին (ներկայիս «Լեռնային Հայաստան» առողջարանի մերձակայքում)։

Լուսանկարում պատկերված շենքը որպես տուրիստական հանգրվան կառուցվել է 1963 թվականին, Դիլիջանի ներկայիս միջազգային դպրոցի (UWC Dilijan) տեղում։ Մինչեւ հիմնական շենքի կառուցումը նույն այդ տարածքում գործել է մեկհարկանի, ապակեպատ պատշգամբով կառույց, որտեղ ժամանակավոր հանգրվանել են զբոսաշրջիկները։ Հետագայում կառուցվել է Դիլիջանի տուրիստական բազան ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան եւ սպասարկել նախկին ԽՍՀՄ հանրապետություններից ժամանած զբոսաշրջային մեծ հոսքերի։

Քանի որ Դիլիջանի տուրիստական հանգրվանը ներառված էր հանրապետական զբոսաշրջային երթուղու մեջ, վերջինս՝ որպես այդ շղթայի լիիրավ անդամ, համապատասխանել է մի շարք չափորոշիչների եւ ապահովված էր անհրաժեշտ բոլոր պայմաններով՝ օժանդակ տնտեսական կառույցներով, ճաշարանով, բարով, լողավազանով, բացօթյա հանգստի եւ ակտիվ զբաղմունքների գոտիներով, մարզահրապարակով, մարզական պարապմունքների համար նախատեսված գույքով։ Ճարտարապետական տեսանկյունից շենքը գործառական էր, բաց պատշգամբները հարմարավետ էին առավոտյան օդային եւ արեւային լոգանքներ ընդունելու համար,

իսկ երեկոյան հնարավորություն էին ընձեռում լիաթոք ըմբոշխնելու դիլիջանյան անզուգական մայրամուտի եւ առհասարակ դիլիջանյան բնության ողջ հմայքը։

Մոտակայքում բացվում է «Турист» խանութը, որը զբոսաշրջիկների համար նախատեսված սնունդ ու զբոսաշրջային պարագաներ էր վաճառում։ Զուգահեռաբար՝ քաղաքում գործում էր էքսկուրսիոն բյուրոն, որն իրականացնում էր զբոսաշրջային ուղեգրերի վաճառքը եւ էքսկուրսիաներ էր կազմակերպում։ Ներքաղաքային էքսկուրսիաներում ընդգրկված էին քաղաքի տեսարժան վայրերը, ներառյալ Հաղարծինի վանական համալիրը, Գոշավանքը, Ջուխտակ վանքերը, Մաթոսավանքը, Պարզ լիճը։

Տուրիստական հանգրվանի վարչակազմը եւ հաճախ անձամբ տնօրենը հոգ էին տանում, որ անկոչ հյուրեր չմտնեն տարածք եւ չխանգարեն հանգստացողների անդորրը։ Այնուամենայնիվ, քաղաքի երիտասարդները երբեմն փորձում էին ներթափանցել տարածք՝ զբոսաշրջիկների հետ ծանոթանալու ու շփվելու նպատակով։

Պատմում են, որ մի անգամ մի խումբ երիտասարդներ՝ իրենց միջավայրում հեղինակություն վայելող անձնավորության գլխավորությամբ, որոշում են ծածուկ մտնել տարածք։ Շրջանցիկ մի կածանով տեղ են հասնում, բայց արի ու տես՝ հայտնվում են ուղիղ տնօրենի դեմ դիմաց։ Զայրացած տնօրենն հայհոյախառն արտահայտությունևերով հարձակվում է նրանց վրա։ «Ձեզ չե՞մ ասել՝ էստեղ չերեւաք»,- բղավում է նա։ Երիտասարդներից մեկն իրեն չի կորցնում, չքմեղանում է եւ, ցույց տալով շենքի պատին փակցված մեծ պաստառը, հակադարձում է՝բա էստեղ գրված չի՞ «Добро пожаловать»։

Տուրիստական հանգրվանը դադարել է գործել 1980-ականների վերջին։

«Լեռնային Հայաստան» առողջարան

«Լեռնային Հայաստան» առողջարանի շենքը՝ իր ճարտարապետական լուծումներով ու բարձրադիր տեղանքով, յուրահատուկ է Դիլիջանի առողջարանների շարքում։ Առողջարանը գտնվում է ոլորաններից Դիլիջան մտնող մայրուղու աջակողմյան սարալանջին՝ Գոլովինո թաղամասում։ Սաղարթախիտ, փշատերեւ անտառներով շրջապատված այս շենքի գագաթը կարելի է տեսնել շրջակա՝ ավելի ցածրադիր բոլոր գոտիներից։

Խորհրդային տարիներին առողջարանն ունեցել է համամիութենական նշանակություն եւ իր «հոգատար գիրկը» բացել է ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների հանգստացողների առջեւ։ Առողջարանում վերականգնողական կուրս են անցել Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն, հանրահայտ ռուս ժուռնալիստ Ալեքսանդր Բովինը, ԽՍՀՄ վաստակավոր արտիստներ, օպերային երգչուհիներ Իրինա Արխիպովան եւ Գոհար Գասպարյանը, պրոֆեսոր, պատմաբան Ջոն Կիրակոսյանը, հայկական շախմատի ֆեդերացիայի հիմնադիր Սմբատ Լպուտյանը, բանաստեղծ Համո Սահյանը, մաեստրո Կոնստանտին

«Լեռնային Հայաստան» առողջարան

Օրբելյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Դավիթ Մալյանը եւ շատուշատ քաղաքական գործիչներ, արվեստի հանրահայտ ներկայացուցիչներ։

Առողջարանի շինարարական աշխատանքներն սկսվել են 1963 թվականին եւ ավարտվել 1969-ին։ Շենքի նախագծի հեղինակը՝ ՀԽՍՀ վաստակավոր շինարար, ճարտարապետ Զավեն Բախշինյանը, այս կառույցի ճարտարապետական լուծումներում համադրել է դասական եւ հայկական ավանդական ճարտարապետական տարրերը։ Հոյակերտ սյուները, կամարները, նախշազարդ քիվերը, զարդաճաղերը, դասական կանոններով վերհառնած ճակատն ու հիմնական եւ օժանդակ մասնաշենքերն՝ իրենց կառուցվածքով ու սյունազարդ գմբեթը կարծես ստեղծվել են դարեր շարունակ հարատեւելու անսասան կամքով։ Առողջարանի ներքին ձեւավորումը նույնպես կատարված է գեղարվեստական բարձրաճաշակ պահանջներին համահունչ։ 1984-86 թվականներին առողջարանի տարածքում կառուցվել են նաեւ մենատներ (քոթեջներ)՝ նախատեսված առանձին ընտանիքների հանգստի համար։

2005-2007 թվականներին առողջարանը հիմնովին վերանորոգվել է, կահավորվել, հագեցվել անհրաժեշտ սարքավորումներով։ Ընդհանուր մահճակալների թիվը 200-ից ավելի է։ Տարեկան շուրջ 1200 մարդ բուժվում եւ ապաքինվում է այստեղ։

Հանգստացողների համար կան նաեւ անհատական համարներ՝ հյուրասենյակով եւ աշխատասենյակով։ Բաց պատշգամբները հարմարեցված են արեւային եւ օդային լոգանքներ ընդունելու համար։ Ազատ ժամանակը կազմակերպելու եւ հետաքրքիր դարձնելու նպատակով այստեղ գործում են գրադարան, սրճարան, բար, կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի դիտարժան վայրեր։ Հիմնական մասնաշենքում տեղակայված են մարզադահլիճը՝ իր մարզագործիքներով եւ փակ լողավազանը։ Ճաշարանի տեսականին բազմազան է։ Հավասարակշռված դիետիկ սննդակարգ սահմանելիս հաշվի են առնվում յուրաքանչյուր հանգստացողի կարիքները։

Բուժական ընթացակարգերի մասնաշենքում են գտնվում ախտորոշիչ լաբորատորիան, ատամնաբուժական, Էլեկտրակարդիոգրաֆիայի, բուժական ֆիզկուլտուրայի, ֆիզիոթերապիայի սենյակները։ Կիրառվում են նաեւ համակցված ջրաբուժական, պարաֆինաբուժական, տորֆաբուժական, էլեկտրաբուժական մեթոդները։ Վերջին տարիներին բացվել է ցեխաբուժության մասնաշենքը, որը հաջողությամբ իրականացնում են բարձրակ մասնագետները։

Բացօթյա հանգստյան գոտին նույնպես լիովին բարեկարգված է։ Առողջարանին հարող տարածքում ֆուտբոլի եւ բասկետբոլի դաշտեր կան։ Ստեղծված են սոճիների եւ եղեւնիների ծառուղիներ, որոնք նախատեսված են զբոսանքի եւ օդային լոգանքի համար։ Առողջարանի ճակատային հատվածում կլոր տարին ծաղկում են այգեգործների հոգատար ձեռքերով մշակվող ձմեռային այգու բազմատեսակ բույսեր, թփեր ու ծաղիկներ։

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո առողջարանը վերածվել էր զինվորական հոսպիտալի։ Այժմ առողջարանը գործում է ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության ներքո։

Շարամբեյանի անվան փողոց

Սովետական շրջանում ռուս դասական պոետ Լերմոնտովի անունը կրող այս փողոցի պատմությունը, թերեւս, ամենաուշագրավն է դիլիջանյան «պատկերասրահում»։

Տարբեր ժամանակահատվածներում բնակչությունը քաղաքի այս հատվածին տարբեր անվանումներ է տվել. «Քյարամի քուչա»՝ հին բնակիչ, կույր ծերունի Քյարամի անունով, «Քյարամի պրոսպեկտ»՝ փողոցի նեղլիկությունը կատակով այսպես են ընդգծել սրամիտ դիլիջանցիները, «Գրաֆսկի պերեուլոկ»՝ թաղամասի բնակիչ՝ հայտնի լուսանկարիչ Վիսոչկինի արվեստանոցի ՖՈՏՈԳՐԱՖԻԱ ցուցանակից մնացած ԳՐԱՖ տառակապակցությունից է ծնվել։ Ժողովուրդը նաեւ անվանել է «Պադվալների թաղ», «Հնությունների փողոց»։

Փողոցի անվանի բնակիչներից են եղել Թիֆլիսի, Բաքվի մեծահարուստներ Անանովները, Բադալովները, Ասլանովները. Նրանք այստեղ կառուցել են ամառանոցներ՝ անդրկովկասյան մայրաքաղաքներում իրենց սեփական ամառանոցների ոճով։ Շինարարությունը, որոշակիորեն ենթարկվելով Դիլիջանի տնաշինական ավանդույթների ազդեցությանը եւ միախառնվելով քաղաքում ապրող մոլոկանների տների ոճական տարրերին, ձեւավորել է դիլիջանյան ճարտարապետական յուրօրինակ դիմագիծը։ Այդ երկհարկանի տներին բնորոշ են մեծ, նախշազարդ փայտյա պատշգամբները, նուրբ ժանյակներով զարդարված քիվերը եւ պատուհանները, ճերմակ պատերն ու կարմիր կղմինդրե տանիքները։

Փողոցն այժմ կոչվում է ի հիշատակ ՀՀ վաստակավոր նկարիչ Հովհաննես Շարամբեյանի, որը 1983 թվականին նախաձեռնեց Դիլիջանի այս գողտրիկ հատվածի պատմական տեսքի վերականգնումը։ Հովհաննես Շարամբեյանի էսքիզներով, ճարտարապետներ Հայկ Թելումյանի եւ Թելման Գրիգորյանի նախագծերով այստեղ սկսվեցին շինարարական եւ կառուցման աշխատանքներ, որոնց իրականացման արդյունքում քաղաքին վերադարձվեց «Հին Դիլիջան» պատմամշակութային համալիրը։

2000-ականների սկզբից համալիրը վարձակալությամբ տրվել է Ջեյմս Թուֆենկյանին՝ «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ին, որը, պահպանելով պատմական եւ մշակութային ոճը, հիմնանորոգել է փողոցը։ Հիմնանորոգման աշխատանքներն իրականացրել է հայտնի «ԿԱՆԱԿԱ» շինարարական ընկերությունը՝ Հայաստանի վաստակավոր շինարար Հայկ Հովիվյանի գլխավորությամբ։

2008-ի մայիսին հիմնանորոգման ավարտի կապակցությամբ հանդիսությանը մասնակցելու նպատակով արտերկրից ժամանած բազմաթիվ ճարտարապետներ շատ բարձր գնահատեցին համալիրը։ Դիլիջանի ճարտարապետությանը բնորոշ տարրերը անթերի են արտացոլված համալիրում։

Համալիրը ներառում է հյուրատուն, ռեստորան, հուշանվերների խանութներ եւ թանգարան, որի պատերի ներքո հավաքված յուրօրինակ ինքնաեռները, հսկայական քանակությամբ կենցաղային իրերը հաճախ օգտագործվում էին ժողովրդական տոների կամ միջոցառումների ժամանակ։ Այստեղ գործում են նաեւ գեղարվեստական իրերի, հուշանվերների պատրաստման արհեստանոցներ, որտեղ անցկացվում են վարպետաց դասեր՝ հաճախ հենց զբոսաշրջիկների մասնակցությամբ։ Խեցեգործական աշխատանքներն իրականացնում են Գոգչյանները, իսկ փայտամշակումը՝ Գրիշա Հովսեփյանը։

Դիլիջանի Շարամբեյանի անվան փողոց-թանգարանը ոչ միայն Հայաստանում, այլեւ ողջ Անդրկովկասում համարվում է եզակի։ 2010 թ.-ին ԵԽ Կիեւյան նախաձեռնության տարածաշրջային «Պատմական քաղաքների մշակութային ժառանգության վերականգնում» ծրագրի շրջանակում Դիլիջանն իր այս գողտրիկ անկյունով դասվեց Հայաստանում՝ 10, իսկ աշխարհում՝ 46 պատմական քաղաքների շարքում։

► Բլդան գետի կամրջի վրայով անցնող երկաթուղային գծի 225 մ երկարությամբ հատվածը՝ 45 մ բարձրության վրա

դամասկոսյան գծամասերում ու ցամաքամերձ գոտիներում

Առաջին գնացքի մուտքը Իջեւան-Հրազդան երկաթուղու «Դիլիջան» կայարան, 1986 թ.

Իջեւան-Հրազդան երկաթուղի, «Դիլիջան» կայարան

Իջեւան-Հրազդան երկաթուղու եւ «Դիլիջան» կայարանի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1986 թվականի օգոստոսի 9-ին։ Այդ օրն առաջին գնացքը պաշտոնապես ուղեւորվեց Իջեւան-Հրազդան երկաթուղով՝ իր վագոններում հյուրընկալելով հանրապետության ղեկավարներին, նրանց հետ ժամանած հյուրերին եւ երթեւեկության նպատակով հրավիրված պատվավոր ուղեւորներին։ Պաշտոնական բացումն ուղեկցվել է հանրային տոնական միջոցառմամբ։ Բացման արարողությանը մասնակցել են Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը եւ այլ բաձրաստիճան ղեկավարներ, հանրապետության ճանաչված մտավորականներ։ Կայարանի բացմանը նախորդել էին Հաղարծինի եւ Թեղուտի կիսակայարանների բացման արարողությունները։

Կայարանի բացման մասնակից, պատվավոր ուղեւոր Աշոտ Աթաբեկյանը, որ հետագայում երկար տարիներ աշխատել է որպես կայարանի պետ, պատմում էր, որ տոնական արարողության ժամանակ գործում էր «Сухой закон»-ը (ԽՍՀՄ-ի ընդունած արգելք-օրենքը՝ ոգելից խմիչքների օգտագործման դեմ), բայց իրենք, հասնելով Կաքավաձորի կայարան՝ Հրազդանի մոտ, «թաքուն», «հայավարի» շնորհավորել են միմյանց՝ շրջանցելով օրենքը։

Դիլիջանցիները մինչ օրս հիշում են կայարանի բացման հանդիսավոր արարողության ժամանակ անվանի գրող, արձակագիր Սերո Խանզադյանի տպավորիչ ելույթը։ Իր խոսքում կարեւորելով երկաթուղու շահագործումը, նա պատկերավոր ասել է. «Ճանապարհները հաճախ Հայաստան են բերել ասպատակիչների, իսկ այժմ մեզ մոտ են բերում բարեկամների»։

Սերո Խանզադյանը քաջատեղյակ էր, որ այդ խոշոր ճանապարհաշինարարությունն իր շուրջն էր հավաքել տարբեր ազգերի։ Ավելի քան հինգ տարի տեւած տքնանքին մասնակցել են Մոսկվայի կամրջաշինարարական, կոնստրուկտորական բյուրոյի մասնագետներ, հայ, ուկրաինացի, բելոռուս, վրացի թունելագործներ, պայթեցնողներ, հորատողներ, բուլդոզերավարներ, վարորդներ, բեռնակիրներ, բանվորներ, կամավորներ։ Իսկ երկաթուղու շինարարությունն իրականացրել է «307» շինմոնտաժային կազմակերպությունը՝ ենթակապալառու այլ կազմակերպությունների հետ միասին։

Որպեսզի գնացքն անցներ Դիլիջանով, չորս լեռների միջով փորվել են թունելներ։ Ըստ նախնական նախագծի՝ երկաթուղին պետք է անցներ քաղաքի միջով, սակայն տեղի ղեկավարության եւ անձամբ ճարտարապետ Սեյրան Ավետիսյանի ջանքերի շնորհիվ հաջողվել է փոփոխություններ կատարել նախագծում եւ թունելի կառուցման միջոցով լուծել այդ խնդիրը։ Դիլիջանի լեռներով անցնող թունելները հետագայում անվանել են «Երեւան-Թբիլիսի-Կիեւ-Մինսկ բարեկամության երթուղի», քանի որ անանցանելի լեռները «հնազանդեցնելը» հնարավոր է դարձել տարբեր ազգերի աշխատանքային բրիգադների համատեղ ջանքերի շնորհիվ։ Գնացքը շուրջ չորս կիլոմետր անցնում է թունելների միջով, այնուհետեւ դուրս գալիս «լույս աշխարհ»։ Թունելից դուրս գալով՝ գնացքը հայտնվում է 225 մետր երկարությամբ երկաթուղային գծի վրա, որն էլ, ունենալով 45 մետր բարձրություն, անցնում է Բլդան գետի շրջակա ձորի վրայով։

«Դիլիջան» երկաթուղային կայարանի շենքի նախագծման եւ կառուցման համար Հայպետնախագծի ճարտարապետներ Հրաչյա Սողոյանը եւ Սմբատ Մելքոնյանը արժանացել են ԽՍՀՄ ճարտարապետների միության պատվոգրերի։ Բարձր է գնահատվել նրանց բացառիկ աշխատանքը, որի արդյունքում, բարդ լուծումների շնորհիվ, կայարանի նախկին տեղում գտնվող բլուրը հարթեցրել եւ դարձրել են երկաթգծի հարմարավետ կայարան։

Շահագործման շնորհիվ Երեւան-Թբիլիսի ճանապարհը կրճատվեց շուրջ 80 կիլոմետրով։ Երկաթուղու գործունեությունն առհասարակ նպաստեց քաղաքի տնտեսական ոլորտի զարգացմանը։

Դիլիջան-Իջեւան ուղղությամբ երկաթուղին աշխատել է մինչեւ 1992 թվականը, որից հետո սողանքների պատճառով առաջացել են փլվածքներ եւ անհնարին դարձրել հետագա շահագործումը։

Դիլիջան-Հրազդան երկաթուղու բեռնափոխադրումը մինչ օրս գործում է։

ՊԱՐԵՏԱՆ. 20-ՐԴ ԳԱՄԱՐՏԱԿԱՆ ՀՄՊ ԿՀ-ՈՒ ԴԻՑԱԿԱՆԸ

◀ Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը Իջեւան-Հրազդան երկաթուղու «Դիլիջան» կայարանի պաշտոնական բացմանը, 1986 թ.

Սեւան-Դիլիջան ավտոճանապարհային թունել

Սեւան-Դիլիջան ավտոճանապարհային թունելը շահագործման է հանձնվել 2004 թվականին: Սա խոշոր իրադարձություն էր Հայաստանի ճանապարհաշինական ոլորտում եւ մեծ նշանակություն ունեցավ ողջ երկրի, հատկապես Տավուշի մարզի տնտեսական զարգացումը եւ զբոսաշրջությունը խթանելու գործում:

2257 մետր երկարությամբ, 5 մետր բարձրությամբ եւ 8 մետր լայնությամբ գետնուղու շինարարությունն սկսվել էր դեռեւս 1970-ական թվականներին, բայց ավարտին չէր հասել: 1992 թվականին աշխատանքները դադարեցվել էին:

Շնորհիվ մեծ բարեգործ Քըրք Քրքորյանի «Լինսի» հիմնադրամի՝ 2002 թ.-ի մարտից հնարավոր եղավ իրականացնել այդ վիթխարի ծրագիրը, որի արժեքը՝ 7 մլն դոլար, հաշվարկել էր «Ճանապարհաշինություն» ծրագրի իրականացման գրասենյակը:

Թունելի գործարկմամբ ոչ միայն կրճատվեց միջպետական ճանապարհի երկարությունը (ընդհանուր 14 ոլորանից 8-ը կրճատվեց), այլ նաեւ, առանց Սեմյոնովկա եւ Ծովագյուղ գյուղերը մտնելու, ճանապարհն ուղիղ դուրս եկավ Սեւանի մայրուղի. հատկապես ձմռան ամիսներին միջպետական ճանապարհը դարձավ հուսալի:

Չնայած թունելը տեղակայված է երկրաբանական բարդ գոտում (տարածքը սեյսմիկ է, եւ կա գրունտային ջրերի ողողման խնդիր), ըստ մասնագետների գնահատման՝ վերջինս հուսալի ամրացված է, համապատասխանում է սեյսմիկ նորմերի պահանջներին: Նույնիսկ 9.0 բալանոց երկրաշարժի դեպքում կանգուն կմնա:

Թունելախորշի օդի մաքրության համար պահանջվող ցուցանիշների ապահովման նպատակով թունելի ողջ երկայնքով գործում է օդափոխման համակարգ: Սկզբնամասում եւ վերջնամասում գործում է նաեւ պահակային եւ հակահրդեհային միջոցառումների համալիր:

Շինարարությունն իրականացրել են մրցույթում շահած 6 կազմակերպություններ, որոնց շարքում նաեւ «Արփա-Սեւան» բաց բաժնետիրական ընկերությունն էր:

Նախկին ճանապարհի պատմական ոլորանների մեծ մասը, որպես շրջանցիկ ճանապարհ, նույնպես հիմնանորոգված է եւ պահպանում է իր զբոսաշրջային հմայքը:

ERMAF

ԴԻԼԻՋԱՆ. 20-ՐԴ ԴԱՐ

Տնտեսություն

Սովխոզի ալրաղացում, 1950 թ.

Ջրաղացներ

Հայկական ավանդական ամենահին աղացը երկանքն էր, որի միջոցով դարեր ի վեր գյուղացիներն իրենց սեփական տանիքների տակ աղացել են հացահատիկ եւ այլ մշակաբույսեր։ Դիլիջանցիները նույնպես երկանք են օգտագործել։ Իսկ ահա 19-րդ դարի կեսերից այստեղ սկսել են գործել նաեւ ասիական ջրաղացներ։ Ջրաղացների համար օգտագործվել է Աղստեւի հոսքային ուժը։

Ըստ Սիմոն Խառատյանի՝ Դիլիջանում եղել է երեք հիմնական ջրաղաց։ Դրանցից մեկը Կալինինո փողոցի վերին հատվածում է եղել՝ գետի ձախ ափին (ներկայիս ռուսական դպրոցի մոտ)։ Պատկանել է ոմն պողոսքիլեսցու (շամախյանցու) եւ գործել է երկար տարիներ։ Գործունեության դադարից հետո այդ նույն տեղում հետագայում գործել է «Ջրաղաց» անվամբ սննդի օբյեկտ։ Գետի աջ ափին (ներկայիս կահույքի ֆաբրիկայի տարածքում) գտնվող երկրորդ ջրաղացը պատկանել է Դավթյաններին։ Հետագայում Մեխակ Դավթյանը ջրաղացը վերափոխել

է ջրի ուժով աշխատող կալի (հացահատիկը դիզելու եւ մաքրելու տեղ)։ Երրորդը պատկանել է Սաղաթելյաններին եւ գործել է մինչեւ 1950-ական թվականները (աղբյուրը՝ Հենրիկ Խառատյանի «Հայրենի երկիր, հարազատ մարդիկ, հայրենանվեր գործեր», Երեւան, 2003)։

Շարունակաբար հիմնադրվել եւ գործել են նաեւ առավել ժամանակակից շվեյցարական ջրաղացներ, որոնք ապահովել են մեծ ծավալի արտադրողականություն։ Դիլիջանում դրանց առաջին փորձարկողները եղել են տեղի մոլոկանները՝ Սեմյոնովները, Վատոլինները։ Այնուհետեւ քաղաքային հիվանդանոցից քիչ հեռու՝ գետափին, կրկին շվեյցարական թափանիվով ջրաղաց է կառուցվել, որը ժողովրդի մեջ հիշատակված է որպես «Հակոբ-քյոխվանց (Շահնազարյանների) ջրաղաց»։

19-րդ դարի 60-ական թվականներին դեպի Ղարաքիլիսա (Վանաձոր) ձգվող մայրուղուն կից գործել է գետի ուժով աշխատող գործարան։ Գործարանն ունեցել է նաեւ ջրաղաց ու ձիթան, այստեղ ստացել են մի քանի տեսակի ալյուր, ցորենի մանրուք, ձավարեղեն, տարբեր տեսակի բրինձ եւ բարձրորակ ձեթ։
1990-ականներից քաղաքում ստեղծվեցին նոր, արդիական սարքավորումներով կահավորված մասնավոր ալրաղացներ։ Դրանցից մեկը գտնվում էր միջպետական մայրուղու Դիլիջան-Իջեւան հատվածում՝ «Դիլիջան» ազգային պարկի վարչական շենքի մերձակայքում։ Այս ալրաղացի կենսագործունեությունը կարճ է տեւել։

2000-ականներին քաղաքի Թախտա թաղամասում գործել է «Հ. եւ Տ. Հակոբյաններ» ՍՊԸ-ին պատկանող ալրաղացը։

Սովխոզներ

1960-ական թվականներին Դիլիջանում գործել է երեք սովխոզ՝ Շամախյանի (Լենինի անվան), Կույբիշեւի եւ Գոշի։ Սովետական տնտեսությունների կամ սովխոզների (պետական ֆերմերային մեքենայացված տնտեսություն) ձեւավորումը Դիլիջանում սկսվել է 1930-ականներին՝ արդեն իսկ գործող Դիլիջանի, Շամախյանի, Գոշի, Կույբիշեւի կոլեկտիվ տնտեսությունների կամ կոլխոզների (գյուղական համայնքներում ընդունված կոլեկտիվ տնտեսվարման ձեւ) հիման վրա։

Շամախյանի կամ Լենինի անվան սովխոզը կազմավորվել է Դիլիջանի եւ Շամախյան գյուղի կոլտնտեսությունների բազայի հիման վրա։ Բացի անասնապահությունից, սովխոզը զբաղվում էր նաեւ ծխախոտի հումքի մշակմամբ։ Սակայն, որոշ ժամանակ անց ծխախոտագործության ճյուղը հանվեց, եւ մնաց միայն անասնապահությունը։ Սովխոզն ուներ նաեւ ջերմոցային տնտեսություն, որտեղ վարունգ ու լոլիկ էին աճեցնում։ Փոքր ծավալով զբաղվում էր նաեւ ճագարաբուծությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ։

Տնօրեններից հիշատակվում են Համլետ Թումանյանը, Կամո Թումանյանը, Գեղամ Արզումանյանը, Ռոմիկ Թամամյանը, Գագիկ Ղուկասյանը։

Կույբիշեւի (Հաղարծինի) սովխոզն ամենախոշորն էր։ Խորհրդային շրջանում Հաղարծինը հանրապետության ամենախոշոր գյուղերից էր (այժմ էլ մտնում է 20 խոշոր գյուղերի ցանկի մեջ), ուներ 6000 բնակիչ, նրանցից 1000-ն աշխատում էին սովխոզում։ Սովխոզի հիմնական գյուղարտադրության ճյուղերն էին անասնապահությունը եւ ծխախոտի հումքի աճեցումը։ Ծխախոտի հումքի մշակման համար սովխոզն ուներ խոշոր չորանոցներ, բնակիչները հումքը չորացնում էին նաեւ իրենց սեփական տների ձեղնահարկերում։ Հումքն այնքան շատ էր, որ հավաքելու համար սովորաբար սեպտեմբերին հետաձգում էին դպրոցների ամառային արձակուրդը՝ դպրոցականներին նույնպես մասնակից դարձնելով այդ գործին։ Անասնապահության հիմնական ուղղություններն էին՝ կովաբուծությունը, խոզաբուծությունը եւ ոչխարաբուծությունը։ Մինչեւ վերջերս պահպանվում էին անասնապահական խոշոր ֆերմաների շենքերը։

Բանջարաբոստանային կուլտուրաներից զբաղվում էին կարտոֆիլի մշակմամբ։ Հաղարծինի սովխոզում երկարամյա տնօրեններից հիշատակվում են Մաթեւոս Թամրազյանի, Բաբկեն Արզումանյանի, Ստյոպա Ոսկանյանի եւ այլ անուններ։ Գյուղը զարգացման նոր փուլ թեւակոխեց 1960-ական թվականներից ։ 1960-ին կառուցվեց միջնակարգ դպրոցի նոր շենքը, 1963 թվականին՝ սովխոզի նոր վարչական շենքը, մշակույթի տունը, գյուղի հիվանդանոցը, 1975-ին՝ հանրախանութը։ Նախախորհդային շրջանում գյուղը կրել է Ջարխեչ անվանումը, խորհրդային տարիներին վերանվանվել է Կույբիշեւ, իսկ անկախության տարիներին՝ Հաղարծին։

1974 թվականին որպես առանձին տնտեսական միավոր ձեւավորվել է Գոշի սովխոզը։ Սովխոզի հիմնական գյուղարտադրության ճյուղն է եղել անասնապահությունը՝ խոզաբուծություն, տավարաբուծություն, ոչխարաբուծություն։ Որոշ ժամանակ զբաղվել են նաեւ թռչնաբուծությամբ, ինչպես նաեւ բանջարաբոստանային կուլտուրաների եւ ծխախոտի հումքի մշակմամբ։ Գոշի սովխոզը եղել է Դիլիջանի տարածաշրջանի ամենափոքր տնտեսությունը, սեզոնում աշխատողների թիվը չի գերազանցել 200-ը։

1990-ականներին քաղաքամերձ սովխոզները լուծարվեցին։ Տեղի ունեցավ սեփականաշնորհման գործընթաց, եւ սեփականատերերի մի մասը սկսեց զբաղվել մասնավոր արտադրությամբ։

Դեղատուն

Դիլիջանում դեղատուն է գործել 1888-1889 թվականներից։ Վերջինս բացվել է լազարեթում՝ ռուսական զորամասին կից հիվանդանոցի տարածքում (այժմ՝ քաղաքային շուկայից վերեւ)։ Խորհրդային շրջանում գործել է քաղաքային դեղատունը, որը գտնվում էր ներկայիս ամֆիթատրոնի հարակից շենքում (այդ վայրում հետագայում գործել է քաղաքային Պիոներտունը)։ Դեղատունը խորհրդային կարգերի օրոք գործել է պետական հիմունքներով։ Դեղատան բացումը վկայում էր այն իրողության մասին, որ մեր հանրապետությունում առողջապահական համակարգը, ոլորտի մասնագետների կրթությունը եւ դեղագործության զարգացման ռազմավարությունը կայուն հիմքերի վրա էր։

1970-ականների վերջին կենտրոնական դեղատունը տեղափոխվել է քաղաքի կենտրոնում գտնվող բազմահարկ շենքին կից դեղատան տիպային շենք, որն ապահովված էր անհրաժեշտ բոլոր պայմաններով։ Դեղատան հին աշխատակիցներից ժողովուրդը հիշում է Տամարա (Տատյանա) Սերգեեւնայի, Պավել Կարպիչի, Լեւոն Խուդաբաշխյանի, Սուրիկ Սարգսյանի, Սոնյայի, Անթառամի ու Լյուդայի անունները։

Դեղատունն անհրաժեշտ դեղորայքն ստանում էր խորհրդային կենտրոնացված բազայից։ Վաճառքը դասակարգված էր ըստ խմբերի. մի խումբ դեղամիջոցներ ազատ, ըստ պահանջարկի էին վաճառվում, մյուս խմբի վաճառքի համար պահանջվում էր բժշկի նշանակմամբ դեղատոմս։ Բացի կենտրոնացված բազայից ստացված դեղամիջոցներից, դեղագետները պատրաստում էին հաճախակի օգտագործվող անհրաժեշտ դեղամիջոցներ՝ հիմնականում տեղական, մասամբ նաեւ բուսական հումքից։

Մինչեւ 1960-ականների կեսը դեղագործները, դեղագետներն ու լաբորանտները կրթություն էին ստանում մայրաքաղաքում։ 1961 թվականին բացվեց Դիլիջանի պետական բժշկական քոլեջը, որը մի քանի տարի անց որակյալ կադրեր տրամադրեց նաեւ դեղագործական ոլորտին։ 1970-ականներին քաղաքամերձ գյուղերը նույնպես ապահովված էին դեղատներով։

► Կարտոֆիլի բերքահավաք կոլխոզի դաշտում, 1947-48թթ.

► Ոչխարների սեզոնային խուզում Կույբիշեւ գյուղում

Տնտեսություն

◀ Խանութ Դիլիջանում, 1950-ականներ

Խանութներ

Դիլիջանում առեւտրի կազմակերպումն ընթացել է մի շարք պատմական փուլերով։ 19-րդ դարի առեւտրական անցուդարձի մասին հետաքրքիր մանրամասներ են պահպանված Մկրտիչ Գրիգորյանի «Դիլիջան» գրքում։ Ըստ հեղինակի՝ Դիլիջանում գործել է Միխո Ճավճավաձեին պատկանող հացի դուքանը (խանութը), Տիգրան Մեհրաբյանի եւ Սուրեն Մարտիրոսյանի խանութները։ Տեղաբնակները հիշատակում են նաեւ տիկին Զարնուշանի անունը. Դիլիջանի կենտրոնում նա մի քանի խանութ էր հիմնել։

Խորհրդային միության տարիներին՝ մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմը, առեւտրի կազմակերպվել է ըստ պետական տնտեսական համակարգի պահանջների։ Առեւտրի եւ հասարակական սննդի կառավարումն իրականացրել է սկզբում շրջկոոպը, ապա քաղառը, մի կարճ ժամանակահատված էլ՝ կուրորտառը։ Սկսած նախորդ դարի 30-ական թվականներից, խիստ սահմանափակում եւ արգելք է դրվել ազատ առեւտրի վրա։ Ամբողջ շրջանառությունը վերահսկել են պետական մարմինները։

Մինչպատերազմյան տարիներին Դիլիջանի խանութներում առկա էր հիմնականում կենսական անհրաժեշտության սահմանափակ տեսականի։

Ներկայիս «Հին Դիլիջան» պատմամշակութային համալիրին հարող տարածքում՝ Մյասնիկյան փողոցի երկայնքով, հետպատերազմյան տարիներին գործել են կտորեղենի, կոշկեղենի, ռադիոտեխնիկայի, սպորտային ապրանքների, մանկական հագուստի, ոսկու, ապառիկ տրվող ապրանքների խանութներ։ Նախկին հրապարակում (քաղաքային լճի շրջակայքում) եղել է նաեւ կոմիսիոն խանութ, որտեղ վերավաճառվել են նոր կամ օգտագործված ապրանքներ։ Քանակով գերակշռել են մթերային խանութները, որոնք, սփռված լինելով քաղաքի տարբեր թաղամասերում, հաճախ հիշատակվում էին իրենց հմուտ վաճառողների անուններով՝ «Սոկրատի խանութ», «Սիրուշի խանութ», «Գոլովինոյի խաչիկի խանութ» եւ այլն։ 1950-ականների վերջերից մի նորույթ մտավ առեւտրի մեջ. թաղամասերում տեղադրվեցին մետաղյա փոքրիկ առեւտրակետեր (лавки), որտեղ վաճառվում էին արագ սպառման ապրանքներ՝ ծխախոտ, պահածոներ, ըմպելիքներ եւ այլ մթերքներ։

1970-ականներից , քաղաքաշինական բուռն վերելքին զուգընթաց, խանութների ցանցն ընդլայնվեց։ 1973 թվականին նորակառույց Ձրիողեր թաղամասում ստեղծվեց առաջին հանրախանութը՝ Ունիվերմագը։ 1977 թվականին շահագործման հանձնվեց կենտրոնական հանրախանութը, որն ամբողջացրեց քաղաքի կենտրոնական ճարտարապետական ձեւավորումը։ Նախորդ դարի 70-ականների վերջին հանրախանութ կառուցվեց նաեւ Հաղարծին գյուղում, 80-ականների սկզբին՝ Պապանինո թաղամասում սկսեց գործել Ունիվերսամը։ Գրեթե բոլոր հանրախանութներն ունեին նույնատիպ ճարտարապետական ոճ. ընդարձակ ուղղանկյան տեսքով մի քանի հարկանի շենք՝ ապակեպատ ճակատամասով։

Վաճառքի կազմակերպման առումով հանրախանութների պայմանները նկատելիորեն հարմարավետ էին։ Ապրանքները խմբավորված էին ըստ բաժինների, որոնց սպասարկումն ապահովում էին համապատասխան որակավորում ունեցող ապրանքագետներն ու վաճառողները։ Հանրախանութների հիմնական բաժիններն էին՝ գործվածքներ, վարագույրներ, գորգեր, կոշկեղեն, ներքնազգեստ, հագուստ եւ տրիկոտաժ, զարդեր եւ օծանելիք, սպորտային ապրանքներ, կահույք, էլեկտրատեխնիկա, խաղալիքներ։ Հանրախանութները բնակչության համար կարծես դարձել էին հասարակական վայրեր, ուր այցելում էին ոչ միայն այդ օրվա համար անհրաժեշտ ապրանքներ գնելու, այլեւ լուրեր ստանալու առաջիկայում արտերկրներից ներմուծվող նվազ քանակությամբ ապրանքների վերաբերյալ եւ դրանց ձեռքբերման համար նախապես հերթերում գրանցվելու նպատակով։ Առհասարակ խորհրդային առեւտրի հետ կապված ամենախոշոր խնդիրներն անհրաժեշտ ապրանքների ակնհայտ անբավարարությունն ու դրանից բխող հերթերն էին։

Շատ արագ իրացվող ապրանքների ցանկում էին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից ներկրվող «Բաբաեւսկի» (Бабаевский) շոկոլադը, «Կրասնայա Մասկվա» (Красная Москва) օծանելիքը, «Շիպր» (Шипр) օդեկոլոնը, «Ձինտարս» (Dzintars) լատվիական օծանելիքը, «Տրի սլանա» (Три Слона) թեյը,«Էլեկտրոնիկա» (Электроника) ապրանքանիշի արտադրանքը, «Մինսկ» (Минск) սառնարանները, «Պալյոտ» (Полёт) ժամացույցները, «Ստալիչնայա» (Столичная) օղին, «Կազբեկ» (Казбек), «Բելամորկանալ» (Беломорканал) ծխախոտի տեսակները եւ այլն։ Արտերկրից ներմուծվող ապրանքները սահմանափակ էին, վաճառվում էին միայն ծանոթներին կամ «տակից» (առանց խանութում ցուցադրության)՝ հավելավճարով։ Բնակչությունն, իհարկե, ձգտում էր զանազանության եւ հաճախ գումար չէր խնայում որակյալ ապրանք ձեռք բերելու համար։ Ձգեստապահարանները թարմացնելու ձգտում ունեցողները հաճախ գնումներ կատարելու էին մեկնում Մոսկվա. այնտեղ մեծ ընտրության հնարավորություն կար՝ բուլղարական «Սոֆիա», լեհական «Վանդա», հնդկական «Գանգ», գերմանական «Լայպցիգ», չեխական «Պրագա», հարավսլավական «Բելգրադ», հունգարական «Բուխարեստ» հանրախանութներից։ Տեղում պարբերաբար հայտնվող ճապոնական «Տրի սլանա» (Три Слона) անձրեւանոցները կամ լեհական «Բըիծ մոժետ» (Быть может) օծանելիքը ուրախանալու եւ հպարտանալու առիթ էին դառնում։ Եթե քաղաքացիները սեփական նախաձեռնությամբ ապրանք էին վաճառում, դա դիտվում էր որպես շահադիտություն, եւ իրավապահ մարմինները կանխարգելիչ գործողություններ էին ձեռնարկում։

1980 թվականին քաղաքում եւ քաղաքամերձ գյուղերում գործում էր 122 խանութ, դրանցից 76-ը՝ մթերային։ Կառավարության որոշմամբ, 1981 թվականին պտուղ-բանջարեղենի վաճառքն առանձնացվեց քաղաքի կառավարումից եւ տրվեց այդ նպատակով ստեղծված «Պտուղ-բանջարեղենի տնտեսություն» կոչվող պետական առեւտրային կազմակերպությանը։ Լայնորեն տարածվեցին ցանցավոր խանութները (сетки), որոնց միջոցով իրացվում էին Հայաստանի գյուղատնտեսության բանջարաբոստանային տնտեսության՝ սովխոզտնտեսությունների, Արարատյան դաշտի բերքն ու բարիքը՝ լոլիկ, խաղող, ձմերուկ, նաեւ սահմանափակ քանակությամբ ներմուծված ցիտրուսային մրգերը՝ նարինջ, արքայանարինջ։ Բնակչությունը վճարունակ էր, գները՝ մատչելի։

Այդ շրջանում գործում էին նաեւ «վոենտորգի» եւ նոր ձեւավորված «կոոպտորգի» խանութները, որոնք խորհրդային պետական առեւտրի համակարգի ենթակայության ստորաբաժանումներ էին։ 1990-ականներից այդ համակարգը խարխլվեց, եւ տարիներ անց ձեւավորվեցին նոր, ազատ ձեռնարկատիրական առեւտրի մոդելներ։

Դիլիջանի հին դեղատունը, 1955 թ.

Հյուրանոց

19-րդ դարի կեսից Դիլիջանի բնակլիմակայական հարուստ պաշարները ծառայել են ողջ Անդրկովկասին եւ Ռուսաստանին՝ թե՛ հետազոտական աշխատանքների իրականացման, թե՛առողջապահական նպատակներով։ Ամռան ամիսներին Բաքվի, Թիֆլիսի մեծահարուստները մշտապես ժամանում էին այս գողտրիկ անկյուն՝ իրենց հանգիստն ու կազդուրումը կազմակերպելու համար։ Չնաշխարհիկ բնությանը հնարավորինս մոտ լինելու համար ամառանոցներ էին կառուցում կամ հյուրընկալվում էին մասնավոր տներում։

Խորհրդային շրջանում անհրաժեշտություն ծագեց քաղաքի ենթակառուցվածքներում ունենալ առանձին հյուրանոց։ Առաջին հյուրանոցը կառուցվել է 1926 թվականին։ Հետագայում Դիլիջանի ներկայիս երկրագիտական թանգարանի հին շենքն էր, գործել է մինչեւ 1960-ականները։

1964 թվականին շահագործման է հանձնվել քաղաքային լճի հարակից տարածքում կառուցված տիպային չորսհարկանի «Դիլիջան» հյուրանոցը (ճարտարապետ՝ Հրանտ Աչյան) եւ գործել է մինչեւ 2003 թվականը։ Հյուրանոցը կարող էր հյուրընկալել շուրջ 450 հանգստացողի։ Հիմնական հյուրանոցային համարները սովորական մեկ կամ երկտեղանոց էին։ Յուրաքանչյուր հարկում

կային նաեւ բարձրակարգ՝ լյուքս համարներ։ Սովորական համարների օրական արժեքն էր 2 ռուբլի 50 կոպեկ, լյուքս համարներինը՝ 5 ռուբլի, ներկա դրամական արժույթով, համապատասխանաբար՝ 2500 եւ 5000 ՀՀ դրամ։

Հյուրանոցն աշխատում էր մեծ ծանրաբեռնվածությամբ հատկապես ամռան սեզոնին, երբ ընդունում էր նաեւ ճամբարականների եւ մարզական միջոցառումների մասնակիցների։ Հյուրախաղերի նպատակով Դիլիջան են այցելել եւ հյուրանոցում հյուրընկալվել Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական, Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի եւ Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնների աշխատակիցները, երաժշտական բազմաթիվ համույթներ ոչ միայն Հայաստանից, այլեւ ԽՍՀՄ հանրապետություններից։ Դիլիջանցիները ջերմ հիշողություններ են պահպանել հանրապետության ժողովրդական արտիստ Օֆելյա Համբարձումյանի, կատակերգակ դերասան Կարպ Խաչվանքյանի եւ շատ այլ նշանավոր արվեստի գործիչների մասին։

Հյուրանոցում գործող ռեստորանի երկրորդ հարկում բացօթյա սրահ կար, որը ոչ միայն հանգստացողների, նաեւ տեղացիների սիրելի ժամանցային վայրերից էր։ Այստեղ երեկոյան ժամերին մշտապես երաժշտություն էր հնչում։ Ներկաները հաճույքով ունկնդրում էին սիրված երգիչներ Սուրիկ Սարգսյանի եւ Յուրա Հարությունյանի կատարումները։

Հյուրանոցի առաջին վարիչը (տնօրենը) Մարուսյա Եսայանն էր։ Երկար տարիներ վարիչ է աշխատել նաեւ Ժենյա Ուլիխանյանը։ Շենքի վերակառուցման շրջանում վարիչի պարտականությունները կատարել է Սինար Մանուկյանը։ Հյուրանոցի երկարամյա աշխատակիցներից էին Լարիսա Դավթյանն ու Ասյա Բրուտյանը (ադմինիստրատորներ), Ժենյա Մանուկյանը, Սիրուշ Կոծիկյանը, Հասմիկ Ասատրյանը, Մանյա Սանթրոսյանը եւ ուրիշներ։

2003 թվականին արդեն մասնավորեցված հյուրանոցի շենքում սկսվեցին հիմնարար վերակառուցման աշխատանքներ։ Շենքը կտրուկ փոփոխությունների ենթարկվեց, բայց ծրագիրն անավարտ մնաց, եւ հյուրանոցն այդպես էլ չվերականգնվեց։

Ջրհողերի հանրախանութի սպասքի բաժինը

Ջրհողեր թաղամասի հանրախանութը, 1970-ականներ

Ճկած կահույքի արտադրամասը, 20-րդ դար

Ճաշարաններ

Խորհրդային միության տարիներին սննդի արդյունաբերության զարգացումն ու կազմակերպումը աստիճանաբար ստացավ նոր որակ։ Այս ոլորտում կյանքի կոչվեցին մի շարք նորամուծություններ. օրինակ՝ ունիվերմագ եւ ունիվերսամ հանրախանութների ստեղծումը, պաղպաղակի լայնածավալ արտադրությունը, մթերքի արագ սառեցումը, տոմատի հյութի, եգիպտացորենի հատիկների պահածոյի, չորահացի, կոտլետների եւ այլ մթերքների մուտքը հանրային սննդի կետեր։

Հասարակական սննդի վայրերում նույնպես գործում էին խորհրդային գաղափարախոսության առանձնահատուկ չափանիշներ։ Գերակա էին հստակությունը, պարզությունն ու հավելյալ ճոխության մերժումը։

Խորհրդային տարիների սկզբից եւ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մեծ ծավալով թափ առած ճաշարանների, բուֆետների, սրճարանների, ռեստորանների եւ այլ տեսակի հանրային սննդի վայրերի հիմնման առաջնային նպատակը բանվոր

դասակարգին առողջ եւ համեղ սննդի ապահովումն էր։ Բոլոր սննդի կետերում միօրինակ նորմերով կազմվում էր այնպիսի կերակրացանկ, որը պետք է բավարարեր օրվա համար անհրաժեշտ կալորիաները։ Բոլոր գործարանները, ձեռնարկություններն ու հաստատություններն ապահովված էին ճաշարաններով, բուֆետներով, որտեղ ընդմիջման ժամին ճաշում էին աշխատակիցները։ Յուրաքանչյուրը վճարում էր 70 կոպեկից մինչեւ 1 ռուբլի։ Ուսումնական հաստատությունների գնացուցակն ավելի էժան էր։

Հետպատերազմյան տարիներին Դիլիջանում գործող ճաշարաններից հայտնի էին Վարսիկի ճաշարանը, Լետնի ճաշարանը, այսպես կոչված՝ Քյարփինջխանի ճաշարանը (աղյուսի գործարանի)։ Քաղաքի կենտրոնում բավականին աշխույժ հասարակական սննդի վայր է եղել Ինվալիդկոոպի ճաշարանը։ Ավելի ուշ սկսել է գործել «Զրհողերի ճաշարանը», որը ոգելից խմիչքի սիրահարների հավաքատեղին էր (սրամիտներն ասում էին՝ անատոմիկ), «Լճափի ճաշարանը», «Տուրբազայի սրճարանը» եւ Դիլիջան-Երեւան մայրուղու՝ Կամոյի փողոցի վրա գտնվող թեյարանը՝ «Չայնին»։

Ռեստորաններից ամենահայտնին «Գարունն» էր, որը հետագայում վերանվանվեց «Քարավան» (բնակչությունն ավելի հաճախ նաեւ «Կեմպինգ» էր անվանում), «Հաղարծին» ռեստորանը (նաեւ կոչում էին Սասնա ռեստորան) եւ «Դիլիջան» հյուրանոցի ռեստորանը։ Ամռան ամիսներին հյուրանոցի ռեստորանի վերեւի բացօթյա հարկում մշտապես հնչում էր հայկական էստրադային եւ ժողովրդական երաժշտություն։ Սիրված երգիչներ Սուրիկ Սարգսյանը եւ Յուրա Հարությունյանը հիացնում էին հյուրերին իրենց կատարումներով։



◀ «Իմպուլս» գործարանի ճաշարանի խոհարար Լիպարիտ Ոսկանյանը

Մեղվաբուծություն

«Հատուկ տարածքից՝ հատուկ մեղր». տարիներ շարունակ շուկայում այդպես են բնորոշել դիլիջանյան մեղրը։ Դիլիջանում եւ գյուղական բնակավայրերում մեղվապահության հնագույն ավանդույթների ամրապնդումը պայմանավորված էր տեղանքի բարենպաստ բնակլիմայական պայմաններով, հարուստ բնությամբ, ծաղկառատ բացատներով։

Ամռան սեզոնին մեղվապահներն իրենց այգիներից փեթակները տեղափոխել են ծաղկառատ բացատներ՝ Արեւահովիտ (Անագյունեյ), Մեյդան հանդամասեր, Հաղարծինի վանքի շրջակա տարածքներ, ինչի շնորհիվ ստացված մեղրի ծավալն ու որակն ակնհայտորեն տարբերվել են այլ վայրերի մեղրից։

Հիշատակվում են դիլիջանցի ճանաչված մեղվապահների անուններ, որոնք իրենց հարուստ փորձը սիրով փոխանցել են մեղվապահությամբ զբաղվելու ցանկություն հայտնողներին։ Հիշենք նրանց. Բախշի Ուլիխանյանը, Սուրեն Դավթյանը, Աշոտ Ուլիխանյանը, Հենրիկ Ուլիխանյանը՝ «Հենին» Դիլիջանից, Կամո Գուլինյանը՝ Թեղուտից, Ռաշիդ Դավթյանը՝ Գոշից եւ ուրիշներ։ Այս փորձառու մեղվապահները խորապես ուսումնասիրել էին ու գիտեին իրենց գործի բոլոր նրբությունները։ Մեղրից բացի, նրանցից շատերը հմտորեն մշակել եւ ստացել են նաեւ զանազան մեղվաբուծական մթերքներ՝ ակնամոմ, մոմաթերթ եւ այլն։ Հիմնազուրկ չէ, որ հմուտ մեղվապահի մեղրը համարվել է դեղամիջոց։ Փորձառու վարպետների համար իրենց ստացած ապրանքը եղել է նաեւ եկամտի աղբյուր։ Դիլիջանյան մեղրի քանակը խորհրդային տարիներին բավարարել է պահանջարկը եւ առեւտրի նպատակով հանձնվել պետկոմին, որն էլ կազմակերպել է առեւտուրը։ Շնորհիվ իր որակական բարձր հատկանիշների, դիլիջանյան մեղրը մեծ պահանջարկ ուներ ոչ միայն հանրապետությունում, այլեւ նրա սահմաններից դուրս։

Աղյուսի գործարան

Կարմիր կղմինդրն առանձնահատուկ ու առանցքային տարր է դիլիջանյան ճարտարապետական ոճի մեջ, որն սկսել է տարածվել 19-րդ դարավերջին ամառանոցների եւ մասնավոր տների կառուցման շրջանում։

Դեռեւս նախախորհրդային շրջանում Դիլիջանում գործել է աղյուսի գործարան, որը եղել այս տարածաշրջանի աղյուսի եւ կղմինդրի հիմնական մատակարարը։ Գործարանը գտնվում էր Աղստեւի՝ իր Բլդան վտակին միանալու հատվածում (ներկայիս «UWC Դիլիջան» միջազգային դպրոցի մերձակայքում)։ Երկար տարիներ տեղի բնակչությունը գործարանի մասին խոսելիս օգտագործել է «քյարփինջխանա» բառը։

Գործարանն աշխատել է տեղական հումքով, արտադրության մեջ օգտագործվել է որակյալ կավ։ Արտադրանքի տեսականին ներառել է աղյուս եւ կղմինդր։ Նկատելիորեն մեծ է եղել արտադրանքի ծավալը, քանի որ ժամանակին շինարարության մեջ աղյուսը եւ կղմինդրը մեծ պահանջարկ ունեցող շինանյութեր էին։ Երկար ժամանակ տանիքները գերազանցապես տեղական կղմինդրով էին ծածկվում։ Հետագայում զուգահեռաբար սկսեցին գործածվել նաեւ շիֆերն ու թիթեղը։

Պահանջարկի նվազման հետեւանքով աղյուսի գործարանը ժամանակի ընթացքում՝ 1970-ականներին դադարեց գործել։

1990-ական թվականներին Հաղարծին գյուղում շահագործման հանձնվեց կղմինդրի գործարան, որի հիմնադրման նպատակներից էր դիլիջանյան ոճին բնորոշ կղմինդրի լայնորեն կիրառումը քաղաքի ինքնատիպ ճարատարապետության մեջ։ Գործարանը մեծ արտադրանք էր ապահովում, սակայն որոշ ժամանակ անց դադարեց գործել։

Դիլիջանի աղյուսի գործարանը, 1930-ականներ

Կահույքի գործարան

Կահույքի արտադրությունը Դիլիջանում հարյուրամյակների պատմություն ունի։ Դեռեւս 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին Դիլիջանում վանեցի վարպետներին պատկանող արհեստանոցներում արտադրվել են վիեննական աթոռներ։ Իսկ ահա 1918 թվականին Գոլովինո գյուղի Ագարակ կոչվող տարածքում գործել է աթոռի արտադրամաս (Գոլովինոն այժմ Դիլիջանի թաղամասերից է)։ Արտադրամասը հիմնադրել է իշխանուհի Մարիամ Թումանյանը՝ նպատակ ունենալով Դիլիջանի մանկատան երեխաներին արհեստներ սովորեցնել (Մ. Գրիգորյան, «Դիլիջան», Երեւան, Հայաստան, 1989 թ.)։ 1921 թվականին աթոռի արտադրամասը տեղափոխվել եւ շարունակել է գործել ներկայիս քաղաքային լճի տարածքում։

1923 թվականին Դիլիջանի «Դավթանց» թաղամասում՝ հացի փռի հարեւանությամբ, բացվել է «Նոր կյանք» կահույքի արտելը, որտեղ տեղական հումքից աթոռներ են արտադրել։ Արտելի տարածքում գործել է նաեւ կահույքի առանձին արտադրամաս, որտեղ արտադրվել են պահարաններ, կենցաղային իրեր, իսկ հետագայում նույնիսկ ընդունվել են պատվերներ։

Առաջին տարիներին արտելն ուներ 60 աշխատակից։ Ուշագրավ փաստ է, որ այս փոքր ձեռնարկությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին աշխատել է կրկնապատիկ աշխատաժամով եւ բանակի համար արտադրել է դահուկներ։ Հետագայում արտադրամասի հնարավորություններն ընդլայնվել են։ 1956 թվականին

կահույքի արտելը ձեռք է բերել ուղղահայաց սղոցային հաստոց։ 1958 թվականից արտադրամասը դարձել է ճկած կահույքի ֆաբրիկա՝ 130 աշխատողներով, օրական արտադրել է 1200 աթոռ։ Արտադրանքը հիմնականում իրացվել է Հայաստանում եւ արտահանվել ԽՍՀՄ հանրապետություններ։

Կահույքի ֆաբրիկան մեծ դերակատարում է ունեցել Դիլիջան քաղաքի տնտեսական կյանքում։ Բացի աշխատատեղերի ապահովումից, ֆաբրիկան նաեւ որակյալ կադրերի պատրաստման դարբնոց է եղել։ Այստեղ աշխատել են բարձրակարգ վարպետներ, իսկ քաղաքի բազմաթիվ երիտասարդներ ընտրել են կահույքագործի մասնագիտությունը։

Խորհրդային տարիներին նշանակալից իրադարձությունների, շքահանդեսների ժամանակ արտադրական կոլեկտիվները, նրանց թվում՝ նաեւ կահույքագործները, դուրս էին գալիս շքերթի եւ տոնական ձեւավորված բեռնատարի թափքից ցուցադրում իրենց արտադրանքի ստեղծման գործընթացը եւ պատրաստի արտադրանքը։

Կահույքի ֆաբրիկան աշխատել է մինչեւ 2000-ականների սկիզբը։ Մինչ օրս տեղացիները չեն մոռացել իրենց քաղաքում գործող, ինչպես իրենք են ասում՝ արտելը կամ աթոռի գործարանը։

Հանքային ջրերի գործարան

«Դիլիջան» ազգային պարկի տարածքը հարուստ է հանքային աղբյուրներով։ Տեղացիներն այդ ակունքները կոչում են հետեւյալ տեղանուններով՝ Բլդան, Ֆրոլովա բալկա, Ֆիոլետովո, Պուճուր Դիլի, Հաղարծինի ձոր։ 19-րդ դարի վերջից, երբ Դիլիջանն արդեն որպես առողջարանային քաղաք մեծ համբավ էր վայելում, մի շարք անվանի գիտնականներ ժամանակ առ ժամանակ հետազոտել են դիլիջանյան հանքային ջրերի բաղադրությունն ու օգտակարությունը։

Դեռեւս 1877-78 թվականներին Դիլիջանում տեղակայված ռուսական լազարեթում բուժվող զինվորների արագ ապաքինման համար բժիշկը նշանակել էր տեղի հանքային ջրի ընդունում, որը հենց ակունքից տակառներով տեղափոխվել եւ մատակարարվել է հիվանդներին (բժիշկը ջուրն անվանել է «Дилижанки»)։ 1907 եւ 1914 թվականներին Ի. Կուրցիսը, 1915 թվականին՝ Մեշկովը, հետազոտել են Բլդան գետահովտի աղբյուրները, իսկ խորհրդային տարիներին Դիլիջանի հանքային աղբյուրներն ուսումնասիրել է Հայաստանի կուրորտոլոգիայի ինստիտուտը։ 1932 թվականին Ա. Դեմյոխինի գլխավորությամբ կատարվել են հորատման եւ հիդրոերկրաբանական աշխատանքներ, որոնց շնորհիվ լիարժեք պարզվել է հանքային ջրերի ֆիզիկական եւ քիմիական կառուցվածքը։

Պրոֆեսոր Վ. Ալեքսանդրովը գրել է. «Դիլիջանի խմբի Բլդանչայի ջրերն իրենց որակով չափազանց հետաքրքիր եւ հազվադեպ ջրեր են մեր Միության մեջ։ Դրանք նման են դաղստանյան Ռիգալ-Սու, հնագույն Բորժոմի, ինչպես նաեւ ֆրանսիական Վիշի կուրորտ տարածքների ջրերին»։

Խոսքը հիմնականում վերաբերում է N2 հորատաղբյուրին, քանի որ սա միակն է, որ օժտված է մեծ ճնշմամբ, եւ ջուրն ինքնաբուխ է հորդում։ Այս աղբյուրը գտնվում է ծովի մակարդակից 1390 մ բարձրության եւ 40 մ խորության վրա՝ Բլդանի ձախ ափին։ Ջրի հոսքի արագությունը 0,8 լ/վրկ է։ Այս հանքային ջրի քիմիական բաղադրությունն աղբյուրի գոյության ողջ ընթացքում չի փոխվել։ Ինչ որակի ու բաղադրության ջուր խմում էին 20-րդ դարի սկզբին, խմում ենք նաեւ այժմ։ Հանքային ջուրը պարունակում է բոլոր անհրաժեշտ աղերը, բայց դրանց առկայությունն աղի չի դարձնում ջուրը։ Ջրի ջերմաստիճանը 11,2 աստիճան է, ջուրը համեղ է եւ զուլալ, պարունակում է ածխաթթու, երկաթ-հիդրոկարբոնատ-քլորիդ-նատրիում-կալցիումի միկրոտարրեր, որոնք հավասարակշռված են, իսկ պարունակությունը թույլատրելի է միջազգային բոլոր ստանդարտներով։ Օգտակար է եւ բուժիչ աղեստամոքսային տրակտի, լյարդի, լեղապարկի հիվանդությունների համակցված բուժման համար։ Ցածր հանքայնացման, հաճելի, նուրբ համի շնորհիվ խորհուրդ է տրվում նաեւ ամենօրյա օգտագործման համար։ Թունավոր տարրերի պարունակությունն ընդունելի սահմաններում է։

«Դիլիջան» հանքային ջուրը խորհրդային տարիներին արտահանվել է բազմաթիվ հանրապետություններ, իսկ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Մոսկվա, Վրաստան, Արաբական Միացյալ Էմիրություններ, ԱՄՆ։ Արմատներով Ախալցխայից դիլիջանաբնակ պրոֆեսոր, բժշկական գիտությունների դոկտոր Արշավիր Թորոսյանը մանրազնին ուսումնասիրել էր դիլիջանյան հանքային ջրերի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա եւ իր բուժական մեթոդով հաջողությամբ կիրառում էր հիվանդներին բուժելիս։ Օրինակ՝ «Լեռնային Հայաստան» առողջարանում ձայնալարերի կազդուրման համար կիրառում էին հանքային ջրով ինհալացիա։

Դեռեւս 1937 թվականից Բլդան գետի հովտում, հանքային ջրի ակունքի մոտ կազմակերպվել է ջրի վաճառք։ Դրա կարիքն ունեին հիվանդանոցներն ու առողջարանները։ Իսկ շշալցված ջրի լայնածավալ արտադրությունը սկիզբ է առել 1949 թվականից։

1947 թվականի ամռանը սկսվել է ներկայիս Վանաձոր քաղաք տանող մայրուղուց աջ գտնվող 2 կիլոմետր երկարությամբ ճանապարհի շինարարությունը։ Դա ապագա հանքային ջրերի գործարան տանող ճանապարհն էր։ Հիմնադրվել է կիսաավտոմատացված հոսքագծով գործարան, որը 1949 թվականին տվել է իր առաջին արտադրանքը՝ «Դիլիջան» շշալցված հանքային ջուրը. սկզբնական փուլում տարեկան արտադրվում էր մոտ 3 միլիոն շիշ։ Տարիների ընթացքում այդ թիվն աճել է մի քանի անգամ։ 1960-ականներին պոմպերի տեղադրումից հետո տարեկան կտրվածքով Դիլիջանից խորհրդային հանրապետություններ է արտահանվել 8 միլիոն 500 հազար շիշ հանքային ջուր։

Գործարանը շարունակել է աշխատել նաեւ ԽՍՀՄ փլուզումից հետո։ 1995 թվականին սեփականաշնորհվել ու դարձել է բաց բաժնետիրական ընկերություն։ Այդ տարիներին գործարանը սահմանափակ քանակով արտահանել է իր արտադրանքը Մոսկվա եւ ԱՄՆ, սակայն հոսքագծերի եւ շենքային պայմանների ընդհանուր մաշվածություն էր նկատվում, եւ սեփականատերերը որոշում ընդունեցին հիմնովին վերանորոգման ու վերակառուցման աշխատանքներ սկսել։ Գրեթե 3 տարի՝ 2006-2009 թվականներին, գործարանի գործունեությունը դադարեցված էր։ Այդ ժամանակահատվածում գործարանն արդիականացվել է բոլոր ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին համապատասխան։ Կառուցվել է նաեւ նոր մասնաշենք, ջրի աղբյուրի նոր շենք, հին հոսքագծերը փոխարինվել են ժամանակակից բարձրորակ եվրոպական արտադրանքի ավտոմատացված հոսքագծերով, որոնք հնարավորություն են տալիս արտադրելու ե՛ւ հանքային, ե՛ւ աղբյուրի ջուր՝ ապակե եւ պլաստիկ տարաներով։ Մեկ ժամում այստեղ շշալցվում է 0.5 լիտր տարողությամբ ապակե տարայով 8000 շիշ եւ պլաստիկ տարայով 1 լիտր տարողությամբ 5400 շիշ։

Այժմ գործարանն ունի շուրջ 30 աշխատող։

Դիլիջանի ֆաբրիկա

Դիլիջանում գորգագործության ավանդույթը պահպանվել եւ մեզ է հասել նախորդ հարյուրամյակներից։ Տեղում ստեղծվող գորգերն ունեցել են ավանդական հայկական գորգերին բնորոշ զարդանախշեր ու գույներ։ Թե՛ ձեռագործ, թե՛ հետագայում մեքենագործ գորգերն օգտագործվել են որպես պատի դեկորներ՝ տան ջերմությունը պահպանելու համար եւ թախտերը, բազկաթոռները կամ հատակը ծածկելու նպատակով։ Հատկապես նախընտրելի են եղել դեղնանկյուն (դեղնաքյունջ՝ չորս դեղին անկյուններով) գորգերը։ Ընտանեկան նշանակալի արարողությունների ժամանակ ընդունված էր գորգի մոտ նկարվել, ինչից կարելի է եզրահանգել, որ գորգը դիտվել է նաեւ որպես բարեկեցության եւ ընտանեկան ջերմության խորհրդանիշ։ Դիլիջանում զարգացած էր նաեւ կարպետագործությունը։ Հայտնի էր հատկապես «Դիլիջանյան կարպետը», որի որակական հատկանիշները բարձր են գնահատել մասնագետները։

1963 թվականին շահագործման է հանձնվել Դիլիջանի ֆաբրիկայի նորակառույց երկհարկանի շենքը։ Առաջին արտադրամասը գորգագործականն էր։ Տնային պայմաններում աշխատող մոտ 30 գորգագործներ սկսեցին աշխատել արտադրամասում։ Տեղում գործվող գորգերի հումքը տեղական էր, իսկ պատրաստի գորգերն արտահանվում էին ըստ պետպատվերի։ Գորգի արտադրամասի վերաբերյալ անդրադարձ կա «Դիլիջան» թերթի 1963 թվականի 8-րդ համարում։ Ըստ հրապարակած հոդվածի՝ աշխատողները բարձր են գնահատել անհրաժեշտ սարքավորումներով եւ ընդարձակ արտադրական հնարավորություններով հագեցած իրենց նոր աշխատավայրը։ Ուրախ եւ ոգեշնչված են աշխատել եւ գերակատարել են պետական պլանի ցուցանիշները։

Ցավոք, գորգերի արտադրամասի աշխատանքային կյանքը կարճ է տեւել։ 1965 թվականին պետական որոշում է ընդունվել գորգի արտադրամասը փոխարինել կարի արտադրամասով։ Գորգի փոքր արտադրամասը հետզհետե վերածվել է Կիրովականի (Վանաձորի) տրիկոտաժի ֆաբրիկայի մասնաճյուղի՝

▲ Հանքային ջրերի գործարանի հին շենքը

իր առանձին կարող, գործող, կտորների մշակման արտադրամասերով եւ ձեւանոցով։ Բոլոր աշխատակիցները գործուղվել են Կիրովական վերապատրաստվելու։ Մինչեւ կադրերի վերապատրաստումը, տեղում հոգացել են նոր տեխնիկական հագեցածության խնդիրը։ Գործող եւ կարող մեքենաները ներմուծել են Ռումինիայից, Գերմանիայից, Ռուսաստանից։
1982 թվականին ֆաբրիկան ձեռք է բերել «Կոտտոն» ավտոմատացված գործող մեքենաներ, որոնք բարձր արտադրողական ցուցանիշներ էին ապահովում. մեկ ժամում գործում էին 12 սվիտեր։ Արտադրանքն աչքի է զարնել բարձր որակական ցուցանիշներով եւ արտահանվել է ԽՍՀՄ հանրապետություններ։ Արտադրվել են աշխատանքային եւ մարզական հագուստ, տաք վերնազգեստներ, մանկական հագուստ եւ այլն։ Բազմապատկվել է նաեւ աշխատողների թիվը՝ հասնելով մոտ 700-ի, մեծ մասը՝ կանայք։
Եղել են տարիներ, երբ ֆաբրիկան աշխատել է երկու հերթափոխով՝ մինչեւ ուշ գիշեր։ Ֆաբրիկայի գործունեության ընդլայնման նպատակով մասնաճյուղ է բացվել նաեւ Կրասնոսելսկում։

Տրիկոտաժի ֆաբրիկան 1990-ականների սկզբին կրճատել է իր արտադրական ծավալները։ 1990-ականների վերջին աշխատել է մասամբ, այնուհետեւ՝ փակվել է։

Արժե հիշատակել նաեւ, որ վերջին տասնամյակներում Դիլիջանում կազմակերպվում էին գորգերի փառատոններ, որոնց մասնակցել են ինչպես Հայաստանի մարզերի եւ մայրաքաղաքի, այնպես էլ Արցախի պատվիրակությունները։ Հետագայում փառատոնը դարձավ ավանդական եւ 2016 թվականին վերանվանվեց «Մշակութային վերածնունդ»։

◀ Հանքային N2 հորատաղբյուրի շահագործումը

◀ Հանքային ջրերի գործարանում



▶ Կարի ֆաբրիկայի առաջին (գորգագործական) արտադրամասը

Կաթի գործարան

Մինչեւ կաթի գործարանի հիմնումը Դիլիջանում գործել է կաթնամթերքի պատրաստման «Յուղարդ» անվանմամբ արտադրամաս։ Քաղաքի կենտրոնում էր՝ փոստի մերձակայքում (Ամիրխանյանների թաղամասում)։ Քաղաքի առանձին հատվածներում կարելի էր հանդիպել նաեւ անհատ արտադրողների։ Օրինակ՝ ամֆիթատրոնի դիմացի մայթին աշխատել է վարպետ Արսենը. նրա արտադրած «գլուխ պանիրը» մեծ պահանջարկ է ունեցել Դիլիջանում։

1960-ականների սկզբին Զրհողեր թաղամասում կառուցվել է կաթի նոր գործարան։ Տարբեր ժամանակահատվածներում տնօրենները եղել են Ղուկասյան Միշան (Միխայիլ Առուստամիչը), Խորեն Սաֆարյանը, Մելսիկ Ղուկասյանը, Սամվել Աքուլյանը։ Գործարանն ուներ շուրջ երեք տասնյակ աշխատակից, որոնց թիվն ամռանը կրկնապատկվում էր։

Բացի Դիլիջանի քաղաքամերձ սովխոզներից մատակարարվող հումքից, գործարանը կաթ էր ընդունում նաեւ Ծովագյուղից, Ֆիոլետովոյից, Մխչյանից։ Կաթը լաբորատոր ստուգումներից հետո առաքվում էր առեւտրի ցանց։ Հիմնականում արտադրվում էին մածուն, թթվասեր, կաթնաշոռ, կարագ, պանրի մեծ տեսականի՝ ոչխարի պանիր, չանախ, սուլուգունի, լոռի, իսկ ամռանը՝ նաեւ պաղպաղակ։ Արտադրանքը բավարարում էր քաղաքի պահանջարկը, առաքվում էր նաեւ Իջեւան ու մերձակա այլ բնակավայրեր։

Գործարանի ինժեներա-տեխնիկական սպասարկումն իրականացնում էին բարձրագույն կրթությամբ մասնագետներ։ Վարպետները նույնպես ունեին համապատասխան որակավորում, ինչն էլ արտադրանքի բարձր որակի գրավականն էր։ Ժողովուրդը հիշում ու պատմում է, որ նախկինում բնակչության շրջանում այնպիսի վստահություն կար, որ առավոտյան, երբ կաթնամթերքն առաքվում էր, ու խանութները դեռ փակ էին լինում, առաքիչը մուտքի մոտ արկղով թողնում էր կաթնամթերքը, իսկ աշխատանքի շտապող բնակիչները վերցնում էին իրենց անհրաժեշտ մթերքը՝ համարժեք գումարը դնելով արկղի մոտ։

Դիլիջանի կաթի գործարանը սահմանափակ ծավալով գործել է մինչեւ 2000-ականների սկիզբը։ Այժմ՝ չի գործում։

◀ Դիլիջանի կաթի գործարանը, 1960-ականներ

«Իմպուլս» գործարան

Դիլիջանի «Իմպուլս»-ն արդյունաբերական ամենախոշոր ձեռնարկությունն էր քաղաքում։ Հիմնադրվել է 1962 թվականին եւ ունեցել 3000 աշխատակից։ Գործել է մինչեւ 1990-ականները, հետո վերակազմավորվել «Իմպուլս» արտադրական միավորման, որից հետո մասնավորեցվել է։ «Իմպուլս»-ը կարեւոր դերակատարում է ունեցել ամբողջ մարզի տնտեսական, քաղաքական, հասարակական եւ մշակութային կյանքում։

«Իմպուլս»-ը ԽՍՀՄ կապի նախարարության համակարգի մասն էր կազմում։ Գործարանը հումք էր ներկրում ավելի քան 220 խորհրդային քաղաքներից։ Արտադրության գերակշռող տեսականին ընդգրկում էր տարբեր հզորություն ունեցող կապի սարքավորումներ։ Պաշտպանության նախարարության պատվերով նաեւ ստեղծվում էին նավերի վրա օգտագործվող ազդանշանային համակարգի զանգեր։ Ավելի ուշ «Իմպուլս»-ում նույնիսկ թվային սարքավորումներ են արտադրվել։

«Իմպուլս» գործարանի աշխատանքային թիմը, 1980 թ.

«Իմպուլս» գործարանի 21-րդ արտադրամասը

Իմպուլսցիներն ընդգծված հպարտությամբ են նշում, որ 1980 թվականին Մոսկվայում կայացած Օլիմպիադայի համար հատուկ կապի սարքերի արտադրությունն իրենց է հանձնարարված եղել։ Հայաստանի նմանատիպ խոշոր գործարանների պես, «Իմպուլս»-ը նույնպես արտադրել է լայն սպառման ապրանքներ։ Սա Դիլիջանի միակ ձեռնարկությունն էր, որի արտադրանքը տարիներ շարունակ արտահանվել է այլ երկրներ՝ Գերմանիա, Լեհաստան, Ռումինիա, Բուլղարիա, Վիետնամ, Չինաստան, Կորեա, Պակիստան, Պարսկաստան։

«Իմպուլս»-ը մասնաճյուղեր ուներ Նոյեմբերյանի շրջանի Ոսկեվան գյուղում, Գոշում, Մարգահովիտում, Կրասնոսելսկում։ Խորհրդային տարիներին ձեռնարկությունն ինտերնացիոնալ աշխատակազմ ուներ։ Սկզբնական շրջանում ինժեներական սպասարկման համար մեծ թվով մասնագետներ են Դիլիջան գործուղվել ԽՍՀՄ նախկին հանրապետություններից։ Աստիճանաբար, ժամանակի ընթացքում մեծացել է տեղացի կադրերի ներգրավվածությունը։ Գործարանի առաջին տնօրենը եղել է Ռաֆայել Այդինյանը, նրան հաջորդել են Վահագն Պետրոսյանը, Հայրիկո Միրզոյանը (հետագայում՝ ՀԽՍՀ կապի նախարար), ապա Գեւորգ Ղուկասյանը, Մարատ Ասլանյանը եւ Էդիկ Խանամիրյանը։

Գործարանն ունեցել է խոշոր հիմնապաշարներ (ֆոնդեր)։ Մեծ թվով աշխատակիցներ ստացել են բնակարաններ։ Գործարանի բյուջեից հատկացված գումարով Պարզ լճի մերձակայքում կառուցվել է պանսիոնատ, որտեղ իրենց հանգիստն են անցկացրել համակարգի աշխատակիցները։ Գործել է նաեւ անհրաժեշտ սարքավորումներով հագեցած բուժական մաս՝ իր անձնակազմով։

«Իմպուլս»-ն ուներ ֆուտբոլային թիմ, որն ընդգրկված էր հանրապետության Ա խմբի առաջնությունում (մարզիչ՝ Հրաչիկ Խաչմանուկյան)։ 1980-ականներին Դիլիջանի «Իմպուլս» ֆուտբոլային թիմը մեծ հաջողությունների է հասել. երեք անգամ դարձել է Հայաստանի ֆուտբոլի առաջնության չեմպիոն, մեկ անգամ՝ գավաթակիր։

1980-ականների վերջին Հաղարծին գյուղում աշխատանքներ են իրականացվել գործարանի արտադրական մակերեսի մեծացման ուղղությամբ, բայց 1990-ականներին աշխատանքը դադարեցվել է եւ հետագայում այլեւս չի շարունակվել։

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի ջանքերով, Ռուբեն Վարդանյանի եւ Վերոնիկա Զոնաբենդի աջակցությամբ, 2016 թվականին իրականացվել է «Դիլիջանի արվեստների դիտարան» ծրագիրը, որի շրջանակում տարբեր ցուցադրությունների միջոցով ներկայացվել է գործարանի անցած ուղին։

Հաց-հրուշակեղենի գործարան

Մինչեւ 1930-ական թվականները Դիլիջանի հացի արտադրությունն իրականացնում էր կենտրոնում գտնվող հացի փուռը, իսկ ահա 1930-ականների սկզբին կահույքի ֆաբրիկայի հարեւանությամբ կառուցվել եւ մինչեւ 1987 թվականը գործել է Դիլիջանի հացի եւ հրուշակեղենի գործարանը։

Մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը գործարանի հացի հիմնական տեսականին ներառում էր, այսպես կոչված, մեծ հացը եւ գործարանին կից գործող փոքր արտադրամասում թխվող ավանդական լավաշը։ Պատերազմի տարիներին գործարանը ոչ մի օր չի կանգնել, օր ու գիշեր աշխատել է իր արտադրական ծավալների չափով։

Հետպատերազմյան շրջանում արտադրվող հացի չափերը փոքրացել են, ծավալը՝ կրճատվել, իսկ տեսականին՝ մեծացել։ Ավելացել են նաեւ հայկական մատնաքաշը, ռուսական բուխանկան։ 1983 թվականին Վրաստանից Դիլիջան են բերվել հացի տիպային կերամիկական վառարաններ, որոնք նախատեսված էին պուրի տեսակի հացի արտադրության համար, եւ այդ ժամանակից ի վեր դիլիջանցիների հացի ընտրության հնարավորությունն էլ ավելի է ընդլայնվել։

1987 թվականին Շամախյան թաղամասում շահագործման է հանձնվել նոր տիպային գործարան, որն ապահովված էր հացի եւ հրուշակեղենի արտադրության ժամանակակից ավտոմատացված սարքավորումներով։ Շնորհիվ նոր սարքավորումների՝ երկուսից երեք անգամ ավելացել է արտադրական ծավալը։ Նոր գործարանն ուներ

◀ Դիլիջանի հացի փուռը, 1957 թ.

օրական 40 տոննա հաց եւ ինը տոննա հրուշակեղեն արտադրելու հնարավորություն։ Սակայն այդ ծավալով աշխատել են ոչ թե ամեն օր, այլ միայն պատվերների դեպքում, տոնական օրերին կամ ամռան ամիսներին, երբ զբոսաշրջության աշխուժացումը թելադրում էր հացի պահանջարկի կրկնապատում։ Մյուս բոլոր օրերին գործարանի օրական պլանը կազմում էր 13-15 տոննա։ Գրեթե կիսով չափ էլ հրուշակեղենի արտադրությունն էր, որը նաեւ մատակարարվում էր մերձակա քաղաքներ եւ բնակավայրեր։ Ըստ գործարանի բազմավաստակ աշխատակից Վոլոդյա Քեթցյանի՝ հրուշակեղենի ամենախոշոր պահանջարկը Ղազախում էր նկատելի, ուր մշտապես մեկնում էին բեռնավորված մեքենաները։ Թարմ հացն առավոտյան խանութներին մատակարարելու համար գործարանն աշխատում էր շուրջօրյա՝ երեք հերթափոխով։ Աշխատանքային գրաֆիկն ակտիվանում էր տոնական օրերին, եւ ստիպված էին լինում, բացի հերթափոխային աշխատողներից, նաեւ հերթապահների հավելել։ Գործարանն աշխատել է անընդմեջ եւ անխափան։ Հատուկ դեպքերում, երբ գազի, լույսի ընդհատումներ էին լինում, ահազանգում եւ հաց էին պատվիրում մոտակա Կիրովական, Սեւան քաղաքներից, երբեմն՝ նաեւ Երեւանից։

Որպես տիպային խորհրդային արտադրական ձեռնարկություն, գործարանն աշխատում էր պետպատվերի շրջանակում։ Օգտագործվում էր բարձր՝ առաջին, երկրորդ որակի ալյուր, իսկ սեւ ալյուրը (այսպես կոչված՝ 96 տոկոսանոցը) ստանում էին զորամասի պահեստից։ Խանութներին սեւ հացը տրամադրվում էր ըստ դիաբետով հիվանդների թվի։ Նոր գործարանի հացի տեսականին ընդգրկում էր պետստանդարտով ընդունված մատնաքաշ, բատոն, բոքոն, լավաշ, բուխանկա, սոմի եւ այլն։ Հրուշակեղենի թիվն էլ գերազանցում էր 20-ը՝ տորթեր, պիրոգներ, փախլավա, գաթա, ռուլետ, շաքար չորակի, կեքս, էկլեր, պիրոժնի, պրյանիկ, լուսին, կորժիկ եւ այլն։

Գործարանն ուներ նաեւ հատուկ «դիլիջանյան» հացի բաղադրատոմս, որի առանձնահատկությունը շաքարավազի եւ ձեթի որոշակի քանակի ավելացումն էր խմորի մեջ, ինչի շնորհիվ հացի համը նրբանում էր, քաշն էլ ավելանում էր՝ 110 գրամից դառնալով 135 գրամ։

Դիլիջանի հացի գործարանը գեղեցիկ ավանդույթներով ձեռնարկություն էր։ Արհմիությունը միշտ աջակցել ու խրախուսել է աշխատողներին, որ իրենց հանգիստն անցկացնեն բարձրակարգ առողջարաններում եւ հանգստյան տներում։ Պետական խրախուսման հիմնապաշարով նախատեսվել են նաեւ ուղեգրեր, էքսկուրսիաներ, իսկ աշխատակիցների երեխաների համար՝ ամառային հանգիստ ճամբարներում։

Ամանորի նախօրյակին գործարանը կարծես ի մի էր բերում հեռացող տարին։ Լավագույն աշխատակիցները պարգեւատրվում էին «За доблестный труд» մեդալներով, աշխատանքի վետերանները ստանում էին պարգեւավճարներ, բոլորին տրվում էր 13-րդ աշխատավարձ, իսկ երեխաներին՝ ամանորյա նվերներ։

Դիլիջանի հաց-հրուշակեղենի գործարանի աշխատանքը դադարեցվել է 1999 թվականին։

ԴԻԼԻՋԱՆ. 20-ՐԴ ԴԱՐ

Մշակույթ

▲ Ռոտոնդայի տաղավարները

Ռոտոնդա

Դիլիջանյան Ռոտոնդան (լատ.՝ rotondus՝ սյունազարդ, կլոր կամ կիսակլոր, գմբեթավոր կառույց, որի մեջ ի սկզբանե նախատեսված է եղել հավաքատեղի ստեղծելու գաղափարը) կառուցվել է 19-րդ դարի վերջին՝ տեղի համքարային ընկերության (արհեստակիցների միության) ջանքերով եւ մի շարք հայտնի դիլիջանաբնակ մեծահարուստների նվիրաբերած միջոցներով։

Դիլիջանի պատմության հետազոտող Հ. Խառատյանը Ռոտոնդայի սկզբնավորումն ուղղակիորեն կապում է Դիլիջանում ռուսական կայազորի ներկայությամբ։ Ըստ Խառատյանի՝

Ռոտոնդան սկզբում եղել է հիմնականում զինվորականության ժամանցի վայր, հետագայում ավելի լայն գործունեություն է ծավալել։

Դիլիջանն այդ պատմական փուլում արդեն որպես հանգստավայրային գոտի մեծ համբավ ուներ, եւ Ռոտոնդայի կառուցումը Դիլիջանում անմիջապես ուշադրության էր արժանացել կովկասահայ լրատվամիջոցներում։ «Մշակ» թերթը, որը լույս էր տեսնում Թիֆլիսում, իր 1891 թվականի օգոստոսի համարներից մեկում գրել է. «Գավառապետը տեսնելով, որ եկողները իրարից հեռու են ման գալիս, մտածեց մի տեղ ունենալ, ուր բոլորն էլ կարողանան իրար հանդիպել։ Երկու օրվա ընթացքում հաջողացրեց ձեռնարկել Ռոտոնդայի շինարարությունը, եւ իր դաշնամուրը տեղավորեց այնտեղ։ Այդ գործին մեծ աջակցություն ցուցաբերեց մի ազնիվ երիտասարդ՝ օֆիցեր Վաղարշակ Տեր-Յակոբյանցը (ալեքսանդրապոլցի)։ Պարոնները հույս ունեն, որ ամսի 22-ին իրենց փափագը կլրացնեն» (Հենրիկ Խառատյան, «Հայրենի երկիր, հարազատ մարդիկ, հայրենանվեր գործեր», Երեւան, 2003 թ.)։

Բազմելով գեղատեսիլ բնության գողտրիկ հատվածում՝ բարձրադիր սարալանջի գրկում, Ռոտոնդան եղել է Դիլիջանի զարդն ու պարծանքը եւ կարեւոր դերակատարություն է ունեցել Դիլիջանի՝ քաղաք դառնալու գործընթացում։ Երբեմնի ամուր ու հպարտ հառնած Ռոտոնդայի սյուների եւ գմբեթի ներքո հյուրընկալվել են հայկական եւ վրացական թատերախմբեր, մշակութային ու գրական գործիչներ եւ առհասարակ քաղաքական, սոցիալական նշանավոր դեմքեր։ Ռոտոնդայի տարածքում գործել է նաեւ ժամանցային ակումբ։

Վերոնշյալ «Մշակ» թերթը՝ 1901 թվականի օգոստոսի 5-ի համարում, կրկին անդրադարձել է Ռոտոնդայի գործունեությանը. «Ով ընդունակ է սրտով համակրել հասարակական գործերին եւ ընկերաօգուտ ձեռնարկություններին, նա անշուշտ չի կարող սառը կերպով նայել այն փոքրիկ երիտասարդ խմբին, որը կազմված է այստեղ՝ ամառանոց եկած օրիորդներից, տիկիններից, ուսանողներից, ուսուցիչներից ու աշակերտներից, եւ որը, ամառանոցային կյանքի զվարճություններին առանձին ձեւ տալով, խառնում է նրանց հետ օգտավետն ու գեղեցիկը։ Այդ խումբը տվեց էստեղ մի թեթեւ ներկայացում եւ եվրոպական ու տեղական պարեր կատարեցին։ Թե՛ ներկայացումը, թե՛ պարերը անցան շատ հաջող, ժողովուրդը ճաշակեց մի նոր զվարճություն։ Ներկայացման արդյունքը եղավ այն, որ տեղիս նորաբաց հասարակական ռոտոնդան ունեցավ սեփական թեթեւ բեմ, որ շինել են իրենք՝ սիրողները, հատկապես դրա համար վարագույրի վրա գրելով «Ոչ միայն զենքով» լատինական առածը։ Բացի դրանից, բեմը ապագայում էլ ավելի հարստացնելու համար, կա զուտ դրամ 108 ռուբլի։ Ներկայացումներն իրենց բովանդակությամբ եղել են հայրենասիրական, իսկ գործողությունները՝ հայրենանվեր։ Բացի շաբաթական 4-5 անգամ պարեկներից, թե՛ ռուսաց, թե՛ հայոց, ռոտոնդայում եվրոպական եւ ասիական նվագակցությամբ տրվել են ներկայացումներ, որտեղ հանդես են եկել նշանավոր դերասաններ Աբելյանը, Վրույրը, Փառանձեմը, Ստեփանյանը, Մելիք-Օհանջանյանը եւ այլ անձինք։ Ռոտոնդան դարձել էր կուլտուրական կյանքի առաջադեմ ներկայացուցիչների լավագույն հավաքատեղին եւ կենտրոնը» (Հենրիկ Խառատյան, «Հայրենի երկիր, հարազատ մարդիկ, հայրենանվեր գործեր», Երեւան, 2003 թ.)։

1905 թվականին Գաբրիել Սունդուկյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Ռոտոնդայում Դիլիջանի թատերախումբն առաջին անգամ Հայաստանում ներկայացրել է «Պեպո» պիեսը՝ Ստեփան Մամյանի բեմադրությամբ։ Պեպոյի կերպարը մարմնավորել է Ստեփան Դավթյանը։ Ներկայացումը դիտել են Շիրվանզադեն, իշխանուհի Մարիամ Թումանյանը, Պերճ Պռոշյանը եւ այլ մեծանուն հյուրեր։

1909-ին հեղինակի օգնությամբ բեմադրվել է Շիրվանզադեի «Արմենուհի»-ն, իսկ 1913 թվականին իշխանուհի Մարիամ Թումանյանի հրավերով Թիֆլիսի հայկական թատերախումբը՝ հայտնի թատերական գործիչ Հովհաննես Զարիֆյանի ղեկավարությամբ, հանդիսատեսին է ներկայացրել Լեւոն Շանթի «Հին աստվածներ» դրաման՝ դերասաններ Օլգա Գուլազյանի եւ Իսահակ Ալիխանյանի մասնակցությամբ։

Հանդիսատեսի շարքերում էլ պակաս հայտնի դեմքեր չեն եղել։ Ռոտոնդայի պատմական էջերում իրենց հիշատակն են թողել 20-րդ դարի սկզբի գրեթե բոլոր հանրահայտ գրական, երաժշտական, թատերական գործիչները՝ Արմեն Տիգրանյանը, Հովհաննես Թումանյանը, Ազնիվ Հրաչյան, Եղիշե Չարենցը (ի դեպ, մեծ բանաստեղծն այստեղ ունեցել է իր սիրելի ծառը), Պերճ Պռոշյանը, Ազատ Մանուկյանը, Սիրանույշը, Վահրամ Փափազյանը, Հրաչյա Ներսիսյանը, Օլգա Մայսուրյանը, Սաթենիկ Ադամյանը, Իսահակ Ալիխանյանը, Հասմիկը, Արուս եւ Հովսեփ Ոսկանյանները, Արշավիր Շախատունին, Հովհաննես Զարիֆյանը, Վարդան Միրզոյանը եւ բազում այլ մշակութային գործիչներ։

Ռոտոնդա

Առաջին անգամ այցելելով Ռոտոնդա, Ազնիվ Հրաչյան հիացմունքով ասել է. «Եթե դիլիջանցիներն ուրիշ ոչինչ չունենային ստեղծած, սա բավական է, եւ սրանով կարելի է որոշել նրանց կուլտուրան ու մեծ սերը դեպի արվեստը։ Ես նույնիսկ նշանավոր շատ քաղաքներում չեմ տեսել այդպիսի հարմարավետ ու գեղեցիկ թատրոնական շենք» (Մկրտիչ Գրիգորյան, «Դիլիջան», 1989 թ.)։

Ռոտոնդան եղել է ոչ միայն ամառային ամֆիթատրոն, այլ նաեւ հաճելի զբոսավայր ոչ միայն տեղացիների, այլեւ՝ հյուրերի համար։ 1920-30-ական թվականներին Ռոտոնդայի տարածքն ընդլայնվել է եւ դարձել առավել հարմարավետ զբոսավայր։ Տեղադրվել են կարուսելներ, վաճառվել են քաղցրավենիք եւ տեղական արտադրության լիմոնադ։

Սողանքների պատճառով 1936 թվականին դադարեցվել է Ռոտոնդայի գործունեությունը։ Ցավոք, այժմ արդեն միայն փլատակներն են վկայում Անդրկովկասի մեծահարուստների, ռուսական կայազորի սպաների, հայ մտավորականների ամենասիրելի հավաքատեղիի մասին։

Ամառային թատրոնի եւ պատմական Ռոտոնդայի ավանդույթները պահպանելու նպատակով 2010 թվականին Դիլիջանում կառուցվեց ամառային ամֆիթատրոն, որը կարճ ժամանակահատվածում դարձավ հանրապետությունում ճանաչված զբոսաշրջային եւ մշակութային հարթակ։

Թատրոն

Մինչ Ռոտոնդայի հիմնումը, Դիլիջանում արդեն իսկ թատերական գործունեություն էր ծավալվել։ Թատերարվեստի զարգացումը սերտորեն կապվում է Արշակ Սիմոնյանի անվան հետ։ Նա Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ էր։ Վերադառնալով Դիլիջան՝ նա ուսուցիչ է աշխատել տեղի «Գիմնազիա անտառում» ուսումնարանում եւ, համախմբելով իր առաջադեմ աշակերտներին ու թատերասեր գործընկերներին, թատերախումբ է հիմնել։ 1880 թվականին այդ սիրողական թատերախումբը բեմադրել է «Արշակ երկրորդ» պատմական դրաման։ Ներկայացման համար զգեստները բերվել են Ալեքսանդրապոլի եւ Թիֆլիսի թատրոններից։ Ներկայացումը մեծ խանդավառությամբ է ընդունել հանդիսատեսը, թատերախումբը մի քանի անգամ բեմ է բարձրացել շրջակա գյուղերի բնակչության համար, նաեւ՝ հատկապես կանանց համար։ «Արշակ երկրորդ»-ին 1881 թվականին հաջորդել են «Վարդանանց պատերազմ» դրաման, իսկ 1882-83 թվականներին՝ «Շուշանիկ» եւ «Երկու քաղցածներ» դրամաները։ Պահպանվել է Դիլիջանի առաջին սիրողական թատերախմբի դերասանների ցանկը՝ Խաչատուր Մատինյան, Ստեփան Մամյան, Հռիփսիմե Մամյան, Տիգրան Ասլանյան, Արծվիկ Մայիլյան, Հարություն Մայիլյան, Օլգա Կարապետյան, Վարսենիկ Կանանյան, Արշակ Անանյան, Ստեփան Դավթյան, Հովհաննես Զաքարյան եւ ուրիշներ։ Հետագա տարիներին թատերախումբն ավելի է ընդլայնվել։ Ներգրավվել են նոր տաղանդավոր կատարողներ, իսկ Արշակ Սիմոնյանին հետագայում փոխարինել է Ստեփան Մամյանը։

Ահա թատերական այս մթնոլորտում է 19-րդ դարի վերջին Դիլիջանի կենտրոնական հատվածում՝ անտառապատ սարալանջին կառուցվել Ռոտոնդան եւ իր ծննդյամբ ազդարարել մշակութային կյանքի նոր վերելքի մասին եւ տեղի թատրոնի պատմության համար նոր էջ բացել։ Ռոտոնդան բացօթյա բեմ էր դարձել ոչ միայն դիլիջանյան թատրոնի ներկայացումների համար, այլ նաեւ տեղի թատերական կյանքին աջակից եւ մասնակից էր դարձրել Թիֆլիսի եւ Բաքվի արվեստասերներին ու մտավորականությանը՝ ձեւավորելով դիլիջանյան մշակութային ավանդույթներ։

1910 թվականին հիմնադրված Հայկական թատերասերների ընկերությունը նույնպես աջակցել է Դիլիջանի մշակութային կյանքի զարգացմանը։ 1913 թվականին Թիֆլիսից Դիլիջան են ժամանել հայ անվանի դերասաններ Հովհաննես Զարիֆյանը, Իսահակ Ալիխանյանը, Օլգա Գուլազյանը, Օլգա Մայսուրյանը, Դավիթ Գուլազյանը եւ Դիլիջանի թատերախմբի դերասանների հետ Ռոտոնդայում բեմադրել են Լեւոն Շանթի «Հին աստվածներ» դրաման, Շեքսպիրի «Օթելլո» ողբերգությունը, Շիրվանզադեի «Պատվի համար», Գ. Սունդուկյանի «Խաթաբալա», Գ. Շարբաչյանի «Սայաթ-Նովա» պիեսները։ 1914 թվականին Դիլիջանում Ազնիվ Հրաչյայի ղեկավարությամբ եւ հեղինակի մասնակցությամբ բեմադրվել է Շիրվանզադեի «Շառլատանը»։ Ներկայացումը դիտել են Հովհաննես Թումանյանը, իշխանուհի Մարիամ Թումանյանը, Սամսոն Բեկ Հարությունյանը, կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը։ Իսկ մի քանի տարի անց թատերախումբը՝ Սիմոն Ղազարյանի նախաձեռնությամբ, բեմադրել է «Աշխարհի դատաստանը» պիեսը եւ ներկայացման ողջ գումարը տրամադրել Ազնիվ Հրաչյայի բուժմանը։

1920 թվականի դեկտեմբերին՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո, Դիլիջանի ժողովրդական թատրոնը ղեկավարել է տաղանդավոր դերասանուհի Հասմիկը։ Նրա ջանքերով բեմադրվել են «Փարիզի կոմունան» եւ «Պեպոն»։ Ժամանակին համահունչ՝ արվեստը պրոլետարներին եւ գյուղացիներին հասանելի դարձնելու նպատակով Հասմիկը ներկայացումներ է կազմակերպել նաեւ գյուղերում ու զորամասում։ Նրա ղեկավարությամբ, Սիմոն Ղազարյանի եւ Գուրգեն Դավթյանի օժանդակությամբ, բեմադրվել են նաեւ այլ ստեղծագործություններ։

1926 թվականին Արմեն Գուլակյանի ղեկավարությամբ Դիլիջանի բանվորական ակումբին կից ստեղծվում է «Կապույտ Բլուզ» թատերախումբը, որը գործել է մինչեւ 1929 թվականը, եւ այդ ընթացքում 20-ից ավելի ագիտկաներ, օպերետներ եւ մանրապատումներ են բեմադրվել։ Արմեն Գուլակյանը մինչ այդ աշխատել է Թիֆլիսի հայկական թատրոնի դերասան եւ բեմադրիչի օգնական։ Գուլակյանը նաեւ պիեսներ է գրել, որոշ դերեր ինքն է խաղացել։
Իր թատերախմբի հետ հենց Գուլակյանն է Հայաստանում գործի գցել «շրջիկ թատրոն»-ի «անիվը»։

1932 թվականի ապրիլին հիմնադրվել է Դիլիջանի պետական թատրոնը, որը երրորդն էր Հայաստանում՝ Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական (1922 թ.) եւ Գյումրու Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոններից (1928 թ.) հետո։ Տնօրենը Դավիթ Գուլազյանն էր, իսկ բեմադրիչը՝ Բագրատ Մուրադյանը։ Խաղացանկում ընդգրկված էին Գաբրիել Սունդուկյանի «Պեպո», Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար», Շիրվանզադեի «Պատվի համար», Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար» դրամատիկական գործերը։ Դիլիջանի պետական թատրոնում ստեղծագործական գործունեություն են ծավալել Աշ-Մաթը, Արամ Խոսրովը, Բաբկեն Շաքարյանը, Հովհաննես Կարապետյանը։ Երրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ֆաշիստների հրամանով կախաղան հանված 18-ամյա ռուս աղջկա մասին պատմող «Զոյա» ներկայացումը 1943 թվականին պետական թատրոնը բեմադրել է Ցոլակ Սողոմոնյանի բեմադրությամբ։

1948 թվականին Դիլիջանի պետական թատրոնում նկարիչ-ձեւավորողի գործն ստանձնել է վաստակավոր նկարիչ, մշակութային գործիչ Հովհաննես Շարամբեյանը։ 1948 թվականի սեպտեմբերին Արվեստի վարչությունը՝ շրջանային այլ թատրոնների հետ միասին, փակեց նաեւ Դիլիջանի թատրոնը։ Թատրոնի շենքը նախկին զբոսայգու տարածքում էր եւ փակվելուց հետո ծառայել է որպես մարզադպրոց։

Հետագայում Կուլտուրայի տանը կից ստեղծվել է սիրողական թատերախումբ, որի կազմում ընդգրկված էին շնորհալի դերասաններ Մ. Գալոյանը, Վ. Ռոմյանը, Գ. Մովսիսյանը, Մ. Շահբազյանը, Լ. Ավալյանը, Լ. Սահակյանը, Աշխեն եւ Վալյա Սողոմոնյանները։ Երեւանից հրավերով թատերախմբին են միացել Հրաչյա Ներսիսյանը, Արմեն Գուլակյանը, Դավիթ Մալյանը. նրանց մասնակցությամբ բեմադրվել են «Պեպո» եւ «Պատվի համար» պիեսները։

1953 թվականին թատերախումբը մասնակցել է հանրապետական ստուգատեսի եւ Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար» կատակերգությամբ գրավել առաջին տեղը։

1954 թվականից հետո այդ թատերախումբը կորցրեց իր դիմագիծը. մայրաքաղաքից ժամանած դերասանները փոխադրվեցին այլ շրջաններ։ Թատերախմբում ներառվածների մնացած մասը պրոֆեսիոնալ դերասաններ չէին, բայց իրենց ուժերի ներածին չափով շարունակեցին թատերական գործունեությունը մինչեւ 1959 թվականի մայիս ամիսը, որից հետո ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրությունն, արժեւորելով Դիլիջանում թատերական կյանքի դերն ու ազդեցությունը, թատերախմբի բազայի հիման վրա ստեղծեց Հասմիկի անվան ժողովրդական թատրոնը։

1967 թվականին Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին նվիրված թատերական փառատոնին իր փայլուն ելույթով հանդես է եկել նաեւ Դիլիջանի ժողթատրոնը։ Ներկայացվել է Արտաշես Բաբայանի «Սիրտը կանչում է» դրաման, բեմադրիչը Գագիկ Դավթյանն էր։ Դերասանախմբի մեջ ընդգրկված էին Գագիկ Դավթյանը, Թագուշ Դավթյանը, Վարդգես Դավթյանը, Գյանջի Մովսիսյանը, Անահիտ Վարժապետյանը։ Ներկայացման նկարչական ձեւավորումն իրականացրել էր Հովհաննես Շարամբեյանը։ Ստուգատես-փառատոնին Դիլիջանի ժողթատրոնի վեց դերասաններ արժանացել են արծաթե մեդալների, Անահիտ Վարժապետյանը ճանաչվել է փառատոնի լավագույն կին-դերասանուհի։ Լավագույն նկարիչ-ձեւավորող է ճանաչվել Հովհաննես Շարամբեյանը՝ դառնալով դափնեկիր եւ պարգեւատրվելով արծաթե մեդալով։

1970-ականներից Դիլիջանի թատրոնը վերսկսել է իր ակտիվ գործունեությունը։ Թատրոնի զարգացման գործում իրենց ավանդն են ներդրել շնորհալի բեմադրիչներ Ֆելիքս Խոստիկյանը, Ժենյա Հովհաննիսյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Աշոտ Աբաջյանը, Հրաչյա Վարժապետյանը։ 1986-87 թվականներին Մշակույթի նախարարությունը Դիլիջան է գործուղել բեմադրիչներ Արմեն Մազմանյանին եւ Արթուր Բախտյանին։

1990-ականներին Դիլիջանի թատրոնը հանդիսատեսին հրավիրում էր դիտելու Հրաչյա Վարժապետյանի բեմադրած Դ. Պսաֆասի «Պահանջվում է ստախոս», Ա. Պապայանի «Մեծ հարսանիք», «Գիգուշը», Գ. Տեր-Գրիգորյանի «Մեռնող ֆլորան», Ա. Բաբայանի «Հարազատները» ներկայացումները։ Մշակույթի պալատում բեմ ելած վերջին ներկայացումը Հ. Քոչարի «Կարոտ» դրաման էր, որով էլ 1995 թվականին՝ ֆինանսավորման բացակայության պատճառով, ավարտվեց դիլիջանյան թատրոնի գործունեությունը։

Փողային նվագախմբերի հանրապետական փառատոնը Դիլիջանում

Փողային նվագախումբ

Դիլիջանի փողային նվագախումբը հարուստ պատմություն ունի։ Ռուսաստանին Արեւելյան Հայաստանի միացումից հետո՝ 19-րդ դարի 30-ականներին Հայաստանի տարբեր շրջաններում տեղակայվեցին ռուսական զորամասեր՝ իրենց իսկ փողային նվագախմբերով։ Զորամիավորումների տեղաշարժի ժամանակ նրանց ուղեկցում էին նվագախմբերը, մասնակցում էին մշակութային միջոցառումներին եւ նույնիսկ ապահովում թատերական բեմադրությունների երաժշտական մասը։ Տեղացիներին ժամանակի ընթացքում հոգեհարազատ է դարձել փողային երաժշտական արվեստը, եւ 1880 թվականին իրենք նույնպես ստեղծել են փողային նվագախումբ։

Դիլիջանի պատմության հետազոտող Հենրիկ Խառատյանն իր «Նվագախմբի տղաները» հոդվածում գրել է. «Դիլիջանում տեղակայված Արդահանյան գնդի նվագախմբի կազմում ընգրկվեցին որոշ հայեր, որոնք ծառայության ընթացքում սովորեցին փողային երաժշտական գործիքներով նվագել»։

▶ Կինոթատրոն «Շիրվանզադե», 1950-ականներ

20-րդ դարի առաջին երկու տասնամյակներին Դիլիջանյան փողային նվագախմբի դիրիժորն Արամ Եղիազարյանն էր, իսկ երաժիշտների ցանկում հիշատակվում են Արամ Ֆրանգուլյանը, Արիստակես Գրիգորյանը, Ալյոշա Ավագյանը, Նիկոլայ Մարտինենկոն, Ալեքսան Ավագյանը, Ֆեոդորը, Բագրատ Այրումյանը եւ ուրիշներ։

Վերոնշյալ հոդվածից տեղեկանում ենք, որ 20-րդ դարի 30-ական թվականներին Դիլիջանի կայազորի 4-րդ հրաձգային գնդի փողային անձնակազմի կապելմայստերը (դիրիժոր) եղել է հոդվածագրի հայրը՝ Սիմոն Խառատյանը, իսկ ինքը՝ Հենրիկ Խառատյանը, նույնպես ընդգրկված է եղել նվագախմբում որպես կոռնետահար։ Խառատյանը հիշատակում է նաեւ ծնծղահար Սենեքերիմ Շահինյանի, բարիտոնահար Վաղինակ Ավետիսյանի անունները։

Ոչ միայն նախապատերազմյան, նաեւ հետպատերազմյան ժամանակահատվածում փողային նավագախումբ են ունեցել ե՛ւ զորամասը, ե՛ւ քաղաքի մշակույթի պալատը։ Քաղաքի փողային նվագախմբի նախապատերազմյան շրջանի երաժիշտներից հիշատակվում են Վաղոն (ազգանունը հայտնի չէ), Սողոմ Զաքարյանը, Շավարշ Մանթաշյանը, Սուրեն Գրիգորյանը, Յաշա Գրիգորյանը, Գագիկ Վարդանյանը։ Վաղոն եւ Սուրեն Գրիգորյանը նվագախմբի ղեկավարներն էին։ Հետպատերազմյան շրջանում նվագախմբից հիշատակվում են Թոդիկ Ասատրյանը, Կոլյա եւ Սյոմա Աղախանյանները, Վոլոդյա Սահաբալյանը, Վաչագան Հակոբյանը՝ «Եղբայր Վաչոն» եւ ուրիշներ։ 1968 թվականից մինչեւ 1970 թվականը փողային նվագախումբը ղեկավարել է Լյովա Մկրտչյանը։ 1970-ից մինչ այժմ փողային խմբի ղեկավարն է Սերյոժա (Սաշիկ) Գրիգորյանը։

Նվագախումբն էական դերակատարում է ունեցել քաղաքի մշակութային կյանքում։ Բոլոր հանդիսավոր միջոցառումները հիմնականում սկսվում էին փողային նվագախմբի կատարումներով։ Նվագախմբի համերգային ծրագրերը բազմազան էին, կատարվում էին ոչ միայն հանդիսավոր քայլերգեր, այլ նաեւ համաշխարհային դասական երաժշտության նմուշներ, հնչում էր նաեւ ժամանցային թեթեւ երաժշտություն։

Զբոսաշրջային ողջ սեզոնի ընթացքում՝ շաբաթ եւ կիրակի օրերին քաղաքային զբոսայգում ներկա էր փողային նվագախումբն իր երաժշտական կատարումներով։ Ավելին, նվագախումբը մշտապես մասնակցել է հանրապետական ստուգատեսներին եւ արժանացել պատվոգրերի ու շնորհակալագրերի։

Դիլիջանցիների հիշողության մեջ դեռ թարմ է 2014 թվականի մայիսի 24-ին ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ Հայաստանի երաժշտական ընկերության նախաձեռնությամբ Դիլիջանում անցկացված «Հնչի՛ր, շեփոր հաղթական» նշանաբանով փողային նվագախմբերի հանրապետական փառատոնը, որին մասնակցում էին Երեւանի եւ Հայաստանի մարզերի 17 փողային նվագախմբեր։ Այդ օրը մայրաքաղաքից եւ մարզերից ժամանած փողային նվագախմբերը հանդես են եկել քաղաքային հրապարակում, UWC Դիլիջան քոլեջի տարածքում, քաղաքային լճի մերձակայքում, Կաղնի Խաչ թաղամասում եւ Հաղարծին գյուղում։ Իսկ ամփոփիչ գալա համերգը կայացել է քաղաքային ամֆիթատրոնում։

Իր գործունեության ողջ ընթացքում փողային նվագախումբը մշտապես գտնվել է ղեկավարության ուշադրության կենտրոնում։ Այդ գործում իրենց առանձնահատուկ ներդրումն են ունեցել ՀԿԿ քաղկոմի առաջին քարտուղար Խորեն Վաթինյանը եւ քաղխորհրդի նախագահ Նադեժդա Չեպելը։ Նվագախմբի գործունեության մեջ մեծ ավանդ ունի նրա երկարամյա եւ վաստակաշատ ղեկավար Սերյոժա Գրիգորյանը։ Դիլիջանի փողային նվագախմբի լավագույն ավանդույթները շարունակում են շնորհալի երաժիշտներ Արամ Սիմոնյանը, Լեւոն Ղազարյանը, Միեր Հովսեփյանը, Վահե Գրիգորյանը, Արթուր Հովսեփյանը, Տիգրան Սիմոնյանը եւ ուրիշներ։

Գրադարանի դիմաց

Կինոթատրոն «Շիրվանզադե»

Դիլիջանի առաջին կինոթատրոնը՝ «Շիրվանզադե»-ն, կառուցվել է քաղաքի կենտրոնում ժամանակին վեր հառնած Սուրբ Աստվածածին եկեղեցու տեղում։ Եկեղեցին քաղաքի ամենագեղեցիկ շինությունն էր, որը, ցավոք, քանդվել է 1936 թ.-ին՝ խորհրդային կարգերի հաստատումից հետո մոլեգին աթեիստական պրոպագանդայի հետեւանքով։ Տարիներ անց նույն վայրում կառուցվել է Ալեքսանդր Շիրվանզադեի անունը կրող կինոթատրոնը, որը նույնպես քաղաքի գեղեցիկ կառույցներից մեկն էր։

Կինոթատրոնում ցուցադրվող գեղարվեստական ֆիլմերի ցանկն ընդգրկում էր հետպատերազմյան սովետական ֆիլմերի լավագույն հավաքածուն եւ այդ տարիների հայտնի արտասահմանյան ֆիլմերը՝ «Երեք հրացանակիրներ», «Կոմս Մոնտե Քրիստո», «Ծաղիկը փոշու մեջ», «Թափառաշրջիկը», «Պարոն 420», «Անգլուխ ձիավորը» եւ այլն։ Ամենահաճախ ցուցադրվողը եւ հանդիսատեսի հույզերը բորբոքողը հնդկական ֆիլմերն էին։ «Շիրվանզադե»-ն ամսական գրաֆիկով կինոդիտումներ է իրականացրել նաեւ շրջիկ ձեւով՝ սպասարկելով քաղաքի ծայրամասային թաղամասերը եւ շրջակա գյուղերը։ Ժամանակակիցների վկայությամբ՝ կինոթատրոնում կազմակերպվել են նաեւ հանդիսավոր նիստեր, գեղարվեստական եւ հանրային միջոցառումներ։

Կինոթատրոնի դահլիճը պատշաճ կահավորված էր։ Վերջնամասում «կուպեներ» կային, ընդհանուր դահլիճից առանձնացված գոտի էր, որը ժողովուրդն անվանում էր «լոժա»։ Հետագայում կառուցված կինոթատրոնները՝ «Սպուտնիկ»-ն ու «Մանուշակ»-ը, այդօրինակ լոժաներ չունեին. ամբողջական դահլիճներ էին։

Կինոթատրոնում ցուցադրությունն սկսվում էր ժամը 19:00-ին։ Ցուցադրության սկզբից կես ժամ առաջ բացվում էր բուֆետը, իսկ կինոդահլիճի հարակից սյունազարդ նախասրահում հնչում էր երաժշտություն, եւ կինոդիտմանը սպասող երիտասարդները պարում էին եվրոպական պարեր։ Սյունազարդ նախասրահի ներքին ձեւավորմանը յուրահատուկ հմայք էին հաղորդում առաստաղը զարդարող շքեղ ջահերը։

Տոմսի արժեքը պայմանավորված էր էկրանի հեռավորությամբ. առաջին շարքերի աթոռների համար նախատեսված տոմսերն ամենաէժանն էին, միջին շարքերի համար նախատեսվածը համեմատաբար թանկ էր, իսկ հետեւի շարքերն ամենաթանկն էին։ Տոմսերը, համապատասխանաբար, արժեին 10, 30 եւ 50 կոպեկ՝ մեկ սերիանոց ֆիլմի դեպքում։ Երկու սերիանոց ֆիլմի դեպքում տոմսի արժեքը կրկնակի էր։ Մինչեւ գեղարվեստական ֆիլմի ցուցադրումը կինոդիտողին «ժուռնալն» էր մատուցվում՝ տարբեր հասարակական երեւույթների վերաբերյալ ճանաչողական, ուսուցողական կարճամետրաժ հոլովակ։ Եթե ցուցադրման ժամանակ ժապավենը կտրվում էր, եւ ֆիլմն ընդհատվում էր, դահլիճն արձագանքում էր սուլոցներով, հնչում էին նաեւ դժգոհության ու հանդիմանանքի բացականչություններ։

Ցուցադրվող ֆիլմերի ազդեցությունը պահպանվում էր տեւական ժամանակ։ Երիտասարդությունն արձագանքում էր յուրովի. «Ֆանտոմաս» ֆիլմի ցուցադրությունից հետո. պատմում են, որ մի խումբ տղաներ հարեւանի այգուց գիշերը միրգ էին թռցրել՝ ծառի վրա թողնելով «Ֆանտոմաս» խորհրդավոր մակագրությունը։ Կինոդերասաններին արտաքուստ նմանություն ունեցող անձանց կոչում էին կինոհերոսների անուններով. սա միշտ չէ, որ հաճելի էր, ու տվյալ «հերոսը» բարյացակամորեն էր ընդունում իր նոր «անունը»։ Դե, օրինակ, ո՞ւմ ասես՝ Ֆանտոմաս, որ հաճույքից հալվի։

1960-ականների վերջին տարիներին կինոթատրոնի շենքը բազմամյա շահագործումից հնացել էր եւ փլուզվել։ 1970-ականներին «Շիրվանզադե»-ի շենքը հիմնովին քանդվել է, եւ տվյալ տարածքի մերձակայքում կառուցվել է «Դիլիջան» կինոթատրոնը, որը շահագործման հանձնվեց 1986 թ.-ին։ Ի դեպ, 1970-ականներին հանրապետությունում ներդրվեց ցանցային համակարգ, որը մեկ ընդհանուր կինոցանցում ներգրավեց Դիլիջանի երեք կինոթատրոնները՝ «Շիրվանզադեն», «Սպուտնիկը» եւ «Մանուշակը»։ «Դիլիջան» կինոթատրոնի կառուցման ողջ ժամանակահատվածում կինոսպասարկումն իրականացվում էր «Մանուշակ» եւ «Սպուտնիկ» կինոթատրոնների եւ թաղային մշակութային ակումբների միջոցով։

Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահ

Դիլիջանի երկրագիտական թանգարանի սկզբնական ձեւավորումը եւ հիմնադրումը կապված է խորհրդային արվեստաբան, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սերիկ Դավթյանի անվան հետ։ 1920 թվականին նա նշանակվեց քաղաքային գրադարանի տնօրեն եւ ձեռնամուխ եղավ գրադարանին կից տեղագրական-գավառագիտական խմբակի ստեղծմանը։ Այդ խմբակի հետազոտական աշխատանքների արդյունքում աստիճանաբար ձեւավորվել է հավաքածու, որը տարիների ընթացքում համալրվել է Դիլիջանի տարածքի հնագիտական գտածոներով, կիրառական արվեստի եւ արհեստների գործերով, անձնական ձեռագործ աշխատանքների նմուշներով։ Դրանց իսկ հիմքի վրա հայկական դպրոցի գրադարանի մի անկյունում թանգարան հիմնադրվեց։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1950 թվականին, թանգարանի տնօրեն է նշանակվում պատմության ուսուցիչ Եղիշե Հովսեփյանը։

ՀԽՍՀ վաստակավոր արվեստագետ Հովհաննես Շարամբեյանի եւ ՌԽՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԽՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի վարիչ, արեւելագետ Բորիս Պիոտրովսկու ջանքերով՝ 1958 թվականից ի վեր սկսել է գործել նաեւ թանգարանի պատկերասրահը։ Վերջինս կազմավորվել է ԽՍՀՄ գրեթե բոլոր անվանի թանգարանների նվիրատվություններից։ Պատկերասրահում ներկայացված են հանրաճանաչ հեղինակների՝ Կարավաջոյի, Ժան Բատիստ Գրյոզի, Այվազովսկու, Շիշկինի, Լագորիոյի, Բոտկինի, Բաշինջաղյանի, Սուրենյանցի, Սարյանի, Մինասի, Ժերանյանի, Գառզուի եւ բազմաթիվ այլ տաղանդավոր նկարիչների ստեղծագործություններ։

1967 թվականին թանգարանը տեղափոխվեց ներկայիս շենքը։ Այդժամ թանգարանն ուներ ավելի քան 5 հազար ցուցանմուշ, որի մի մասն էր միայն ցուցադրված, մնացածն ամբարված էր պահոցում։ Ներկայիս շենքը կառուցվել է 1926 թվականին որպես հյուրանոց, հետո նաեւ շահագործվել է որպես հիվանդանոց, իսկ 1967 թվականին վերանորոգվել է եւ տրամադրվել թանգարանին։ 1980-ական թվականներից շենքի տեխնիկական վիճակը դարձել էր մտահոգիչ, քանի որ երկար տարիներ վթարային վիճակում էր գտնվում եւ ի վերջո՝ 2005 թվականին վերջնականապես փլուզվեց։ 2005 թվականից համայնքապետարանի տրամադրած 208 մլն դրամ ֆինանսավորմամբ եւ ճարտարապետ Նվեր Դանիելյանի նախագծով սկսվեցին թանգարանի շենքի վերակառուցման աշխատանքները։ Շինարարությունն իրականացրել է «Դիլիմաք» ՍՊԸ-ն՝ Գագիկ Թովմասյանի ղեկավարությամբ։ Նոր շենքը շահագործման է հանձնվել 2010 թվականի սեպտեմբերի 30-ին։ Թանգարանի բացման արարողությանը ներկա էին այդ տարիների ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը եւ այլ պաշտոնյաներ։ Այցելուների առաջ թանգարանն իր դուռը բացել է 2011 թվականի ապրիլի 1-ին։

Նոր շենքի նախագծի հեղինակը հետաքրքիր լուծումներով է օժտել այս մշակութային օջախին։ Թանգարանի ճակատի հատվածում տեղադրված են նշանավոր քանդակագործ Լեւոն Թոքմաջյանի հեղինակած, Հայաստանի հազարամյա պատմությունն արտացոլող խորհրդանշական արձաններ՝ ուրարտական զինվորի, հայոց թագավորի, հայ հոգեւորականի՝ Գրիգոր Նարեկացու եւ հայ պատմիչի՝ Մովսես Խորենացու։ Վերին քիվի կենտրոնական մասում մարդկությանն ստեղծագործելու ձիրք պարգեւող մուսաներին խորհրդանշող քանդակն է։

Այժմ թանգարանում ներկայացված հավաքածուն ներառում է հետեւյալ բաժինները՝ հնագիտական, ազգագրական, կիրառական արվեստ, նումիզմատիկա (դրամագիտություն), գեղանկարչական եւ գրաֆիկական աշխատանքներ, քանդակներ։

Նոր շենքում ցուցանմուշները տեղաբաշխված են հետեւյալ կերպ.

ՀՅՈՒՐՈՒԼՅՈՒ ՏԵՂ ԳՈՍՏԻՆԻՑԱ

◀ Դիլիջանի ներկայիս երկրագիտական թանգարան-պատկերասրահի հին շենքը

Գետնահարկ՝ հնագիտություն, ազգագրություն, կիրառական արվեստ։ Այս բաժինների ցուցանմուշները համալրվել են հարուստ եւ բազմաբնույթ քաղաքային մշակույթը ներկայացնող հավաքածուով, մասնավորապես՝ Սերիկ Դավթյանի ձեռագործ ժանյակների, կենցաղային իրերի, գորգերի ցուցանմուշներով։ Այստեղ ներկայացված են նաեւ Դիլիջանի թատրոնի արխիվային նյութերը, քաղաքի հայտնի մարդկանց եւ մեծանուն հյուրերի լուսանկարչական ալբոմները։ Այցելուների ցանկությամբ այստեղ անցկացվում են նաեւ գորգագործության վարպետաց դասեր։ Հնագիտական առարկաների մի մասը նշանավոր հնավայր «Ռեդկինի լագերի» (տե՛ս էջ 4) արժեքավոր գտածոներ են, որոնք մեզ են հասել ուշ բրոնզե եւ վաղ երկաթե դարերից (մ.թ.ա. III-I հազարամյակ)։

Առաջին հարկում ցուցադրված է հայ արվեստագետների եւ սոցռեալիստական կերպարվեստի հայտնի նկարիչների կտավների ու քանդակների հիանալի հավաքածու։

Երկրորդ հարկի պատկերասրահը հագեցած է Վերածննդի ժամանակաշրջանից մինչեւ ժամանակակից գեղանկարչության եւ գրաֆիկայի ժանրերի նշանավոր հեղինակների ստեղծագործություններով։

Թանգարանային գործի կազմակերպման, նվիրատվությունների ձեռքբերման, ֆոնդերի հարստացման գործում անուրանալի է հանրապետության վաստակավոր նկարիչ Հովհաննես Շարամբեյանը ներդրումը։ Մեծ վաստակ ունեն նաեւ նախկին երկարամյա տնօրեններ Ալբերտ Մատինյանը, գեղանկարիչ Ղազար Ղազարյանը, էքսկուրսավար Թամարա Խլոպովան, ֆոնդապահ Լեյլի Սիմոնյանը, գիտաշխատող Լիդա Մինասյանը, նաեւ այժմյան նվիրյալներ՝ թանգարանի տնօրեն Արման Բադեյանը, ֆոնդապահ Գայանե Քոչարյանը, գիտաշխատող Անժելա Լալայանը։ Թանգարանում պարբերաբար ցուցադրվում են դիլիջանցի նկարիչների ստեղծագործությունները. նրանցից շատերը Հովհաննես Շարամբեյանի սաներն են եղել։

Երկրագիտական թանգարանը կարճ ժամանակահատվածում դարձավ ոչ միայն քաղաքի, այլեւ հանրապետության հայտնի մշակութային հարթակներից մեկը։ Թանգարանում մշտապես կազմակերպվում են համաքաղաքային միջոցառումներ, տոնակատարություններ, երիտասարդական, միջազգային կազմակերպությունների հավաքներ, աշխատաժողովներ։ 2013 թվականի հունիսին այստեղ է ընթացել շախմատի կանանց «Գրան Պրի» մրցաշարի աշխարհի առաջնության 2-րդ շրջափուլը։

Թանգարանն ընդգրկված է Դիլիջանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում։

Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանի Դիլիջանի մասնաճյուղ

Թանգարանը հիմնադրվել է 1979 թվականին ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես (Վանիկ) Շարամբեյանի նախաձեռնությամբ։ Այս մտահղացման իրականացումը մեծանուն վարպետի յուրահատուկ նվերն էր իր սիրելի քաղաքին։ Թանգարանի հետագա ողջ գործունեությունը մեծապես նպաստել է ժողովրդական արվեստների պահպանմանն ու զարգացմանը։

Հովհաննես Շարամբեյանը Դիլիջան էր տեղափոխվել դեռեւս հետպատերազմյան տարիներին՝ խաթարված առողջությունը

վերականգնելու նպատակով: Տեղափոխությունից հետո նա աշխատել տեղի Հասմիկի անվան թատրոնում՝ որպես նկարիչ, նաեւ դասավանդել է իր իսկ հիմնադրած Գեղարվեստի ստուդիայում եւ սիրել է Դիլիջանը, գնահատել նրա կախարդիչ բնության հզոր ուժն ու դարձել քաղաքի երախտավորն ու նվիրյալը:

Թանգարանի շենքը վաղուց ընդգրկված է պետական պահպանության հովանու ներքո գտնվող հուշարձանների ցանկում: Շենքը կառուցել է Թիֆլիսի մեծահարուստ վաճառական, բարեգործ, հասարակական-քաղաքական գործիչ Սամսոն Բեկ Հարությունյանը 1896 թվականին: Հետագայում բարեգործն այդ կառույցը նվիրել է իշխանուհի Մարիամ Թումանյանին: Շենքը կառուցվել է գետաքարով եւ աղյուսով:

Իշխանուհին՝ Մարիամ Մարկոսի Դոլուխանյանը, ծնվել է 1870 թվականին: Նա բնիկ շուշեցի էր՝ ազնվական տոհմից, բայց ապրում էր Թիֆլիսում եւ հայ-վրացական իշխանական ընտանիքի զավակ, հրապարակախոս, թատերական գործիչ Գեորգի Թումանովի հետ ամուսնանալուց հետո նախընտրում է կրել ամուսնու ազգանունը: Մարիամ Թումանյանը զբաղվել է հասարակական-մշակութային ակտիվ գործունեությամբ, իր հնարավորությունների չափով աջակցել է հայ գաղթականներին: Իշխանուհու ամառանոցում հյուրընկալվել են հայ մեծանուն բազմաթիվ գրողներ, մշակույթի գործիչներ: Իշխանուհու հյուրն է եղել նաեւ հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենը: Իշխանուհու ամառանոցն իրավամբ եղել է «մուսաների հավաքատեղի»: Մարիա Մարկովնան, այսպես էր անվանում նրան Հովհաննես Թումանյանը, բացառիկ դերակատարում է ունեցել Դիլիջանի հետագա զարգացման գործում: Նման բարձր մակարդակի մշակութային միջավայրի ձեւավորումը խոր հետք է թողել Դիլիջանի՝ հանգստավայրի եւ առողջարանի համբավի ձեւավորման վրա:

Խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին իշխանուհին շենքը նվիրել է Դիլիջանին եւ մեկնել Թիֆլիս: Այդ տարիներին շենքը ծառայել է որպես առողջարան, որի առաջին հարկում որոշ ժամանակ նաեւ տեղակայված է եղել առաջին հակատուբերկուլոզային հիվանդանոցի բաղնիքը: Հետագայում շենքը կրկին բնակելի է դարձել, որի վերջին բնակիչը եղել է Հովհաննես Շարամբեյանը: Վարպետը վերանորոգել է այդ պատմական շենքն ու նրա տանիքի ներքո հիմնադրել է ժողովրդական արվեստների թանգարանը՝ ստեղծելով տեղի կիրառական արվեստի անհետացող ճյուղերի առանձին բաժիններ:

Այսօր թանգարանի առաջին հարկի պատերին կարելի է տեսնել Մարիամ Թումանյանի ընտանեկան եւ դիլիջանյան գործունեության արխիվային լուսանկարները: Թանգարանի ինը սրահներում ներկայացված են ինքնուս ստեղծագործողների եւ ժողովարպետների արժեքավոր ստեղծագործություններ՝ փայտե գեղարվեստական փորագրության եւ փայտամշակման, խեցեգործության, մետաղի գեղարվեստական մշակման, արծաթագործության, ասեղնագործության, շյուղագործության, հելունագործության, գոբելենի, գորգագործության, կարպետագործության հիանալի նմուշներ, ազգային արժեք ներկայացնող տարատեսակ կենցաղային իրերի հավաքածուներ: Հովհաննես Շարամբեյանի շնորհիվ այս արհեստները վերածնունդ ապրեցին, իսկ արհեստի եւ արվեստի գործերը մտան ամենօրյա կիրառության դաշտ:

Այստեղ են պահպանվում վարպետ Գառնիկ Ալիխանյանի երկու հռչակավոր փայտե գորգերը, որոնց մասին գրել է համամիութենական «Պրավդա» թերթն իր 1987 թվականի մարտի 5-ի համարում: Գորգերից մեկի համար, որը հյուսված է երեք ծառատեսակների՝ լորենու, ընկուզենու, կարմրափայտի 140 հազար կտորներից, ամերիկացի մի գործարար առաջարկել է մեծ գումար, բայց վարպետն իր աշխատանքը չի փոխել ծանր քսակի հետ՝ իր տքնանքով ստեղծված աշխատանքը թողնելով հայրենի քաղաքում: Ուշագրավ եւ արժեքավոր են նաեւ ժողովրդական հայտնի վարպետ Ռեւիկ Հովսեփյանի փայտե փորագրությամբ ջահերը, օրորոցները, նրա հետնորդ Գրիշա Հովսեփյանի աշխատանքները՝ փայտե գդալները, աղամանները, կենցաղային կահ-կարասին:

Չենք կարող չհիշատակել մեկ այլ, Դիլիջանում ոչ պակաս հայտնի ժողովրդական վարպետ Ստեփան Ղազարյանին: Նրա աշխատանքներում ցորենի ու գարու ցողուններից նոր շունչ առած հայկական բոլոր եկեղեցիների ու վանքերի նկարները ցուցադրվել են նույնիսկ արտասահմանում, բայց, ավանդույթի համաձայն, վերադարձել են «հայրենի օջախ»՝ Ժողովրդական թանգարան: Այստեղ հետաքրքիր նվիրատվությունների շարքում է նաեւ ընդամենը կեսհատիկ բրնձի վրա Էդուարդ Ղազարյանի գրած շնորհավորանքը Հովհաննես Շարամբեյանի ծննդյան օրվա առթիվ:

Մեծ հետաքրքրության են արժանի նաեւ հայ կիրառական արվեստի ուսումնասիրող Սերիկ Դավթյանի ձեռագործ աշխատանքները: Խորհրդային տարիներին հանիրավի բռնաճնշումների ենթարկված մտավորականը, վերադառնալով աքսորից, ոչ միայն զբաղվել է ասեղնագործությամբ, այլեւ ուսումնասիրել է հայկական կիրառական

Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանի Դիլիջանի մասնաճյուղ (իշխանուհի Մարիամ Թումանյանի նախկին ամառանոցը)

արվեստը եւ իր արժանի ներդրումը կատարել ոլորտի հետագա զարգացման գործում: Թանգարանում ներկայացված հավաքածուն կատարված է հարթակար-լիցք տեխնիկայով եւ նկարի ոճով: Սերիկ Դավթյանի աշխատանքների թեմատիկան մասնավորապես նվիրված է Դիլիջանին:

Նշանավոր այս վարպետների ստեղծագործությունները մեծ գնահատանքի են արժանացրել մասնագետներն ու արվեստասեր հանրությունը: Այս ստեղծագործությունները նաեւ լայնորեն լուսաբանվել են լրատվամիջոցներում:

Թանգարանում հաճախակի կազմակերպվում են հայ եւ արտերկրյա ստեղծագործողների աշխատանքների ցուցահանդեսներ: Հատկապես մեծ հետաքրքրություն է առաջացրել Ստեֆան Բուայի «Դիլիջան - Էքս Պրովանս» թեմայով ֆոտոցուցահանդեսը: Այլ հետաքրքիր միջոցառումներից զատ, թանգարանում ամեն տարի մեծ շուքով նշվում է Հովհաննես Շարամբեյանի ծննդյան օրը:

Թանգարանի վարիչը նկարիչ Գեւորգ Մակվեցյանն է, թանգարանային գործունեության կազմակերպման գործում լուրջ ավանդ ունի թանգարանի նախկին երկարամյա գիտաշխատող Անահիտ Կարապետյանը:

Դիլիջանի ժողովրդական արվեստի թանգարանն ընդգրկված է Դիլիջանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

▲ Կոմպոզիտորների տուն, անվանական քոթեջներից երկուսը

Կոմպոզիտորների ստեղծագործական եւ հանգստի տուն

1963 թվականին շահագործման հանձնվեց ԽՍՀՄ կոմպոզիտորների ստեղծագործական տունը։ Սա կարեւոր իրադարձություն էր ողջ Խորհրդային Միությունում եւ՝ ոչ միայն։ Արձագանքներ եղան արտասահմանից, նույնիսկ՝ Ճապոնիայից։

Կոմպոզիտորների ստեղծագործական եւ հանգստի տան կառուցման պատվերը տրվել էր Մոսկվայից, եւ ըստ նախնական որոշման՝ տունը պետք է կառուցվեր Անդրկովկասյան հանրապետություններից որեւէ մեկում։ Երեք պետություններից՝ Վրաստան, Ադրբեջան եւ Հայաստան, նախապատվությունը տրվեց Հայաստանին։ Դա ամենեւին պատահականություն չէր։ Հայաստանում գերիշխում էին ստեղծագործական հասուն միտքն ու մթնոլորտը։ Այդ պատմական շրջանի ստեղծագործ մեծություններից էին Արամ Խաչատրյանը, Մարտիրոս Սարյանը, Առնո

Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Ադամ Խուդոյանը, Էդվարդ Միրզոյանը եւ Ղազարոս Սարյանը։

Այս խոշոր ծրագրի նախաձեռնման եւ իրականացման հեղինակն Էդվարդ Միրզոյանն էր։ Մինչեւ 1991 թվականը Միրզոյանը եղել է Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահը։ Մեծ դեր են ունեցել նաեւ ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Անտոն Քոչինյանն ու ճարտարապետ Էդուարդ Ալթունյանը, որը մանրակրկիտ նախագծել էր հյուրերի լիարժեք հանգստի ու արդյունավետ աշխատանքի ապահովման բոլոր պայմանները։

Սկզբնական շրջանում կառուցվել եւ գործել է վարչական շենքը՝ իր 12 առանձնատներով։ Վարչական շենքի առաջին հարկում կառուցվել են փոքրիկ կինոդահլիճ ու բար, երկրորդ հարկում՝ աշխատասենյակներ եւ ճաշարան, երրորդում՝ հանգստացողների համար նախատեսված 6 սենյակ։ Ապա կառուցվել է պանսիոնատի նոր շենք, եւ շահագործման է հանձնվել եւս 12 առանձնատուն։ Ընդհանուր առմամբ, գործում էր 25 հանգստյան տուն։ Յուրաքանչյուր առանձնատուն ապահովված էր անհրաժեշտ բոլոր պայմաններով՝ աշխատասենյակ, ուր տեղադրված էր ռոյալը, ննջասենյակ եւ այլ կենցաղային պայմաններ։ Ստեղծվել է նաեւ ջերմոցային տնտեսություն, կառուցվել է լողավազան, իսկ 1984 թվականին շահագործման է հանձնվել Բեթհովենի անվան հայտնի համերգասրահը, որտեղ անցկացվել են միջազգային ու համամիութենական մասշտաբի միջոցառումներ։

1963 թվականին Կոմպոզիտորների ստեղծագործական տան շահագործման հենց առաջին ամռան ամիսներին այստեղ է ժամանել ԽՍՀՄ կոմպոզիտորների միության նախագահ Դմիտրի Շոստակովիչը՝ իր աչքով տեսնելու եւ կատարված աշխատանքը գնահատելու նպատակով։ Հետագայում նա հիացած բարձրաձայնել է, որ հոգով է հանգստացել այդտեղ եւ ոչ միայն հանգստացել է, այլեւ գործիքավորել է Ռոբերտ Շումանի թավջութակի եւ նվագախմբի համար գրված կոնցերտը։ Ազգությամբ հայ ռուսագիր գրող Մարիետա Շահինյանին Շոստակովիչը գրել է. «Հանգստացել եւ աշխատել եմ Դիլիջանում՝ սարերով շրջապատված, հիասքանչ եւ գեղատեսիլ վայրում»։ Մարտիրոս Սարյանը կտավի վրա հավերժացրել է Շոստակովիչի առաջին այցը՝ նկարելով նրա դիմանկարը։ Հետագայում «ամենագլխավոր դատավորն» այցելել է Դիլիջան եւս երեք անգամ եւ կրկին Մարիետա Շահինյանին ուղղված նամակում կրկին չի թաքցրել իր հիացմունքը. «Ես եղել եմ Շվեյցարիայում, բայց Դիլիջանն ավելի գեղեցիկ է»։ Մեծ կոմպոզիտորի հետագա այցերը նույնպես արգասաբեր են եղել ստեղծագործական առումով. Դիլիջանում են ծնվել նրա եւս մի քանի ստեղծագործություններ, այդ թվում՝ «Համլետ» ֆիլմի (ռեժիսոր՝ Գրիգորի Կոզինցեւ, 1964 թ.) համար գրված երաժշտությունը եւ N9 լարային կվարտետը։

Հիմնադրման առաջին իսկ տարիներից այս կառույցը երաժշտասեր եւ երաժշտագետ հանրության համար դարձավ նաեւ միջազգային գիտաժողովների, ֆորումների հարթակ։ Այստեղ ավանդաբար անցկացվել են բուլղարական, չեխական, գերմանական, լեհական մշակութային շաբաթներ եւ բարձր մակարդակի այլեւայլ հանդիպումներ ու միջոցառումներ։ Բացի համերգներին ցուցաբերած ջերմ ընդունելությունից, այս ստեղծագործական տանը, Էդվարդ Միրզոյանի նախաձեռնությամբ, կազմակերպվում էր հայկական ավանդական հյուրընկալություն, եւ բոլոր հանգստացողները Դիլիջանից մեկնում էին անմոռաց տպավորություններով։

1984 թվականին Բեթհովենի դահլիճի բացման առթիվ Հայաստան է ժամանել ԽՍՀՄ կոմպոզիտորների միության նոր նախագահ Տիխոն Խրեննիկովը։ Աշխարհահռչակ դիրիժոր Վալերի Գերգիեւի հետ հենց նա էլ բացել է առաջին համերգը։ Այդ դահլիճի բեմը հյուրընկալել է աշխարհահռչակ երաժիշտներ Յուրի Բաշմետին, Վլադիմիր Սպիվակովի ղեկավարությամբ «Մոսկվայի վիրտուոզներ» նվագախմբին, Հայաստանի ակադեմիական ազգային երգչախմբին, մաեստրո Հովհաննես Չեքիջյանի գլխավորությամբ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբին, Հայաստանի լարային քառյակին, «Յալլա» վոկալ-գործիքային անսամբլին, Վրաստանի պարի պետական անսամբլին եւ այլոց։ Այստեղ հաճախակի ելույթ է ունեցել նաեւ ճանաչված կոմպոզիտոր, դասական երգերի անզուգական կատարող Արզաս Ոսկանյանը. Դիլիջանը նրա ծննդավայրն է։

Այսօր, ցավոք, հուշատախտակներն են վկայում այդ ջերմ ու հոգատար պատերի ներքո ապրած ու ստեղծագործած եւ իրենց մահկանացուն կնքած հռչակավոր տանտերերի մասին։ N21 առանձնատունը կրում է Առնո Բաբաջանյանի անունը, N7-ը՝ Էդգար Հովհաննիսյանի անունը, N8-ը՝ մեծն Շոստակովիչինն էր, 23-ը՝ Ալեքսանդր Աճեմյանինը, 13-ը՝ Բենջամին Բրիտտենինը։ Իսկ Բրիտտենին ուղեկցող հայտնի ամուսնական զույգը՝ օպերային պրիմա Գալինա Վիշնեւսկայան եւ իր ամուսինը՝ անկրկնելի թավջութակահար, դաշնակահար ու դիրիժոր Մստիսլավ Ռոստրոպովիչը, 1965 թվականին ապրել

են 15-րդ առանձնատանը։ Երբ այստեղ հանգստացել է Մարտիրոս Սարյանը, նրան տրամադրել են N18 առանձնատունը, որն այժմ մեծ նկարչի անունն է կրում։ 10-րդ առանձնատունն Ավետ Տերտերյանի համար դարձել էր մշտական տուն, իսկ 12-րդը՝ Էդվարդ Միրզոյանի «տունն» էր։

Եվ այսպես, գրեթե անհամար անուններ կարելի է հիշատակել, որ այցելել եւ վայելել են իրենց հանգիստն ու ժամանցն այս մշակութային կենտրոնում՝ Տիխոն Խրեննիկով, Գեորգի Սվիրիդով, Վասիլի Սոլովյով-Սեդոյ, Ալեքսանդրա Պախմուտովա, Նիկոլայ Դոբրոնրավով, Միքայել Թարիվերդիեւ, Մայա Պլիսեցկայա, Ռոդիոն Շչեդրին, Գիա Կանչելի, Ֆելիքս Գլոնտի, Ռասուլ Համզատով, Չինգիզ Այտմատով, Անդրեյ Վոզնեսենսկի, Աննա Զեգերս, Ժորժ Օրիկ, Մարսել Մարսո, Վալերի Գերգիեւ, Յակով Ֆլիեր, Սերգեյ Յուրսկի, Միխայիլ Ուլյանով, Ռուբեն Մամուլյան, Վլադիմիր Կովալյոնոկ, Վիտալի Սեւաստյանով...

Այստեղ են ծնունդ առել այնպիսի հանրահայտ ստեղծագործություններ, ինչպիսիք են Բենջամին Բրիտտենի «Պուշկինյան ցիկլ»-ը՝ վոկալ ստեղծագործական շարքից, որը նա նվիրել է Գալինա Վիշնեւսկայային, Ալեքսանդրա Պախմուտովայի «Դիլիջան» երգը, Գիա Կանչելիի եւ Ավետ Տերտերյանի սիմֆոնիաները եւ այլն։

Կոմպոզիտորների տունը Առնո Բաբաջանյանի ամենասիրելի ու նախընտրելի վայրերից էր։ Դիլիջանի նկատմամբ նշանավոր կոմպոզիտորի անսահման սերն ու հիացմունքն արտահայտված են նրա հակիրճ, բայց ամեն ինչ ասող խոսքում։ Ըստ Բաբաջանյանի կենսագիրների՝ երբ մի առիթով Առնո Բաբաջանյանին հարցրել են, թե որտեղ է ապրում, պատասխանել է. «Բնակվում եմ Մոսկվայում, ապրում՝ Դիլիջանում»։

Հայաստանում Կոմպոզիտորների տան առկայությունը մեծապես նպաստել է հայկական երաժշտարվեստի եւ առհասարակ մշակույթի առավել ճանաչմանն ու հանրահռչակմանը։

1991 թվականին Կոմպոզիտորների միության նախագահի պաշտոնից հրաժարվելով՝ Էդվարդ Միրզոյանը կարծես ամփոփեց այս լեգենդար հանգստյան տան գործունեությունը։ Հետադարձ հայացք գցելով պատմական անցյալին՝ պատկերավոր անջրպետ ենք նկատում միրզոյանական ժամանակաշրջանի եւ դրան հաջորդող 30 տարիների միջեւ։ Ցավոք, կառույցի ակտիվ գործունեությունը դադարել է, շինություններն էլ կորցրել են իրենց երբեմնի հմայքը։ Կոմպոզիտորների տունն ունի ներդրումների կարիք։

Այնուհանդերձ, նվիրյալ կոմպոզիտորի վաստակը եւ ստեղծագործական տան գործունեությանը նվիրումը չէին կարող չարժանանալ բարձր գնահատանքի։ Կոմպոզիտորների ստեղծագործական տան հիմնադրման գործում ունեցած մեծագույն ավանդի համար 2013 թվականի հունվարի 24-ին Հայաստանի հանրային խորհուրդը որոշում կայացրեց Դիլիջանի կոմպոզիտորների ստեղծագործական տունն անվանակոչել Էդվարդ Միրզոյանի անունով, իսկ 2018 թվականին կոմպոզիտորի ծննդյան 97-ամյակի միջոցառմամբ տեղի ունեցավ նրա հիշատակին կառուցված հուշաղբյուրի բացումը։

2023 թվականին լրանում է Դիլիջանի կոմպոզիտորների հանգստի եւ ստեղծագործական տան 60-ամյակը։

Կինեմատոգրաֆիստների տուն

Դիլիջանի կինեմատոգրաֆիստների ստեղծագործական տան գեղատեսիլ վայրն, ըստ վկաների հուշերի, ընտրել էր անձամբ ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության նախագահ, թիֆլիսահայ Լեւ Կուլիջանովը, իսկ գաղափարը ՀԽՍՀ կինեմատոգրաֆիստների միության նախագահ Գեորգի Դավիդովինն էր։ 1974 թվականին, երբ ՀԽՍՀ կոմկուսի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը հավանություն է տվել եւ հաստատել այդ նախագիծը, կառուցման ղեկավարությունը տրվել է ճարտարապետ Հրաչյա Պողոսյանին։ Նախագծի համահեղինակներ են եղել նաեւ Սպարտակ Խաչիկյանը եւ Յուրի Սաֆարյանը։ Շենքը շահագործման է հանձնվել 1984 թվականին։

Տաղանդավոր ճարտարապետների մտքի թռիչքն այս նախագծում գերազանցել է բոլոր սպասելիքները։ Ազգային ճարտարապետության եւ ժամանակակից, նորարար ճարտարապետական ոճերի համատեղմամբ՝ շենքն աննախադեպ կոմպոզիցիոն լուծումներ է ստացել։ Կառուցվել է Պարզ լճի մերձակայքում՝ անտառի գրկում։ Այս խոշոր համալիրը կարծես վերարտադրում է անտառապատ բլուրների ու սարահարթի բնական գծերը, եւ առանձնատները կառուցված են բարձր-ցածր սկզբունքով։

Կառուցման համար օգտագործվել են տեղական արժեքավոր շինանյութեր։ Շենքի ներքին ձեւավորումն ու կահավորումն իրականացվել էին իր ժամանակին համահունչ նորաոճ ու թանկարժեք դեկորներով։ Հյուրերի եւ հանգստացողների լիարժեք հանգստի համար ամեն ինչ նախատեսված էր՝ սրճարան, բացօթյա հանգստի գոտի, լողավազան, մարզասրահ, կինոդահլիճ եւ այլն։

Նախագծի հեղինակ եւ ճարտարապետ Հրաչյա Պողոսյանը եւ Դիլիջանի N12 շինտրեստի կառավարիչ Յուրի Մանթաշյանն այդ նախագծի իրականացման համար արժանացել են ՀԽՍՀ պետական մրցանակի։

Բացման հանդիսավոր արարողությանը ներկա է եղել ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության նախագահ Լեւ Կուլիջանովը։ Նրան ուղեկցել են նաեւ կինոարվեստի ոլորտի նշանավոր դեմքեր։ Այս ստեղծագործական տունն ուներ իր հուշալբոմը, որը հարստանում էր Նիկիտա Միխալկովի, Մառլեն Խուցիեւի, Գալինա Վոլչեկի, Մայա Պլիսեցկայայի, Էմիլ Լոտյանուի, Գալինա Բելյայեւայի եւ շատուշատ հանրահայտ սովետական եւ արտասահմանյան

արվեստագետների գրառումներով։ Կինեմատոգրաֆիստների ստեղծագործական տանն իրենց հանգիստն են վայելել նաեւ այդ տարիներին հայ կինոարվեստում գործող գրեթե բոլոր ռեժիսորներն ու դերասանները՝ Սերգեյ Փարաջանովը, Լաերտ Վաղարշյանը, Ֆրունզե Դովլաթյանը, Սոս Սարգսյանը, Ազատ Շերենցը, Խորեն Աբրահամյանը, Միեր Մկրտչյանը, Ալբերտ Մկրտչյանը, Արմեն Ջիգարխանյանը եւ այլք։ Այստեղ հանգստանում էին ոչ միայն նշանավոր կինոգործիչներ ու դերասաններ, նաեւ մշակույթի այլ ոլորտների ճանաչված դեմքեր։

Միջոցառումներ, կինոդիտումներ էին կազմակերպվում ոչ միայն Կինեմատոգրաֆիստների տանը։ Օգտվելով պատեհ առիթից՝ համայնքի ղեկավարությունը հյուրերին հրավիրում էր հանդիպումների Դիլիջանի մշակույթի տուն կամ «Դիլիջան» կինոթատրոն, եւ այդ հանդիպումներն արժանանում էին Դիլիջանի արվեստասեր հասարակության ջերմ ընդունելությանը։ Տեղացիների շփումները հանգստացողների հետ տեղի էին ունենում ոչ միայն միջոցառումների ժամանակ, այլեւ քաղաքում զբոսնելիս։ Հաստատվում էին ծանոթություններ, ջերմ շփումներ։

Կինեմատոգրաֆիստների տան աշխատակիցներից պահեստապետ, քաղաքում ճանաչված Լյովան նկատելիորեն մտերմացել էր «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմի ստեղծագործական կոլեկտիվի հետ։ Ճաշի ժամանակ որոշվում է սունկ հյուրասիրել։ Լյովան (Լոլոնը) ջանք է թափում, որ մեծ քանակությամբ դիլիջանյան թարմ սունկ բերվի խոհանոց։ Դերասան Ազատ Շերենցը ճանապարհին տեսնում է սնկի պատկառազդու քանակությունն ու զարմացած հարցնում. «Լյովա, էս ի՞նչ ես արել, էսքանը ո՞նց պիտի ուտենք»։ Վերջինս վրա է բերում. «Է՛, բա Ռեւազի ոչխարները ո՞նց կերաք» (դրվագ «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմից)։

Կինեմատոգրաֆիստների տունը գործել է մինչեւ 90-ական թվականները, հետագայում՝ 2015 թվականին հիմնանորոգվել է եւ տրվել Պետեկամուտների կոմիտեին։ Այստեղ գործել է Ֆինանսների նախարարության ուսումնամեթոդական կենտրոնը, որից հետո 2017 թվականին շենքը տրամադրվել է Մոնթե Մելքոնյանի անվան ռազմաուսումնական վարժարանին։

Մշակույթի պալատ

Դիլիջանի կենտրոնում գտնվող Մշակույթի պալատը հրապարակի շուրջը կառուցված խորհրդային շրջանի առանցքային շինություններից մեկն է՝ վարչական շենքերի, կապի հանգույցի եւ հանրախանութի հետ միասին։

Մինչ Մշակույթի պալատի բացումը, դեռեւս 1920-30-ականներին քաղաքի թաղամասերում ստեղծվել են կուլտուրայի կլուբներ (ակումբներ), որտեղ ցուցադրվել են ֆիլմեր, եւ գործել են զանազան գեղարվեստական խմբեր։

Դիլիջանի մշակույթի պալատի շինարարությունը սկսվել է 1968 թվականին։ Շենքի հիմնարկեքի արարողությանը ներկա են եղել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գուրգեն Ջանիբեկյանը, Դիլիջանի պետական թատրոնի հիմնադիր Դավիթ Գուլազյանը, կառուցապատման աշխղեկ Հրաչիկ Մելիքյանը, Դիլիջանի կոմկուսի առաջին քարտուղար Խորեն Վաթինյանը։ Ռ. Գեւորգյանի եւ Ս. Ավետիսյանի հետ միասին, Վաթինյանը նույնպես Մշակույթի պալատի ճարտարապետներից էր։ Շենքը շահագործման է հանձնվել 1972 թվականի սեպտեմբերի 2-ին, բացման հանդիսավոր արարողությանը մասնակցել են մշակույթի անվանի գործիչներ։ Զուգահեռաբար՝ 1960-ականների վերջին, Դիլիջանի Պապանինո թաղամասի Կուլտուրայի ակումբը վերակառուցվել եւ գործել է որպես N2 Կուլտուրայի տուն։

Մշակույթի պալատի շենքը եռահարկ է, ճակատը՝ ապակեպատ։ Ճարտարապետական հանդերձանքը հասցված է նվազագույնի։ Սա տիպային խորհրդային կառույց է՝ առանց ճոխ զարդարանքների, 14 խմբասենյակներով ու փորձասրահներով, 550 տեղանոց դահլիճով։

Մշակույթի պալատի հին շենքը, 1950-ականներ

Մշակույթի պալատը, 1960-70-ականներ

Երկար տարիներ Մշակույթի պալատը եղել է քաղաքի գլխավոր մշակութային հարթակներից մեկը։ Խորհրդային տարիներին պալատն ուներ պետական աջակցություն, պարտադիր մշակութային ծրագիր՝ տարեկան եւ ամսական կտրվածքով։ Հանրապետական մշակութային կազմակերպությունները եւ համույթները մշտական հյուրախաղերով հանդես էին գալիս այնտեղ։ Դահլիճում անցկացվել են մշակութային փառատոններ, մեծարման երեկոներ, հանդիսավոր արարողություններ, համերգներ, թատերական ներկայացումներ։

Միջոցառումները վարել են շնորհալի հանդիսավար-ասմունքողներ Գայանե Բեգլարյանը, Անուշ Գրիգորյանը եւ Գայանե Գրիգորյանը։ Մշակույթի պալատում երկարամյա գործունեություն են ծավալել պարուսույցներ Մելսիկ եւ Լարիսա Մխիթարյանները, թատերական բեմադրիչ եւ դերասան Հրաչյա Վարժապետյանը, տեխնիկական սպասարկող եւ էլեկտրիկ Զավեն Մեհրաբյանը, երգիչ եւ հնչյունային ռեժիսոր Նորիկ Նիկոյանը, գեղանկարիչ Սլավիկ Մելյանը եւ ուրիշներ։ Մշակույթի պալատի շենքում գործել են Հասմիկի անվան ժողովրդական թատրոնը, Դիլիջանի փողային նվագախումբը, պարային խմբեր, ժողգործիքների «Հովք» եւ վոկալ-գործիքային «Հաղարծին» համույթները, նաեւ էստրադային նվագախումբը։ «Հաղարծին» վոկալ-գործիքային համույթի ղեկավարն Արարատ Ուլիխանյանն էր, իսկ «Հովք» ժողգործիքների համույթինը (ուներ 27 երաժիշտ)՝ Խաչիկ Ղազարյանը։

Մշակույթի պալատի առաջին տնօրենը եղել է դերասան Գագիկ Դավթյանը՝ Դիլիջանում հայտնի դերասանուհի տիկին Թագուշի ամուսինը։ Իսկ վերջին երեք տասնամյակում մշակույթի տան տնօրենն է Արամ Սիմոնյանը։ Վերջինս հարուստ հուշեր ունի Մշակույթի պալատի հետ կապված։ Պատմում է, որ 1990-ականներին Աշոտ Ղազարյանի դիլիջանյան համերգին, երբ ղարաբաղյան պատերազմին զուգընթաց՝ հոսանքի անջատումը մեր կյանքի մշտական ուղեկիցն էր, այդ ժամանակ էլ առանց զգուշացնելու անջատել են լույսը, եւ Աշոտ Ղազարյանը խնդրել է տնօրինությանը մոմեր բերել եւ դրանց լույսի տակ շարունակել է համերգը։ Այդ հետաքրքիր լուծումը ներկաների համար շատ տպավորիչ է եղել։

Վերջին անգամ Մշակույթի պալատի շենքը վերանորոգվել է անցած դարի 70-ականներին։ 1988 թվականի երկրաշարժի հետեւանքով քաղաքային գրադարանի շենքը վթարային դառնալու պատճառով տեղափոխվել է Մշակույթի պալատի 2-րդ հարկ։ Այժմ Մշակույթի պալատն անմխիթար վիճակում է եւ ունի կապիտալ վերանորոգման հույժ անհրաժեշտություն։

Ղազարյանների ընտանիք

Դիլիջանում հաստատված Ուստա Առաքելը (բոլորն այդպես էին դիմում նրան) արմատներով Տավուշի մարզի Ծաղկավան գյուղից էր։ Նա ինքնուս զուռնաչի էր, հայ ժողովրդական երգ ու երաժշտության սիրահար։ Բազմանդամ ընտանիք ուներ (15 հոգի), եւ դա էր պատճառը, որ Դիլիջանում նրանց «Շատվորանց» էին ասում։ Երաժշտության հանդեպ անսահման սերը փոխանցվել էր ընտանիքի բոլոր անդամներին։ Հայրը եւ որդիներից երկուսը՝ Խաչիկն ու Վաչիկը, տիրապետում էին երաժշտական մի քանի գործիքների։ Առաքելի քույրը դհոլ էր նվագում՝ փայտիկներով, իսկ քրոջ տղան՝ թառ։ Գրեթե բոլորը հիանալի երգում էին։

Երաժշտասեր ընտանիքի անդամները 1979 թվականի գարնանը ձեռնամուխ եղան ընտանեկան ժողանսամբլ ստեղծելու գործին։ Անսամբլի գեղարվեստական ղեկավարն էր Առաքելի որդի Խաչիկը, հաղորդավարը՝ Առաքելի թոռնուհի դպրոցական Լիլիթը։ Ընտանեկան անսամբլը կարճ ժամանակահատվածում մշակեց հայկական ժողովրդական երգերից կազմված երգացանկ եւ հայտնի դարձավ այնչափ, որ նույն տարվա ամռանը հրավեր ստացավ մասնակցելու Մոսկվայում կայանալիք ՍՍՀՄ ժողտնտեսության նվաճումների ցուցահանդեսի ստուգատեսին։ Անսամբլին ուղեկցում էին մշակույթի նախարարության աշխատակիցներ։ Փակ մրցույթին մասնակցելուց զատ, անսամբլը նաեւ Մոսկվայում հայ հանրության առջեւ համերգներով է հանդես եկել եւ նույնիսկ օդանավակայանում է հասցրել ուրախացնել հայրենակիցներին։ Մոսկվայից Ղազարյանները վերադարձել են բրոնզե մեդալներով եւ առաջին կարգի դիպլոմով։ Դիլիջանի պատմության համար այդ հիշարժան համերգը ցուցադրվել է նաեւ Հայաստանի պետական հեռուստատեսությամբ։

Երաժշտական ընտանիքը երկար տարիների ընթացքում եղել է նաեւ Դիլիջանի հարսանյաց եւ այլ տեսակի արարողությունների ամենամեծ պահանջարկ վայելող երաժշտախումբը։ Բացի ուրախ, տոնական երաժշտությունից, եղբայրները մասնակիցներին հրամցրել են զվարճալի պատմություններ, ինչն իրենց ելույթներին առավել համուհոտ է հաղորդել։

Ընտանիքի կրտսեր որդին՝ Խաչիկ Ղազարյանը, մասնագիտական կրթություն էր ստացել։ Զբաղվում էր մանկավարժական գործունեությամբ, Դիլիջանի քաղաքապետարանի հովանու ներքո գործող N2 երաժշտական դպրոցի տնօրենն էր։ Երկար տարիներ ղեկավարել է Մշակույթի պալատի ժողգործիքների անսամբլը, որը քաղաքային միջոցառումներին մշտապես հանդես է եկել ելույթներով։

Ուստա Առաքելի որդի Գեւորգը «Զարենց» գրական կեղծանվամբ ճանաչված բանաստեղծ էր, «Դիլիջան» թերթի խմբագրի տեղակալն էր։ Հրատարակվել էր նրա բանաստեղծությունների ժողովածուն։ Դիլիջանի բոլոր հիշարժան միջոցառումները սկսվում էին նրա հեղինակած «Դիլիջան» երգի տեքստով, որի երաժշտությունը գրել է Խաչիկը։ Գեւորգ Զարենցը հումորի մեծ զգացում ուներ, ինչն ակնհայտ էր նաեւ «Դիլիջան» թերթում տպագրված նրա երգիծական պատմություններում։ Պատմում են, որ Դիլիջանում նոր կինոթատրոնի բացման կապակցությամբ, երբ որոշվել է կինոթատրոնն անվանել «Դիլիջան», Զարենցը երգիծական ռեպլիկ է գրել ՝ «Այսքան Դիլիջան՝ մի Դիլիջանում» վերնագրով։ Մեկ այլ երգիծական հոդվածի պատճառն էլ դարձել է հետեւյալ միջադեպը. Պապանինո թաղամասի ակումբում, որտեղ նաեւ ֆիլմեր էին ցուցադրվում, տոմս գնելուց խուսափող որոշ պատանիներ փորձել են շրջանցել հսկիչին եւ մուտք գործել ակումբին հարող տան պատի վրայով, որի տերը մոլոկան Վատոլինն էր։ Վատոլինի շունը հարձակվել է կարգազանցների վրա, իսկ տանտիրուհին, շանը զսպելու փոխարեն, հարվածել է զոհին։ Այս միջադեպն առիթ է դարձել Զարենցի հեղինակած մի շատ սրամիտ երգիծական պատմության, որն ընթերցողին է մատուցվել «Կուլտուրայի տունը եւ Վատոլինի շունը» վերնագրով։

Արզաս Ոսկանյանը հարազատների հետ

Ոսկանյանների ընտանիք

Դիլիջանցի Ոսկանյաններն այն բացառիկ երաժշտական գերդաստաններից էին, որոնք խորհրդային տարիներին ստեղծել են ընտանեկան անսամբլ եւ համերգներով հանդես եկել ոչ միայն տեղացիների համար։ Իր հեղինակած «Արզաս Ոսկանյան» գրքում Անահիտ Կիրակոսյանը գրում է. «Գերդաստանում պրոֆեսիոնալ երաժիշտներ չեն եղել, սակայն նրանցից շատերն աչքի են ընկել ցայտուն երաժշտականությամբ եւ երաժշտասիրությամբ։ Ընտանիքի հայրը՝ Գրիգորը, երկու կողմի պապերը, հայրական տատը հրաշալի երգել են»։

Իր ողջ կյանքը երգարվեստին է նվիրել ընտանիքի հայրը՝ Գրիգոր Ոսկանյանը, որին սիրով ու հարգանքով քաղաքում Ուստա Գրիգոր էին կոչում։ Նա շինարար վարպետ էր ոչ միայն իր մասնագիտության, այլ նաեւ երաժշտության ոլորտում։ Ուստա Գրիգորը 1950-ականների սկզբին ստեղծել է ընտանեկան անսամբլ, որը բազմիցս ելույթներ է ունեցել մեծ լսարանի առջեւ՝ նույնիսկ Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում։ Այս անսամբլում ընգրկված էին ընտանիքի 20-ից ավելի անդամներ՝ բոլորն էլ հայ ժողովրդական երգի ու երգարվեստի նվիրյալներ։ Նրանք երգում էին, պարում, ասմունքում։ Հաջող ելույթների համար Ոսկանյանների ընտանեկան անսամբլը 1952 թվականին պարգեւատրվել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով։

Անսամբլում կրտսերը չորսամյա Արզասն էր։ Նա իր նուրբ մանկական ձայնով հուզում էր ունկնդիրներին, եւ դեռ այն ժամանակ զգացվում էր, որ փոքրիկի հոգում խմորվում, հասունանում է ապագա արվեստագետը՝ այժմ արդեն հայ կոմպոզիտոր, երգիչ, մանկավարժ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Արզաս Ոսկանյանը։ Իր բարձր կատարողական արվեստով եղբորը չէր զիջում Ֆարիզդա Ոսկանյանը։

Արզաս Ոսկանյանը ջերմորեն կապված է ծննդավայր Դիլիջանի հետ։ Նրա գործընկեր Գրիգոր Հախինյանը Ոսկանյանին համարում էր «Դիլիջանի առաջին կոմպոզիտորը»։ Նրա բազմաթիվ ստեղծագործությունների առաջին կատարումները ծնվել են Դիլիջանում։ Կոմպոզիտորի բազմաթիվ ստեղծագործություններ մեծ հաջողությամբ ներկայացվել են Հայաստանում եւ երկրի սահմաններից դուրս, շահել միջազգային մրցանակներ։ Ճանաչված կոմպոզիտորը նաեւ անզուգական երգիչ է. կատարում է դասական ստեղծագործությունների, եւ իհարկե՝ նաեւ ժողովրդական երգերի մեծահամբավ կատարող է։ Նա հանդես է եկել Ռուսաստանում, Բելգիայում, Անգլիայում, Հոլանդիայում, Շվեյցարիայում, Սիրիայում եւ այլ երկրներում

Անսամբլն իր ամբողջական կազմով գործունեությունը դադարեցրել է դուստրերի Երեւան տեղափոխվելու պատճառով։ Աղջիկները մայրաքաղաք են տեղափոխվել ուսումը շարունակելու նպատակով։ Այնուամենայնիվ, ընտանիքի անդամները որպես անհատ երաժիշտներ շարունակել են իրենց ներդրումն ունենալ Դիլիջանի երաժշտական կյանքում։

ԴԻԼԻՋԱՆ. 20-ՐԴ ԴԱՐ

Կրթական համակարգ

Կոմիտասյան ռուսիկան

◀ Դիլիջանի կենտրոնական գրադարանի մանկական գրականության բաժինը, 1948 թ.

Դիլիջանի կենտրոնական գրադարան

Դիլիջանի ծխական դպրոցի ավագ ուսուցիչ Հովհաննես Զաքարյանը՝ ձեռքի տակ ունենալով ընդամենը մի քանի տասնյակ գիրք, 1908 թվականին որոշում է կայացնում դպրոցի մի անկյունում գրադարան ստեղծել եւ ստանձնել առաջին գրադարանավարի պարտականությունը։ Մեկ տարի անց նորաստեղծ գրադարանը տեղափոխվել է հասարակության միջոցներով եւ հատուկ գրադարանի համար կառուցված ներկա փոստի բաժանմունքի շենքին հարակից տարածքում։

1911 թվականին գրադարանն անվանակոչվել է Ղազարոս Աղայանի անվամբ։ 1920-ին գրադարանի գրքային ֆոնդը համալրվել է ինժեներ Յարալովի եւ իշխան Ճավճավաձեի գրադարաններից բռնագրավված գրքերով (Հ. Խառատյանի «Հայրենի երկիր, հարազատ մարդիկ, հայրենանվեր գործեր»)։ Նույն աղբյուրի վկայությամբ՝ գրադարանում քաղաքի ընթերցասեր հասարակությանը բախտ է վիճակվել հանդիպումներ ունենալ Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Լեւոն Շանթի, Մուրացանի, Շիրվանզադեի, Հովհաննես Աբեյանի հետ։
Հիմնադրումից 64 տարի անց գրքի ու գիտության, կրթության ու լուսավորության, արվեստի ու մշակույթի օջախ դարձած Դիլիջանի գրադարանը նվեր է ստացել նոր քառահարկ շենք Մյասնիկյան փողոցի վրա (ներկայիս ԿԲ «Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնը), որտեղ ստեղծված էին բոլոր հնարավորությունները բարձրակարգ գրադարանային գործունեություն ծավալելու եւ ազատ տեղաբաշխելու դեռեւս 20-րդ դարի սկզբից ստեղծված եւ հետագայում հարստացված գրքային ֆոնդը։

Հետհայացք նետելով գրադարանի պատմությանը՝ արժե հիշատակել 20-րդ դարի սկզբին գրադարանին մեծ օժանդակություն ցուցաբերած Թբիլիսիի բարեգործական ընկերության Դիլիջանի մասնաճյուղը եւ 20-րդ դարի 20-ականների գրադարանի վարիչ Սերիկ Դավթյանին։ Նրա ջանքերով է գրադարանը հետաքրքիր միջավայր դարձել Դիլիջան այցելող ականավոր գրական եւ մշակութային գործիչների համար։ Չմոռանանք նաեւ Լենա Հովհաննիսյանին. որպես օրինակելի գրադարանի վարիչ՝ 1958 թվականին նա պարգեւատրվել է ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրության պատվոգրով, եւ վարիչներ Սիլվա Աղբալյանին ու Աիդա Ափրոյանին, որոնք ջանք չեն խնայել գրադարանային հարուստ ավանդույթները պահպանելու եւ իրենցից հետո եկողներին փոխանցելու համար։

Խորհրդային կարգերի հաստատումից հետո գրադարանը դարձել է պետական բյուջետային հիմնարկ։ Ռոտոնդային զուգահեռ, գրականության, մշակույթի, արվեստի, քաղաքական ոլորտի ականավոր ներկայացուցիչների հետ հանդիպում-զրույցները, նրանց ելույթները կազմակերպվել են նաեւ գրադարանում։

1947 թվականից գրադարանն անցել է մասնագիտական չափորոշիչներով սահմանված աշխատաոճի. կազմվել են նոր կատալոգներ, գրքամատյաններ, աշխատանքներ են տարվել գրքերի կանոնավոր շրջանառության եւ պահպանման, ընթերցողների բազայի ընդլայնման, նրանց կարիքների սպասարկման ուղղությամբ։ 1958 թվականին օրինակելի եւ բացառիկ նվիրումով ցուցաբերած աշխատանքի համար եւ 50-ամյա հոբելյանի կապակցությամբ, Դիլիջանի գրադարանն արժանացել է հանրապետության «Լավագույն քաղաքային գրադարանի» կոչմանը։ Այդ ժամանակ գրադարանն արդեն ուներ 43 հազար 917 գիրք, որոնցից 20 հազար 556-ը՝ հայերեն եւ 23 հազար 361-ը՝ ռուսերեն։ Գրադարանը նաեւ ստանում էր 84 անուն թերթեր եւ ամսագրեր՝ կրկին հայերեն եւ ռուսերեն։

Խորհրդային տարիներին Դիլիջանում մեծացած յուրաքանչյուր սերունդ այստեղ ունեցել է իր ինքնազարգացման համար բոլոր հնարավոր նախապայմանները։ Գրադարանում գործել են հետեւյալ խմբակները. հայոց լեզվի եւ գրականության խմբակ (ղեկավարներ՝ Լ. Զաքարյան, Վասիլյան), ռուսաց լեզվի եւ գրականության խմբակ (ղեկավարներ՝ Սեդա Ստեփանյան, Բ. Սեմյոնով), անգլերենի խմբակ (ղեկավար՝ Օվսաննա Գեօղլանյան)։ Հենց գրադարանում է ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արվեստաբան Սերիկ Դավթյանը

Դիլիջանի կենտրոնական գրադարանի անձնակազմը՝ հյուրերի հետ

բացել ասեղնագործության եւ ժանյակագործության խմբակը եւ փոխանցել հայ կիրառական արվեստի գաղտնիքները մատաղ սերնդին ու տարեց ընթերցասեր կանանց։ ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ, արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես Շարամբեյանն այստեղ հիմնել է առաջին գեղարվեստի խմբակ-ստուդիան եւ ուսուցանել տաղանդավոր նկարիչների ու արվեստաբանների։ Նույն գրադարանում Եղիշե Հովսեփյանի ղեկավարությամբ տեղագրական-գավառագիտական խմբակի ուսումնասիրությունները եւ հետազոտական աշխատանքները հետագայում ամփոփվել են գավառագիտական թանգարանի ստեղծմամբ։

1960-ականներին գրադարանը հաջողությամբ ստեղծել է նաեւ մասնաճյուղեր։ 15 կետերում շրջիկ գրադարանի սկզբունքով մատակարարվել է գրականություն, մեթոդաբանական օգնություն է ցուցաբերվել քաղաքի ու տարածաշրջանի մնացած նմանատիպ կառույցներին։ Խորհրդային տարիներին տեղի առողջարանները, պանսիոնատները, ճամբարները եւս օգտվել են Կենտրոնական գրադարանի ֆոնդից։ Այս ամենը հետագայում հիմք է դարձել գրադարանային կենտրոնացված համակարգի ստեղծման։ Հանրապետությունում գրադարանային առաջին կենտրոնացված համակարգը ստեղծվել է 1974-ին Դիլիջանում՝ փորձարարական կարգով։ Կենտրոնացված համակարգի մասնաճյուղեր կային Շամախյանում, Գոլովինոյում, Թախտայում, Պապանինոյում, Հաղարծին, Թեղուտ, Գոշ գյուղերում։

Խորհրդային Միության վերջին տարիներին գրադարանի ֆոնդը կազմել է 200 հազար գիրք, ընթերցողների բազան եղել է շուրջ 10 հազար։

1988 թվականի ավերիչ երկրաշարժի հետեւանքով գրադարանի առջեւ ծանրացան բազում խնդիրներ։ Շենքը վթարվել էր, գրքային ֆոնդը մաս-մաս տեղափոխվել քաղաքի մշակույթի պալատ կամ պահեստներ։ Գրադարանը մինչ այժմ գործում է մշակույթի պալատի 2-րդ հարկում եւ, չնայած շենքային անբարենպաստ պայմաններին, ակտիվորեն իրականացնում է իր գործառույթները։ Այժմ ցուցադրված է մոտ 20 հազար գիրք, իսկ ընթերցողների թիվը շուրջ 7 հազար է։

Գրադարանի երկրաշարժից վթարված քառահարկ շենքի կապիտալ հիմնանորոգումը 2000-ական թվականների առաջին տասնամյակի վերջում ստանձնեց ՀՀ կենտրոնական բանկը, որտեղ 2013 թվականին, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հետ համատեղ, բացվեց «Գիտելիք հանուն զարգացման» կենտրոնը։

▲ Մինչեւ 1968 թվականը գործող Դիլիջանի N1 միջնակարգ դպրոցի հիմնական շենքը

Դիլիջանի N1 ավագ դպրոց

Տավուշի մարզի ներկայիս տարածքում առաջին կրթարանները բացվել են 19-րդ դարի երկրորդ կեսին։ Ռուբեն Սիմոնյանն իր «Տավուշի մարզ» գրքում գրում է, որ 1890-ականներին ինը բնակավայրերում գործում էին արական մեկդասյա ծխական դպրոցներ, որտեղ սովորում էր 500 աշակերտ։ Նրանց կրթությամբ զբաղվում էր 14 մանկավարժ։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո կրթական համակարգն արմատապես փոխվեց։ 1920-ական թվականներից կիրառվել է համընդհանուր, պարտադիր ուսուցման ծրագիրը։ Գրեթե բոլոր գյուղերում բացվել են տարրական, մեծ գյուղերում՝ յոթնամյա եւ տասնամյա դպրոցներ։

Դիլիջանի առաջին դպրոցը 1868 թվականին հիմնադրել է Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, ծնունդով դիլիջանցի Հակոբ Խեմչյանը։ Ըստ պատմական

Խմոիմրոպ դոիիոեմսի

հիշատակությունների՝ այդ գործում իր աջակցությունն է ցուցաբերել Հաղարծինի վանահայր Պողոս վարդապետ Տեր-Մարգարյանը։ Ծխական դպրոցի պարապմունքները սկզբում անցկացվում էին տեղաբնակ Դավթյաններին պատկանող մի հին լքված շինության մեջ։ Դպրոցում դասավանդվել են հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, կրոնի պատմություն, վայելչագրություն, երգեցողություն առարկաները։ 1878 թվականին հանգանակություններից եւ հանդեսներից գոյացած գումարի միջոցով դպրոցի համար կառուցվել է նոր շենք, որի ընձեռած պայմանները հնարավորություն են տվել ուսման գործընթացում ընդգրկելու նաեւ հարեւան գյուղերի երեխաների։ Խորհրդային առաջին տարիներին դպրոցը եղել է ընդհանուր։ Այնուհետեւ դարձել է տասնամյա դպրոց, որտեղ իրենց ուսումը շարունակում էին յոթնամյա եւ ութամյա դպրոցների սաները։

1968 թվականին N1 դպրոցը ստանում է միջնակարգ դպրոցի կարգավիճակ եւ նույն տարում տեղափոխվում է նորակառույց շենք։ Դպրոցը երկար ժամանակ կրել է անվանի մանկավարժ Մուշեղ Սանթրոսյանի անունը եւ մշտապես ակտիվ դերակատարում է ունեցել քաղաքի հասարակական, կրթամշակութային կյանքում։ Դպրոցի նախկին ուսմասվար Արտավազդ Փիլոսյանը մեծ ներդրում է ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված դիլիջանցիների հիշատակը հավերժացնելու գործում։ Պատերազմի ավարտի 35-ամյակի կապակցությամբ հավաքվել են պատերազմում զոհվածների լուսանկարները, նրանց նամակները, փաստաթղթերն ու անձնական իրերը, եւ դրանց հիմքի վրա ստեղծվել է Փառքի թանգարան, որը հետագայում դարձել է Դիլիջանի երկրագիտական թանգարանի հավաքածուի մի մասը։

N1 դպրոցի շրջանավարտները մշտապես աչքի են ընկել իրենց մասնագիտական նվաճումներով ու հաջողություններով։

Դպրոցի անվանի շրջանավարտներից են՝

Գագիկ Դավթյանը՝ գիտնական, պետական գործիչ, 1955-1957 թթ. եղել է ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, 1957-1961 թթ.՝ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր,
Սերիկ Դավթյանը՝ արվեստագիտության թեկնածու, կիրառական արվեստի ուսումնասիրման գործում կատարել է մեծ ներդրում,
Մուշեղ Սանթրոսյանը՝ անվանի մանկավարժ, մանկավարժական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, եղել է Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ռեկտոր,
Խորեն Վաթինյանը՝ պետական, կուսակցական գործիչ, Դիլիջանի քաղխորհրդի գործկոմի նախագահ, ՀԿԿ քաղկոմի առաջին քարտուղար, ՀԽՍՀ պետշինի նախագահի տեղակալ,
Ազատ Գյուլզատյանը՝ Երեւանի պոլիտեխնիկ ինստիտուտի քիմիայի ֆակուլտետի նախկին դեկան, պրոֆեսոր,
Պարույր Սանթրոսյանը՝ հայտնի թատերական գործիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ,
Ռաֆիկ Հովհաննիսյանը՝ լրագրող, հրապարակախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, «Ոսկե գրիչ» մրցանակի դափնեկիր,
Արզաս Ոսկանյանը՝ կոմպոզիտոր, Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր, պետական մրցանակի դափնեկիր,
Ռուդոլֆ Վաթինյանը՝ կինոօպերատոր, պետական մրցանակի դափնեկիր,
Արտուշ Սահակյանը՝ վաստակաշատ մանկավարժ, պարգեւատրվել է «Պատվո նշան» շքանշանով եւ «Մովսես Խորենացի» մեդալով,
Հենրիկ Խառատյանը՝ Հայրենական մեծ պատերազմի վետերան, «Անվանի դիլիջանցիներ» քառահատոր կենսագրական բառարանի հեղինակ,
Արթուր Սահակյանը՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱ թղթակից անդամ, ԵՊՀ-ի մաթեմատիկայի եւ մեխանիկայի ֆակուլտետի դեկան,
Ալբերտ Մակարյանը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ղազարոս Ղազարյանը՝ արվեստագիտության թեկնածու, ճանաչված գեղանկարիչ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ,
Համլետ Ասատրյանը՝ ճանաչված գեղանկարիչ, ԵՊՀ-ի Իջեւանի մասնաճյուղի գծանկարի, գունանկարի եւ քանդակի ամբիոնի վարիչ, դոցենտ,
Վարազդատ Ամյանը՝ նկարիչ, քանդակագործ,
Երվանդ Ղազարյանը՝ լուսանկարիչ։

2010 թվականին կառավարության որոշմամբ իրականացվող կրթական ոլորտի կարգավորումներով դպրոցին տրվել է ավագ դպրոցի կարգավիճակ։

Կոմիտասի դամբարանը

◀ Դիլիջանի N2 ռուսական դպրոցը, 1930-ականներ

Դիլիջանի N2 հիմնական դպրոց

Խորհրդային շրջանում Դիլիջանի Պապանինո թաղամասում գործում էին N2 ռուսական եւ N3 հայկական դպրոցները։ 1988 թվականի երկրաշարժի պատճառած վնասների եւ հետագա տարիների սոցիալ-տնտեսական իրավիճակի հետեւանքով N2 եւ N3 դպրոցները միավորվեցին, որը այժմ Դիլիջանի N2 դպրոց անվանումն ունի։ Ռուսական դպրոցը հիմնադրվել է 1894 թվականին եւ սկզբնական շրջանում գործել է քաղաքային շուկայի մերձակայքում։

1920-ական թվականներին դպրոցը տեղակայված էր Ալեքսեյ Շչետինինին պատկանող տներից մեկում, այնուհետեւ տեղափոխվել է Վատոլիններից բռնագրավված տներից մեկը։ Տասնամյա դպրոցն իր առաջին շրջանավարտներին ճանապարհել է 1936-1937 ուսումնական տարում։ 1937 թվականին կոլտնտեսային այգու տարածքում շահագործման է հանձնվել դպրոցի նոր տիպային շենքը։ Այդ ժամանակահատվածում տնօրենը ֆիզիկա եւ մաթեմատիկա առարկաների ուսուցիչ Ալեքսանդր Ղահրամանյանն էր։ 1968 թվականին դպրոցը հիմնանորոգվել եւ համալրվել է նոր կառույցով, ավելացել է 10 դասասենյակ, կառուցվել է մարզադահլիճ, իսկ 1981 թվականին դպրոցը համալրվել է եւս 8 դասասենյակով։ Դպրոցի նախկին սաներն աշխատել եւ աշխատում են տնտեսության տարբեր ոլորտներում, գիտության բնագավառում, բարձր պետական պաշտոններ են զբաղեցրել հանրապետությունում եւ հետխորհրդային հանրապետություններում։ Նրանցից շատերը՝ ստանալով համապատասխան կրթություն, ունեին գիտական կոչումներ եւ դասավանդում էին բուհերում ու գիտական այլ հաստատություններում։

N2 դպրոցի տնօրեններն աշխատել են հետեւյալ հաջորդականությամբ՝

Ալեքսանդր Տեր-Պողոսյանին 70-ականներին փոխարինել է Նելլի Կրիմսկայան, նրան փոխարինել է Էսմա Խաչատրյանը, իսկ հետո դպրոցը կրկին ղեկավարել է Նելլի Կրիմսկայան։ N2 դպրոցի վերջին տնօրենը եղել է Գեորգի Գյուրջյանը, պաշտոնավարել է 1989-1999 թվականներին։
Դպրոցի անվանի շրջանավարտներից են՝

Եվդոկիա Կուլիկովան՝ հանրապետության վաստակավոր բժիշկ, պրոֆեսոր, նեւրապաթոլոգ,
Ալեքսանդրա Շչերբակովան՝ քաղխորհրդի գործկոմի նախագահ,
Նադեժդա Չեպելը՝ քաղխորհրդի գործկոմի երկարամյա նախագահ,
Իվան Սեմյոնովը՝ 1987-1991 թթ. ՀԽՍՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար, պետական եւ հասարակական գործիչ, տնտեսագիտության թեկնածու,
Աշոտ Մկրտումյանը՝ բժշկագիտության դոկտոր, պրոֆեսոր, Մոսկվայի N3 բժշկական ինստիտուտի էնդոկրինոլոգիայի եւ դիաբետոլոգիայի ամբիոնի վարիչ, Էնդոկրինոլոգիայի եվրոպական ասոցիացիայի անդամ,
Վլադիմիր Պոսոշկովը՝ գիտությունների թեկնածու, օվկիանոսագիտական արշավախմբի գիտական աշխատակից,
Նելլի Թովմասյանը՝ գինեկոլոգ, բժշկագիտության թեկնածու,
Արմեն Ղուլյանը՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր,
Ալբերտ եւ Ռոբերտ Պետրոսյանները՝ հեռավոր նավարկության կապիտաններ եւ ուրիշներ։

1988 թվականին N2 դպրոցն ուներ միջազգային կազմ եւ ավելի քան 800 աշակերտ։

Դիլիջանի N3 դպրոց

Դիլիջանի N3 դպրոցը բացվել է 1935 թվականին: Վերջինս կոչվել է Դիլիջանի յոթնամյա կամ թերի միջնակարգ դպրոց: Դպրոցի դասասենյակները գտնվում էին քաղաքի նախկին մեծահարուստներից Իսրայել Բեկի տան 2-րդ հարկում (4-րդ դասարան), Մյասնիկյան փողոցի դեղատան տարածքում, քաղաքային գրադարանի նախկին շենքում (4-րդ դասարան, ուսուցչանոց), կապի քաղաքային հանգույցի տարածքում, մշակույթի պալատի տարածքում (1-ին դասարան):

1939-1940 թթ. ուսումնական տարում Դիլիջանի յոթնամյա դպրոցը տեղափոխվում է Կալինինի փողոցի վրա կառուցված նոր շենք: Այդ ուսումնական տարում դպրոցն ուներ 18 դասարան, 528 աշակերտ: Երբ սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմը, դպրոցը տեղափոխվում է իր նախկին շենքը, քանի որ նոր շենքը վերածվում է ռազմական հոսպիտալի: Միայն պատերազմի ավարտից հետո է դպրոցը կրկին տեղափոխվել իր հիմնական շենք՝ մեկ հարկի տակ գոյակցելով նորաբաց բժշկական ուսումնարանի հետ:

Դիլիջանի N3 դպրոցը հիմնականում գործել է N2 դպրոցի հետ: 1956-1957 ուստարում դպրոցը կոչվել է N2 միջնակարգ, իսկ 1959 թվականին վերանվանվել է N3 միջնակարգ դպրոց: 1963-1965 թվականներին կառուցվել են մարզադահլիճն ու արհեստանոցն երը, 1979-1980-ականներին՝ կից մասնաշենքերն ու հրաձգարանը: 1982-1988 թթ. դպրոցում գործում էր տրիկոտաժի ֆաբրիկայի օժանդակությամբ բացված կարի արտադրամասը:

Կրթօջախի առաջին տնօրենը Սուրեն Օհանյանն էր. նա հետագայում աշխատել է քաղխորհրդի կրթության բաժնի վարիչ, իսկ դպրոցի ուսմասվարը եղել է Երվանդ Հայրումյանը: 1945-1952 թթ. դպրոցը ղեկավարել է Արամազդ Շահբազյանը, 1952-1960 թթ.՝ Շամիր Ոսկանյանը, 1960-1961 թթ.՝ Վերգուշ Սահակյանը, 1961-1965 թթ.՝ Ժորա Ղուկասյանը, 1965 թ. հուլիս-օգոստոսին՝ Սամվել Պետրոսյանը, 1965-1974 թթ.՝ Անուշավան Հարությունյանը, 1974-1976 թթ.՝ Վազգեն Հակոբյանը, 1976-1977 թթ.՝ Մարգո Մայիլյանը (տնօրենի պաշտոնակատար), 1977-1987 թթ.՝ Օնիկ Սարգսյանը, 1987-1999 թթ.՝ Կամո Խաչատրյանը:

1988 թ. դեկտեմբերի ավերիչ երկրաշարժի հետեւանքով վթարային դարձավ նաեւ դպրոցի շենքը: Քաղաքի ղեկավարության եւ դպրոցի տնօրինության ջանքերի շնորհիվ մեկ ամսում երգչախմբային ընկերության հարակից տարածքում տեղադրվեց 12 տնակ, եւ շուրջ 10 տարի մանկական զբոսայգում իր գործունեությունը ծավալեց տնակային դպրոցը, որից հետո մտավ N2 միջնակարգ դպրոցի կազմի մեջ:

N3 դպրոցն իր գործունեության ընթացքում տվել է բազմաթիվ շրջանավարտներ, որոնք իրենց արժանի ավանդն են ներդրել երկրի զարգացման գործում.

Սուսաննա Ղուկասյանը՝ Երեւանի Ճարտարագիտական համալսարանի դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու,
Ռուսլան Հարությունյանը՝ Լիտվայի նախագահին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի նախագահ,
Մխիթար Քեթցյանը՝ երաժիշտ,
Ժասմենա Գրիգորյանը՝ դերասանուհի,
Նորայր Քարտաշյանը՝ բլուլահար եւ ուրիշներ:

Դիլիջանի N4 հիմնական դպրոց

N4 դպրոցը հիմնադրվել է 1968 թվականին Ջրհողեր թաղամասում՝ նոր կառուցապատվող Ջրհողեր եւ Կաղնի Խաչ թաղամասերի բնակչության կրթական կարիքների բավարարման նպատակով։ Սովորողների թվով քաղաքի խոշոր դպրոցներից է։ Մինչեւ իր հիմնական շենք տեղափոխվելը դպրոցում երկրորդ հերթով պարապմունքներ էր անցկացնում նաեւ բժշկական ուսումնարանը։ Դպրոցը ղեկավարել են կրթական գործի հմուտ կազմակերպիչներ Սեդա Մամյանը, Վազգեն Հակոբյանը, Կառլեն Ղուկասյանը, Էլֆիկ Եսայանը, Ծովիկ Մկրտչյանը։ 2014 թվականից տնօրենն Էրիկա Սեւանյանն է։

1988 թվականին երկրաշարժից մեծապես տուժել էր նաեւ N4 միջնակարգ դպրոցը, որը ժամանակավոր սկսեց գործել N4 մանկապարտեզի շենքում։ 2004 թվականին շահագործման հանձնվեց դպրոցի նորակառույց առաջին մասնաշենքը, 2009-ին՝ երկրորդը։ Դպրոցի նոր շենքի կառուցման գործում մեծ ֆինանսական ներդրում են կատարել սփյուռքահայ բարերարներ Ադելինա եւ Ստեփան Ստեփանյանները։

Դպրոցում սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը եւ աշակերտների շրջանում հանրօգուտ աշխատանքի նկատմամբ պատրաստակամության ձեւավորումը բարձր հիմքերի վրա է դրված։ Դպրոցականները մեծ ակտիվությամբ են մասնակցում համաքաղաքային շաբաթօրյակներին, ծառատունկերին եւ թաղամասի կանաչապատմանն ու բարեկարգմանն ուղղված այլ աշխատանքների։

Դպրոցի անվանի շրջանավարտներից են՝

Զավեն Բոյաջյանը՝ կինոգետ, թարգմանիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր,
Գեորգի Հարությունյանը՝ կինոռեժիսոր,
Սերգո Հովհաննիսյանը՝ վիրաբույժ-ստոմատոլոգ, հանրապետության զինվորական հոսպիտալի բաժանմունքի վարիչ,
Մառա Ենգիբարյանը՝ բժշկագիտության թեկնածու,
Նառա Ենգիբարյանը՝ առաջատար բժիշկ։

Դիլիջանի N5 միջնակարգ դպրոց

N5 միջնակարգ դպրոցը քաղաքի հնագույն դպրոցներից է, հիմնադրվել է 1890 թվականին Պողոսքիլիսա գյուղում (Դիլիջանի Շամախյան թաղամաս)։ Դպրոցի բացման եւ գործունեության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ են հրապարակվել Թիֆլիսում լույս տեսնող հայկական թերթերում ու ամսագրերում։

Դիլիջանի պատմության հետազոտող Հենրիկ Խառատյանն իր «Պողոսքիլիսայի առաջին կրթօջախը» հոդվածում մեջբերում է «Արձագանք» շաբաթաթերթից մի հատված, որը դպրոց բացելու առաքելությամբ գյուղ ժամանած ծխական դպրոցների թեմական տեսուչ Եղիշե քահանա Գեղամյանի այցի մասին է. «Նա գալիս է օգոստոսի 13-ին Պողոսքիլիսա գյուղ, որտեղ 4 հարուստ ծերունի պատկառելի անձանց ստորագրությամբ բացում է տղայոց միդասյան ուսումնարանը եւ նշանակում ուսուցիչներ»։

Հոդվածի հեղինակը հիշատակում է նաեւ անտառի վարչության տեսուչ Ալեքսանդր

Ռոտիցյանի 1881 թվականին կատարած այցը Պողոսքիլիսա եւ ներկայացնում գյուղի կրթական վիճակը։ Նա վկայակոչում է «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում տպագրված հոդվածը, որը հրապարակվել է թերթի 1881 թվականի մայիսի 14-ի համարում. «Գյուղի ժողովուրդը կիսով չափ պարապում է առեւտրական գործերով։ Գյուղի երեխայքը ուսում են առնում Դիլիջանի ծխական ուսումնարաններում եւ մեծ ընդունակություն են ցույց տալիս։ Առհասարակ վարժապետները ամեն տեղ վկայում են, որ գյուղացոց երեխայք առավել ընդունակությունների տեր են, քան քաղաքացոցը»։

N5 դպրոցում շատ անվանի մարդիկ են ստացել իրենց նախնական կրթությունը.

Վախթանգ Անանյանը՝ անվանի գրող,
Անահիտ Անանյանը՝ սոցիալիստական աշխատանքի հերոս,
Սերիկ Անանյանը՝ բժշկագիտության դոկտոր,
Արսեն Անանյանը՝ քիմիկոս, գիտությունների թեկնածու, Ռուսաստանի հիդրոնախագծերի, գիտական արշավախմբերի լաբորատորիաների կառավարիչ,
Աղասի Ենոքյանը՝ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր։

Դպրոցը շուրջ չորս տասնամյակ ղեկավարել է վաստակաշատ մանկավարժ Վազգեն Ասլանյանը։ 1999 թվականից դպրոցի տնօրենն է Հովհաննես Անանյանը։

Դպրոցի նոր շենքը կառուցվել է 1988 թվականին։ Ի պատիվ գրող Վախթանգ Անանյանի՝ 2005 թվականին դպրոցը կոչվել է նրա անունով։

Դիլիջանի N6 հիմնական դպրոց

1940-ականներին հայրենադարձների մեծ մասը բնակություն հաստատեցին Գոլովինոյում, եւ նրանց կրթական կարիքները բավարարելու նպատակով Գոլովինոյի Ախպարաշեն կոչվող թաղամասում 1950 թվականին բացվեց ութամյա դպրոց։ Դպրոցի առաջին տնօրենն աշխարհագրության ուսուցիչ Սուրեն Պողոսյանն էր։

Մինչ Երկրորդ համաշխարհային պատերազմն այս թաղամասում ԴՈՍԱԱՖ-ի շենքի տեղում գործել է նաեւ ռուսական դպրոց, որը տեղակայված էր մեկհարկանի երեք տարբեր կառույցներում։ Գոլովինոյի ռուսական դպրոցի մանկավարժական անձնակազմից հիշատակվում են Լեոնիդ Պոսոշկովը, Ելենա Գավրիլովնան, Աննա Զադորկինան, Մարիա Կիրիլովնան եւ այլք։ Մինչ 1961 թվականն այստեղ տնօրեն է աշխատել Ալեքսանդր Տեր-Պողոսյանը։

1975 թվականին Գոլովինոյի ռուսական եւ հայկական դպրոցները տեղափոխվել են նոր տիպային շենք։ N6 դպրոցն ուներ միջնակարգ դպրոցի կարգավիճակ եւ ռուսական բաժին։ Դպրոցը չորս տասնամյակ շարունակ ղեկավարել է վաստակաշատ մանկավարժ, պատերազմի մասնակից, Պատերազմի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի, Փառքի 2-րդ եւ 3-րդ աստիճանների շքանշանակիր Ժորա Ժամհարյանը։

Դպրոցի անվանի շրջանավարտներից են՝

Մարինե Ժամհարյանը՝ թերապեվտ,
Պետրոս Դուրյանը՝ երաժիշտ,
Պետրոս Սաղրյանը՝ ինժեներ-կոնստրուկտոր,
Հարութ Բաթմանյանը՝ ֆուտբոլիստ,
Հրաչիկ Հայրապետյանը՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հակոբ Մոմջյան՝ մաթեմատիկական գիտությունների թեկնածու։

▲ Բաբաեւի անվան երաժշտական դպրոցի ջութակահարների անսամբլի ելույթը, 1980-ականներ

Դիլիջանի արվեստի պետական քոլեջ

Դիլիջանի արվեստի պետական քոլեջը հիմնադրվել է 1945 թվականից գործող եւ հարուստ ավանդույթներ ունեցող երաժշտական դպրոցի հիմքի վրա։

Քաղաքի առաջին երաժշտական դպրոցը ներկայիս ամֆիթատրոնի դիմացի շենքում մի քանի սենյակ էր զբաղեցնում։ Սկզբում գործել են միայն դաշնամուրի եւ ջութակի դասարաններ։ Դպրոցի առաջին տնօրենը Գագիկ Դավթյանն էր, նրանից հետո դպրոցը ղեկավարել է Սերգեյ Պետրոսյանը. նա միաժամանակ դասավանդել է ջութակ ու սոլֆեջիո։ Սոլֆեջիոյի եւ դաշնամուրի ուսուցիչների շարքում հիշատակվում են նաեւ Ամալյա Ոսկանյանը եւ նրա քույր Ջուլիետան, Կիրովականից հրավիրված ուսուցչուհի տիկին Էլեոնորան։ Հետզհետե դպրոցն ընդլայնվել է, բացվել են նաեւ թավջութակի (ուսուցիչ՝ Նիկոլայ Կարպուշչենկո), ակորդեոնի (ուսուցիչ՝ Պետրոս Դուրյան), շեփորի (ուսուցիչ՝ Գրիգորի Գրիգորյան) դասարաններ, ավելի ուշ՝ քանոնի

եւ կլառնետի բաժիններ։ Դպրոցում կրթությունն ի սկզբանե եղել է յոթնամյա, ժողգործիքների բաժնում՝ հնգամյա։ Սերգեյ Պետրոսյանը ոչ միայն ղեկավարել է դպրոցը, այլ նաեւ համատեղությամբ եղել է Դիլիջանի զորագնդի նվագախմբի խմբավարը։ Հենց նրա անձնական նախաձեռնությամբ եւ ջանքերի շնորհիվ Իջեւանում 1957-58 ուսումնական տարում Դիլիջանի երաժշտական դպրոցի մասնաճյուղ է բացվել։

1950-ականներից երաժշտական դպրոցի եւ քաղաքի երաժշտարվեստի զարգացման գործում մեծ ներդրում են ունեցել Հունաստանից հայրենադարձված Կարակոչյան եղբայրները։ Ավագ եղբայրը՝ Գառնիկը, աշխատել է երաժշտական դպրոցում որպես երգի ուսուցիչ եւ խմբավար, ապա Դիլիջանի N1 եւ N4 հանրակրթական դպրոցներում դասավանդել է երգ-երաժշտություն։ Այս ամենից զատ, նա Դիլիջանում իրականացրել է ծավալուն մշակութային ծրագիր, մշակույթի պալատում վարել է կիթառի եւ մանդոլինայի պարապմունքներ։ Գառնիկը մասնագիտությամբ խմբավար էր եւ քաղաքի պիոներտանը հիմնել էր մեծահասակների (ուսուցիչների ու բուժաշխատողների) երգչախումբ, որը մասնակցել է երգչախմբային փառատոնների եւ մրցույթների։ Գառնիկ Կարակոչյանն օժանդակել է վոկալ-գործիքային անսամբլի ստեղծմանն ու դրա գործունեությանը, ձեռնամուխ է եղել Ռոտոնդայում շաբաթ-կիրակի օրերին փողային նվագախմբի ելույթների կազմակերպմանը, Էմմա Ծատուրյանի հետ միասին հիմնադրել է «Երգի տոնը» Դիլիջանում, որն ամենամյա մրցույթ-տոնակատարություն էր քաղաքում։

1957 թվականին Սերգեյ Պետրոսյանը տեղափոխվել է Երեւան, եւ դպրոցի տնօրեն է նշանակվել Գառնիկ Կարակոչյանի կրտսեր եղբայրը՝ Հրաչյան։ Իր երկարամյա գործունեությամբ նույնպես հիանալի ավանդույթներ է հիմնել այս կրթօջախում։ Նրա հետ դպրոցում աշխատում էր նաեւ կինը՝ Աիդա Գրիգորյանը. ամուսնու մահից հետո հենց նա է ստանձնել արվեստի այս կրթօջախի ղեկավարությունը։ Հրաչյա Կարակոչյանի գործունեության տարիներին իր իսկ նախաձեռնությամբ ստեղծվել են լարային, փողային, էստրադային նվագախմբեր, դպրոցականների եւ ուսուցիչների երգչախմբեր, նոնետ, օկտետ, որոնք բավականին հարուստ երգացանկերով ելույթներ են ունեցել եւ արժանացել պարգեւների։ Մի անգամ նույնիսկ ստացած դրամական խրախուսանքների միջոցով կարողացել են մեկնել Մոսկվա էքսկուրսիայի։ Վերոհիշյալ նվագախմբերը եւ երգչախմբերը տարիներ շարունակ իրենց ելույթներով եւ ամենամյա հաշվետու համերգներով հիացրել են դիլիջանցի հանդիսատեսին, բարձրակարգ ծրագրերով մասնակցել քաղաքային բոլոր միջոցառումներին, հանրապետական մրցույթներին եւ փառատոններին։

1970 թվականին դպրոցը տեղափոխվել է Պապանինո թաղամասում շահագործման հանձնված հիմնական շենք, ինչը մեծապես նպաստել է կրթօջախի զարգացմանը։ Ընդլայնվել են արդեն իսկ գործող բաժինները, ավելացել են դաշնամուրի, լարային եւ փողային գործիքների բաժինները, զարգացում է ապրել նաեւ դպրոցական երգչախումբը։ Շատ կարճ ժամանակում, շնորհիվ Խաչիկ Ղազարյանի անձնվեր գործունեության, կտրուկ վերելք է ապրել ժողգործիքների բաժինը։ Ինքն անձամբ դասավանդել է գրեթե բոլոր ժողովրդական նվագարանները՝ քամանչա, թառ, շվի, դուդուկ, ուդ, նաեւ ստեղծել է ժողգործիքների անսամբլ։

▶ Դիլիջանի գեղարվեստի դպրոցը

Կոմպոզիտորների ստեղծագործական տան առկայությունը Դիլիջանում մեծ ներգործություն է ունեցել նաեւ երաժշտական դպրոցի վրա։ Դպրոցի մեծ դահլիճում հյուրընկալվել եւ ելույթ են ունեցել Դիլիջանում իրենց հանգիստը վայելող մի շարք անվանի երաժիշտներ, կոմպոզիտորներ, իսկ ավելի հաճախ՝ հայ երաժշտարվեստի ականավոր ներկայացուցիչներ Էդվարդ Միրզոյանը, Առնո Բաբաջանյանը, Արամ Սաթյանը, Մարտին Վարդազարյանը։ Ի դեպ, հենց Էդվարդ Միրզոյանի առաջարկով է ինչ-որ ժամանակահատված կրթօջախը կոչվել Անդրեյ Բաբաեւի անունով։

1987 թվականից ի վեր այս կրթօջախը ղեկավարում է նախկին սան, դաշնակարուհի, ՀՀ ԿԳՆ ոսկե մեդալակիր, Հայաստանի Հանրապետության կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության «Արամ Խաչատրյան 100» հուշամեդալով պարգեւատրման արժանացած վաստակաշատ մանկավարժ Հասմիկ Մկրտումյանը։

Նրա մեծ ջանքերի շնորհիվ էր, որ 1992 թվականին դպրոցը վերակազմավորվեց մանկապատանեկան

Բնամիտրաց դասարան

ակադեմիայի հետ, իսկ 1997 թվականին կառավարության որոշմամբ ձեռք բերեց Արվեստի պետական քոլեջ միջին մասնագիտական հաստատության կարգավիճակ՝ իր կազմում պահպանելով նաեւ երաժշտական դպրոցը։ Քոլեջում ստեղծվեց վեց ամբիոն, որոնց մասնագիտական բաժինները գործում են նաեւ դպրոցում։

Քոլեջը բազմիցս հյուրընկալել է Հայաստանի եւ արտերկրի արվեստի բազմաթիվ անվանի երաժիշների եւ երաժշտախմբերի, դրանց թվում՝ Կոմիտասի անվան լարային քառյակին, Արամ Խաչատրյանի անվան տրիոյին, սփյուռքի նշանավոր այնպիսի երաժիշտների, ինչպիսիք են ջութակահար Մովսես Պողոսյանը, հայտնի դաշնակահար Շահան Արծրունին եւ ուրիշներ։ Տնօրինության հմուտ ղեկավարման եւ ջանքերի շնորհիվ քոլեջի եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի միջեւ ստեղծվել է ամուր համագործակցություն։ Կոնսերվատորիայի դասախոսները եւ ճանաչված արվեստագետները հաճախ են կազմակերպում վարպետաց դասեր, համերգներ, հանդիպումներ։

Արվեստի պետական քոլեջը ակտիվ դերակատարում ունի քաղաքի եւ մարզի մշակութային կյանքում։ Երաժշտական դպրոցը, հետագայում նաեւ քոլեջն ունեցել են շնորհալի եւ անվանի շրջանավարտներ, նրանցից են Կոնսերվատորիայի պրոֆեսոր, պետական մրցանակների դափնեկիր, կոմպոզիտոր Արզաս Ոսկանյանը, «Հայրենի երգ» ժողովրդական երգի ստուդիայի գեղարվեստական ղեկավար, երգիչ, երգահան Մխիթար Քեթցյանը, շվիահար Նորայր Քարտաշյանը, քանոնահար Շուշանիկ Սաղաթելյանը, դուդուկահար Վարդան Սաղաթելյանը եւ ուրիշներ։

2021 թվականին ՀՕՖ բարեգործական հիմնադրամի եւ տեր ու տիկին Թոֆյանների ֆինանսավորմամբ կատարվել է քոլեջի շենքի կապիտալ հիմնանորոգում։ Թարմացվել է գույքը, նաեւ նոր երաժշտական գործիքներ են ձեռք բերվել։ Դիլիջանի արվեստի պետական քոլեջը միակն է մարզում։

Նկարչական դպրոց

Մինչեւ Շարամբեյանի գործունեության ծավալումը, ըստ տեղացիների վկայութունների՝ երեխաներին նկարչական արվեստին հաղորդակից է դարձրել նկարիչ Մամիկոն Ղուլյանը։ Նա մասնագիտական կրթություն չի ունեցել, սակայն հմտորեն տիրապետել է նկարչական արվեստին։

Արվեստի եւ մշակույթի ականավոր գործիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Հովհաննես Շարամբեյանը Դիլիջանում հաստատվել է 1940-ականների կեսից եւ իր գործունեությամբ մեծապես նպաստել կերպարվեստի ու կիրառական արվեստի, թանգարանների զարգացմանը։

1947 թվականին Դիլիջանի Ղազարոս Աղայանի անվան գրադարանին կից Շարամբեյանը հիմնել է գեղարվեստի ստուդիա, որտեղ սովորելու համար ոչ մի տարիքային սահմանափակում չի եղել։ Այստեղ ուսանելու, շփվելու, պարզապես զրուցելու են եկել բոլոր նրանք, ում հետաքրքիր էին արվեստի ու արհեստների պարզ, նաեւ բազմաշերտ էությունն ու արտահայտչաձեւերը։

Շարամբեյանի դպրոցում ուսանած շուրջ 15 նկարիչներ, ստանալով մասնագիտական կրթություն, վերածնունդ տվեցին եւ հետագայում բարձր նշածող սահմանեցին քաղաքային մշակույթի եւ տարաբնույթ արվեստների զարգացման գործում։ Այդ շարքը գլխավորում են Համլետ Ասատրյանը (ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի գծանկարի, գունանկարի եւ քանդակի ամբիոնի դոցենտ), Ղազար Ղազարյանը (ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, գեղանկարիչ), Հասմիկ Զաքարյանը (ճարտարապետ, արվեստի պատմության դասավանդող), Վարազդատ Ամյանը (նկարիչ, քանդակագործ), Սամվել Գյուլզատյանը (նկարիչ), Սերժիկ Դավթյանը (նկարիչ), Սիլվա Պողոսյանը (ճարտարապետ), Էդիկ Հարությունյանը (ճարտարապետ), Ալբերտ Պողոսյանը (ճարտարապետ), Երվանդ Ղազարյանը (լուսանկարիչ) եւ այլք։

1970 թվականին Հովհաննես Շարամբեյանը հետամուտ է եղել նկարչական ստուդիայի բազայի հիման վրա գեղարվեստի դպրոցի ստեղծմանը, որը բացվել է Պապանինո թաղամասի N2 մշակույթի տանը եւ հետագայում վերանվանվել է այսպես՝ Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի մանկական դպրոց։ Նորաբաց դպրոցը գործում էր պետական հովանավորությամբ, ինչը հնարավորություն ընձեռեց այդ կրթօջախը հարստացնել անհրաժեշտ գույքով, գեղարվեստի պարագաներով, դիդակտիկ նյութերով եւ, բնականաբար, գործել է խորհրդային չափորոշիչներով սահմանված ծրագրով։ Մինչ օրս դպրոցում դասավանդվող առարկաների ցանկը նույնն է՝ գծանկար, գունանկար, կոմպոզիցիա, արվեստի պատմություն, քանդակագործություն եւ կիրառական արվեստի ճյուղեր։ Դպրոցն ունեցել է փայլուն եւ շնորհաշատ շրջանավարտներ՝ Սամվել Ֆրանգուլյան, Տիգրան Ղուլյան, Աղասի Գոգչյան, Գառնիկ Ղազարյան, Հրաչ Հայրապետյան, Համլետ եւ Գեւորգ Մակվեցյաններ եւ ուրիշներ։ Նրանք հետագայում իրենց մասնագիտական աշխատանքը համատեղել են նաեւ դպրոցում դասավանդելով։

Դպրոցի առաջին տնօրենը գեղանկարիչ եւ քանդակագործ Վարազդատ Ամյանն էր։ Հետագայում այս կրթօջախը ղեկավարել են Սամվել Ֆրանգուլյանը, Մարիետա Քոչարյանը։ Վերջինս, ի դեպ, ձեռնամուխ է եղել Սերիկ Դավթյանի ստեղծած ասեղնագործության եւ ժանյակների դիլիջանյան հավաքածուին վերածննդին եւ հարստացմանը։ Այդ գործում իր ավանդն է ունեցել նաեւ Նուշիկ Մալխասյանը։

2007 թվականից դպրոցը ղեկավարում է նույն դպրոցի նախկին սան Հրեղեն Գասպարյանը։ Վերջինիս ակտիվ նախաձեռնողականության շնորհիվ ոչ միայն պահպանվել են դպրոցի լավագույն ավանդույթները, այլեւ բարելավվել է նյութատեխնիկական բազան եւ ընդլայնվել դպրոցի գործունեությունը։ 2012 թվականից դպրոցում բացվել է նաեւ պարարվեստի բաժին։

Գեղարվեստի դպրոցի սաները մեծ ձեռքբերումներ են ունեցել ոչ միայն հանրապետական, այլեւ միջազգային ստուգատեսներում։ Գրեթե ամեն տարի դպրոցը մասնակցել է միջազգային փառատոներին, արվեստի մրցույթներին՝ Հնդկաստանում, Եգիպտոսում, Բուլղարիայում, Ռուսաստանում եւ այլ երկրներում։ Հատկապես արժե հիշատակել Չեխիայում պարբերաբար անցկացվող Լիդիցեի միջազգային փառատոնից ստացված պարգեւները, որոնք հիմնականում պատանի սռեղծագործողներին հանձնել են անձամբ ՀՀ-ում հավատարմագրված Չեխիայի դեսպանները։

Գեղարվեստի դպրոցը մշտապես ակտիվորեն մասնակցում է համաքաղաքային, մարզային եւ հանրապետական մշակութային միջոցառումներին։

Մարզադպրոց

Դիլիջանում մարզադպրոց գործել է դեռեւս 1950-ականներից։ Այս դպրոցը քաղաքային շուկայի՝ ներկայիս Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահի հարակից տարածքում գտնվող մեկհարկանի շենքում էր։ Տնօրեն էր նշանակվել մարմնամարզության (թեթեւ ատլետիկայի) մարզիչ Հրանտ Դավթյանը։ Հետագայում թեթեւ ատլետիկայի զարգացման գործում իր ներդրումն է ունեցել նաեւ Միշա Սաղաթելյանը։

Մարզադպրոցի նոր շենքը կառուցվել է 1965 թվականին եւ գործում է մինչ օրս։ Ունենալով անհրաժեշտ շենքային պայմաններ եւ գույք՝ հնարավորություն ստեղծվեց դպրոցում զարգացնել այլ մարզաձեւեր եւս։ Շատ շուտով Դիլիջանում սկսեցին մասսայականություն վայելել ըմբշամարտը, ձեռքի գնդակը, թենիսը, մինի ֆուտբոլը, վոլեյբոլը, բասկետբոլը, թեթեւ ատլետիկան։ Այժմ մարզադպրոցի ղեկավարությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացմանը։ Վերջին տարիներին լայն տարածում գտան նաեւ կարատե-դոն եւ ուժային քառամարտ մարզաձեւերը (մարզիչ՝ Գարիկ Թովմասյան)։

1980-ականներին Պապանինո թաղամասում բացվել է նաեւ Սպորտկոմիտեի մարզադպրոցը, որն իր մարզումները կազմակերպում էր բազմահարկ շենքերի բացվածքներում (բազմահարկ շենքերի առաջին հարկում գտնվող ազատ տարածքներ)։ Մարզադպրոցը տեւական ժամանակ ղեկավարում էր քաղժողկրթբաժինը, իսկ հետագայում մարզական ոլորտի աշխատանքները համակարգում էր նաեւ քաղխորհրդի գործկոմին առընթեր սպորտկոմիտեն, որի գործունեության մեջ նշանակալի ավանդ են ունեցել կոմիտեի նախագահներ Հրանտ Դավթյանը, Ցոլակ Բեջանյանը, Լյովա Պետրոսյանը։

Խորհրդային տարիներին Դիլիջանից եւ հարակից գյուղերից մեծ թվով մարզիկներ էին ընդգրկվել հանրապետության հավաքականներում։ Օրինակ՝ մարզադպրոցի երկարամյա տնօրեն, սպորտի վարպետ Թալոր Պետրոսյանն ընդգրկված էր ըմբշամարտի հանրապետական հավաքականի կազմում։ Մասնակցելով 1980 թ. Մոսկվայի Օլիմպիական խաղերին՝ նա 17 միավոր է բերել հանրապետական հավաքականին։ Իսկ թեթեւ ատլետիկա մարզաձեւում մեծ ձեռքբերումներ է ունեցել Զավեն Ամյանը։ Նա 1973-ին դարձել է դպրոցականների Հայաստանի չեմպիոն, իսկ 1975-1977 թթ. եղել է մեծահասակների բարձրացատկի Հայաստանի բազմակի չեմպիոն։ Ճանաչված մարզիկը մարզադպրոցում տարիներ շարունակ նվիրվել է մարզչական գործունեությանը։

Դիլիջանում ըմբշամարտի զարգացման գործում մեծ ավանդ ունի վաստակաշատ մարզիչ, սպորտի վարպետ Լյուդվիգ Պետրոսյանը, բասկետբոլում՝ Նորիկ Թամամյանը, Էդիկ Ոսկանյանը եւ Հրանտ Ղարախանյանը։ Վոլեյբոլի հավաքականը երկար տարիներ մարզել են Ազատ Ալիխանյանը եւ Հենրիկ Նազարյանը։ Ձեռքի գնդակի զարգացման գործում էլ մեծ ավանդ ունի մարզիչ Ստեփան Սամոյլովը։ Քաղաքի մարզական ոլորտի զարգացման գործում իրենց ներդրումն են ունեցել նաեւ Միշա եւ Ռոբերտ Աթաբեկով եղբայրները, N19 գիշերօթիկ դպրոցի երկարամյա ֆիզղեկ, սպորտի նվիրյալ Իլյիչ Հովհաննիսյանը, նրա սաները՝ Անահիտ եւ Օֆելյա Սիմոնյան քույրերը. նրանք սեղանի թենիս մարզաձեւում 1977 եւ 1978 թթ. արժանացել են Հայաստանի չեմպիոնի բարձրագույն տիտղոսին։

Դիլիջանում հաճախ էին կազմակերպվում հանդիպումներ միջազգային ճանաչում ունեցող մարզիկների հետ՝ Տիգրան Պետրոսյան, Յուրի Վարդանյան, Նորիկ Մուշեղյան, Սմբատ Լպուտյան, վերջին տարիներին՝ Արթուր Ալեքսանյան, Միհրան Հարությունյան եւ ուրիշներ։

Դիլիջանի N19 գիշերօթիկ դպրոց

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տնտեսական, սոցիալական, կրթական ծանր վիճակում խնդիրներին լուծումներ տալու նպատակով խորհրդային իշխանությունները ստիպված էին հատուկ ռազմավարական ծրագիր մշակել։ Բնակելի շենքերի շինարարությանը զարկ տալուն զուգընթաց, կառուցվեցին նաեւ մսուր-մանկապարտեզներ ու գիշերօթիկ հաստատություններ։
1956 թվականի գարնանը նախագծված ինտերնատները հիմք դարձան գիշերօթիկ դպրոցների եւ ինտերնատ հասկացության առավել ընդգրկուն շրջանառմանը։ Դրանք միտված էին աջակցություն ցուցաբերել միայնակ մայրերին, բազմազավակ կամ նվազ եկամուտ ունեցող ընտանիքներին, վատառողջ կամ հաշմանդամություն ունեցող երեխաներին։

1961 թվականի նոյեմբերին Դիլիջանում բացված N19 գիշերօթիկ դպրոցը նույնպես այդ համակարգի մի օղակ էր։ Սկզբնական փուլում վերջինս նախատեսված էր կոնտակտավոր (տուբերկուլոզով հիվանդների հետ շփված) երեխաների ապաքինման համար։
Այդ իսկ պատճառով դպրոցը գտնվում էր դիլիջանյան առողջարանային գոտում՝ քաղաքի կենտրոնից 7 կմ հեռավորության վրա գտնվող Գոլովինո թաղամասում։ Այնտեղ միաժամանակ ապահովվում էր երեխաների միջնակարգ կրթության շարունակականությունը։

Քանի որ գիշերօթիկը միաժամանակ եւ՛ առողջարանային, եւ՛ հանրակրթական հաստատություն էր, ուներ նաեւ ըստ հարկի նյութատեխնիկական բազա. ուսումնական մասնաշենք՝ դասասենյակներով, առարկայական լաբորատորիաներով, խմբակային պարապմունքների սենյակներով, ննջարանային մասնաշենք՝ տղաների եւ աղջիկների համար առանձին ննջասենյակներով։ Կային նաեւ հանգստի, բուժման, հիգիենիկ կարիքները հոգալու, սպորտի եւ արտաուսումնական ժամանցի կազմակերպման գոտիներ։ Գիշերօթիկն ուներ սպասարկող անձնակազմի համար նախատեսված հատուկ սենյակներ (կոշկակարի, դերձակի, վարսահարդարի), օժանդակ կառույցներ (լվացքատուն, կաթսայատուն, արհեստանոց), բուժմաս, խոհանոց իր ճաշարանով, մարզադահլիճ եւ մարզահրապարակ, աշխարհագրական հետազոտությունների իրականացման հրապարակ, լողավազան, կենդանաբանական անկյուն, որտեղ երեխաները խնամում էին եղնիկներին, փասիանների եւ արջին։ Դպրոցն ուներ նաեւ լայնարձակ մրգատու այգի։

1960-ականների վերջին, երբ տուբերկուլոզը հիմնականում հաղթահարված էր, գիշերօթիկն սկսեց հյուրընկալել նաեւ միակողմանի եւ երկկողմանի ծնողազուրկ եւ անապահով ընտանիքների երեխաների։ Այստեղ ուսանել են Հայաստանի գրեթե բոլոր շրջանների երեխաներ, նաեւ՝ Սուխումիից։ Երեխաներն ապրում եւ կրթություն էին ստանում այստեղ, իսկ ընտանիքների գիրկն էին վերադառնում միայն արձակուրդին։ Բացառություն էին դիլիջանցի երեխաները. նրանք կարող էին նաեւ շաբաթ-կիրակին անցկացնել ընտանիքի հետ, իսկ ծնողները կարող էին ցանկացած ժամանակ այցելել երեխաներին։

Շենքային կառույցները նախատեսված էին միաժամանակ 200 երեխայի կրթության եւ խնամքի իրագործման համար։ Երեխաներին ապահովում էին կենսական անհրաժեշտության բոլոր պայմաններով եւ պարագաներով։ Եղել են ժամանակահատվածներ, երբ սաների թիվը գերազանցել է նույնիսկ 200-ը։ 1970-ականներին դպրոցում ուսանել

է շուրջ 170 սան։ 2007 թվականին, երբ գիշերօթիկը վերափոխվեց երեխաների խնամքի եւ պաշտպանության կենտրոնի, հաստատությունն ուներ 157 սան։ Խորհրդային չափորոշիչներով 500 սանի համար նախատեսվում էր 150 հոգանոց սպասարկող անձնակազմ։ 2007 թվականին այդ տվյալները վերանայվեցին, հաստիքացուցակը ենթարկվեց փոփոխության, եւ 157 երեխայի սպասարկման համար հաստատությունն ուներ մոտ 100 աշխատակից։

Գիշերօթիկ դպրոցներում առանձնահատուկ ուշադրություն էր հատկացվում ուսուցիչների եւ դաստիարակների մասնագիտական բարձր մակարդակին։ Հիմնական կրթական ծրագրից զատ, տաղանդավոր եւ հմուտ մասնագետների ղեկավարությամբ դպրոցում գործել են զանազան խմբակներ։ Քանդակագործության խմբակը հիմնադրել եւ ղեկավարել է քաղաքում հայտնի արվեստագետ, նկարիչ-քանդակագործ Մամիկոն Ղուլյանը, թատերական խմբակը՝ Դիլիջանի թատրոնի ռեժիսոր Ֆելիքս Խոստիկյանը, իսկ 1994 թվականին թատրոնի նվիրյալ Հրաչյա Վարժապետյանը գիշերօթիկում ստեղծեց «Կոմիքս» թատերախումբը, որը 1990-ականների վերջից հանրաճանաչ դարձավ հանրապետությունում։

Մասնագիտական բարձր չափանիշներով է կազմակերպվել նաեւ մարզական խմբակի գործունեությունը, որի ղեկավարի՝ դիլիջանյան սպորտի նվիրյալ Իլյիչ Հովհաննիսյանի սաները մեծ ձեռքբերումներ են ունեցել հանրապետության մասշտաբով։ Իր բովանդակությամբ եզակի խմբակ է գործել նաեւ 1960-70-ականներին, այստեղ երեխաներն ուսումնասիրել են Մորզեի այբուբենը։ Արհեստագործական խմբակի երկարամյա եւ արգասաբեր գործունեությունն ապահովել են Միհրդատ Ասատրյանը եւ Գագիկ Դավթյանը։ Առաջին բուժօգնության կարեւոր հմտություններն ու գիտելիքները մատուցել է ավագ բուժքույր Մարուսյա Իսրայելյանը, հետագայում՝ Սոնա Սարիբեկյանը։ Երաժշտական խմբակի ղեկավար եւ ավագ դաստիարակ Սամվել Ամիրխանյանը, որ բոլոր միջոցառումներին զուգակցել է հարուստ երաժշտական ծրագիրը, հաճախակի է կազմակերպել երաժշտական մրցույթներ՝ նպաստելով երեխաների գեղագիտական ճաշակի զարգացմանը։

Դիլիջանի գիշերօթիկի կայացման գործում մեծ ներդրում ունեն նրա առաջին տնօրեն Ալեքսանդր Տեր-Պողոսյանը եւ տնօրեններ Ֆլորա Պապյանը, Ռուբեն Սահակյանը, Սաշիկ Ամյանը, Ռաֆիկ Հովհաննիսյանը, Էդիկ Ավետիսյանը, Վոլոդյա Հախվերդյանը, Վարդան Հախվերդյանը։
2007 թվականին երեխաների խնամքի եւ պաշտպանության հաստատություններն անցան Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ։ Կրթական բարեփոխումների, նաեւ ներառական կրթության ներդրման արդյունքում գիշերօթիկ հաստատությունների սաների ուսուցումը սկսեց կազմակերպվել միջնակարգ կամ ավագ դպրոցներում, երեխաների մի մասն էլ սկսեց հաճախել պետական տեխնիկական ուսումնարաններ։

2019 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՀ կառավարության N1507-Ն որոշմամբ՝ հանրապետությունում լուծարվեցին երեխաների խնամքի եւ պաշտպանության մի քանի հաստատություններ, դրանց շարքում՝ նաեւ Դիլիջանինը։ Ըստ նախարարության մշակած երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համալիր միջոցառումների ծրագրի, ընտանիքները ներգրավվեցին սոցիալական աջակցության ծրագրերում։ Այժմ երեխաների խնամքի եւ պաշտպանության հաստատություններին այլընտրանք են դիտարկվում «ՍՕՍ» մանկական գյուղերը, խնամակալությունը կամ խնամատար ընտանիքը։

Բուժուսումնարան

1961 թվականին ՀԽՍՀ առողջապահության մինիստրությունը հիմնադրեց Դիլիջանի պետական բժշկական ուսումնարանը, որը մինչ օրս Տավուշի մարզի միակ պետական բուժուսումնարանն է։ Սկզբնական շրջանում տեղակայված էր Դիլիջանի N3 դպրոցի շենքում, հետագայում՝ N4 դպրոցում (երկրորդ հերթափոխ)։ Խորհրդային տարիներին ուսումնարանն ընդունելություն էր իրականացնում 8-րդ եւ 10-րդ դասարանի բազայի հիման վրա՝ հայոց-ռուսաց լեզուներով։ Խորհրդային շրջանում ուսումնարանն իր մասնաճյուղերն է ունեցել Վանաձորում, իսկ անկախության շրջանում՝ Գավառում, որոնք առանձնացել ու գործել են Դիլիջանի ուսումնարանից անկախ։ 1964 թվականին ուսումնարանը տվել է իր առաջին շրջանավարտներին՝ 114 հոգի։

1977 թվականին բուժուսումնարանը տեղափոխվել է Ուսանողական փողոցի վրա գտնվող նոր տիպային շենք, որի հարեւանությամբ գտնվում էր նաեւ ուսանողական հանրակացարանը։ Իր գործունեության տարբեր փուլերում ուսումնարանն ունեցել է տարբեր բաժիններ, դրանց թվում՝ քույրական գործ, մանկաբարձություն, դեղագործություն, լաբորատոր հետազոտություններ, ատամնաբուժություն, բուժական կոսմետոլոգիա եւ այլն։

Ուսանողները եղել են ոչ միայն Դիլիջանից եւ հարակից շրջաններից, այլեւ Անդրկովկասյան հանրապետություններից։ Շրջանավարտները համալրել են իրենց շրջանների առողջապահության ոլորտի թափուր հաստիքները։ Շրջանավարտների մի մասն էլ հաստատվել է Դիլիջանում եւ աշխատանքի անցել բուժական ու առողջարանային հաստատություններում։

Ուսումնարանի առաջին տնօրենն էր Ասքանազ Կարոյանը։ Հետագայում այս ուսումնական հաստատությունը ղեկավարել են քաղաքի առողջապահության ոլորտի երախտավորներ Յաշմելլա (Միրա) Միրզոյանը, բժշկագիտության դոկտոր-պրոֆեսոր Արշավիր Թորոսյանը, առողջապահական ոլորտի հմուտ կազմակերպիչներ Արտյուշա Կիրակոսյանը, Աղվան Կարապետյանը եւ Վարդան Գեւորգյանը։ 2019 թվականից ուսումնարանի տնօրենն Էմիլ Գեւորգյանն է։

Ուսումնարանում դասախոսել են անվանի բժիշկ, Մոսկվայի գիտական շրջանակներում ճանաչում վայելող, ավելի քան 200 գիտական աշխատանքների հեղինակ, դոկտոր-պրոֆեսոր Աշոտ Մկրտումյանը, Դիլիջանի քաղաքային հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի երկարամյա վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ցոլակ Սահակյանը, բժշկական գիտությունների թեկնածու Հակոբ Ֆրանգուլյանը եւ ուրիշներ։

1990-ականներից ուսումնարանի դիմորդների թիվը շեշտակի նվազեց։ 1970-80-ականներին 500-600 ուսանող ունեցող կրթօջախում 1990-ականների վերջին ուսանողների թիվը չէր գերազանցում նույնիսկ 100-ը։

2004 թվականին բուժուսումնարանը վերափոխվեց «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի եւ անցավ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության ենթակայության տակ։ Վերջին տասնամյակում քոլեջի շուրջ 10 շրջանավարտներ շարունակել են իրենց կրթությունը բարձրագույն ուսումնական հատատություններում եւ այժմ աշխատում են հանրապետության հեղինակավոր բժշկական կենտրոններում։

▲ Դիլիջանի ռադիոտեխնիկում, լաբորատոր պարապմունք

Դիլիջանի ռադիոտեխնիկական տեխնիկում

Դիլիջանի ռադիոտեխնիկական տեխնիկումը (ԴՌՏՏ) հիմնադրվել է 1964 թ. հունիսի 1-ին, «Իմպուլս» գործարանի բազայի հիման վրա։ Այդ ժամանակահատվածում ռադիոսարքաշինությունը եւ ընդհանրապես կապի ոլորտը մեծ թափով զարգանում էին Հայաստանում։ Գործում էին կապի եւ ռադիոտեխնիկայի ոլորտի խոշոր ձեռնարկություններ։ Առաջնակարգ մասնագետների եւ հատկապես գործարանների միջին օղակի ղեկավարներ պատրաստելու համար բացվում էին միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ։

Սկզբնական շրջանում ԴՌՏՏ-ն տեղակայվել է նախկին Պետարգելոցի (այժմ՝ Դիլիջանի ազգային պարկ) վարչական շենքում, իսկ 1971 թվականին տեղափոխվել է Մյասնիկյան փողոցի 2-րդ նրբանցքի չորսհարկանի տիպային մասնաշենք։

Տեխնիկումի առաջին տնօրենն էր Գրիգոր Դավթյանը։ 1966 թվականից նրան փոխարինել եւ 34 տարի անընդմեջ ղեկավարել է Սրաֆիլ Չիբուխչյանը։ Սրաֆիլ Չիբուխչյանի հմուտ ղեկավարման, կոլեկտիվի անդամների մասնագիտական պատրաստվածության եւ նվիրվածության շնորհիվ նկատելիորեն հարստացավ տեխնիկումի նյութատեխնիկական եւ կրթական բազան։ Տնօրենի անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց կոնստրուկտորական բյուրո։ Գործում էին 21 մասնագիտացված լաբորատորիաներ, հինգ արհեստանոցներ, առարկայական կաբինետներ։ Խորհրդային տարիներին տեխնիկումում գործել են հայերեն եւ ռուսերեն ուսուցմամբ երեք բաժիններ՝ ցերեկային, հեռակա, գիշերային՝ համապատասխանաբար 8-րդ եւ 10-րդ դասարանների բազայի հիման վրա։ Հեռակա եւ երեկոյան բաժիններում սովորող ուսանողները միաժամանակ աշխատում էին կապի, էլեկտրական ցանցի ոլորտներում, արտադրական ձեռնարկություններում (հիմնականում «Իմպուլս» գործարանում)։ Ուսանողների տարեկան շարժը կազմում էր շուրջ 500 հոգի։ ԴՌՏՏ-ում ուսանելու էին գալիս նաեւ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից։

Շնորհիվ հարուստ նյութատեխնիկական կարողությունների եւ որակյալ ուսուցման, տեխնիկումը բազում ձեռքբերումներ է ունեցել, արժանացել խրախուսանքների եւ պարգեւների։

Մեծ ուշադրություն է դարձվել նաեւ մարզական կրթությանը։ Տեխնիկումի վոլեյբոլի թիմը, (մարզիչ՝ Հենրիկ Նազարյան) եղել է հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների օլիմպիադայի քառակի չեմպիոն։ Օլիմպիադայի չեմպիոնի տիտղոս է նվաճել նաեւ բասկետբոլի թիմը (մարզիչ՝ Նորիկ Թամամյան)։ 1971 թվականին սպորտի զարգացման գործում ունեցած լուրջ ձեռքբերումների համար տեխնիկումը պարգեւատրվել է ԽՍՀՄ մինիստրների խորհրդին առնթեր ֆիզկուլտուրայի եւ սպորտի կոմիտեի դիպլոմով։

1972 թ. տեխնիկումի շենքի աջակողմյան մասում բացվեց Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետի մասնաճյուղը։ Շահագործման հանձնվեցին նաեւ ուսանողական հանրակացարանները։ Միջին մասնագիտական եւ մեկ բարձրագույն կրթական հաստատությունների եւ ուսանողական հանրակացարանների առկայությունը (շուրջ 1000-ից ավելի սովորողներ) մեծ աշխուժություն էին մտցրել Մյասնիկյան փողոցի նախկին նրբանցքում, եւ դա նկատի ունենալով՝ քաղխորհուրդը որոշում կայացրեց փողոցը վերանվանել Ուսանողական։

1980-ականների վերջին եւ 1990-ականների սկզբին, երբ «Իմպուլս» գործարանի եւ առհասարակ արտադրական ձեռնարկությունների աշխատանքային ծավալները կրճատվեցին, իսկ հետո ընդհանրապես դադարեցին գործել, հանրապետական մի շարք ուսումնական հաստատություններ, դրանց թվում՝ նաեւ ԴՌՏՏ-ն, վերապրոֆիլավորվեցին։ Ուսանողների թիվը նկատելիորեն նվազեց, մասնագետների պահանջ այլեւս չէր զգացվում, որի հետեւանքով նոր բաժիններ բացվեցին՝ կրթական հաստատության հետագա գործունեությունն ապահովելու նպատակով։ 1990-ականներին տեխնիկումի բազայի հիման վրա բացվեցին բուժսարքավորումների, տնտեսագիտական, իրավաբանական, ծրագրավորման, տարրական դասարանների ուսուցման, տուրիզմի եւ այլ ֆակուլտետներ։ Հետագա տարիներին վերականգնվեց միայն կապի սարքավորումների բաժինը։

2000-ին տեխնիկումը վերանվանվեց «Դիլիջանի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ», իսկ 2001-ին՝ Հայաստանի պրոֆտեխուսումնարանների գործունեության դադարեցումից հետո, Դիլիջանի պրոֆտեխուսումնարանն ընդգրկվեց Դիլիջանի պետական քոլեջի կազմում եւ 2002-ին վերանվանվեց «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ։ Քոլեջի գործունեության, նրա կրթական ծրագրերի իրականացման գործում իրենց ներդրումն են ունեցել նախկին տնօրեն Մելս Ենգիբարյանը, տնօրենի պաշտոնակատար Գեորգի Գյուրջյանը, փոխտնօրեն Աշոտ Ասլանյանը եւ ուրիշներ։ Այժմ քոլեջի տնօրենը Գոհար Անտոնյանն է։

Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետի դիլիջանյան մասնաճյուղ

Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետի դիլիջանյան մասնաճյուղը բացվել է 1972 թվականի սեպտեմբերին՝ ՀՍՍՀ մինիստրների խորհրդի օգոստոսի 15-ի N485 որոշմամբ։ Դիլիջանում բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ ունենալու հարցում մեծ նախաձեռնողականություն է հանդես բերել կուսքաղկոմի առաջին քարտուղար Խորեն Վաթինյանը, նաեւ Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիայի ամբիոնի պրոֆեսոր Ա. Գուլզատյանը, որոնց սիրով ընդառաջել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր Ա. Գասպարյանը։

Նորաբաց մասնաճյուղն իր 50 ուսանողներով տեղակայվեց Դիլիջանի ռադիոտեխնիկական տեխնիկումի մի առանձին հատվածում։ Հետագայում մասնաճյուղն ընդլայնվեց, առկա 5-ամյա բաժնին կից ստեղծվեց նաեւ հեռակա բաժին 6-ամյա ուսուցմամբ՝ հայոց եւ ռուսաց լեզուներով։ Հիմնադրումից 4 տարի անց ուսանողների թիվը հասնում էր շուրջ 400-ի։ Մասնաճյուղի առաջին վարիչն էր Սպարտակ Մանասյանը, այնուհետեւ նրան հաջորդեցին Հենրիկ Բաբայանը, Միքայել Հովսեփյանը, Արմեն Գեւորգյանը։

Ի սկզբանե Դիլիջանի մասնաճյուղում դասախոսել են Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտից գործուղված բարձրակարգ մասնագետներ՝ գիտությունների թեկնածու, հետագայում դոկտոր Պ. Բարսեղյանը, գիտությունների թեկնածու Ռոբերտ Շամիրյանը եւ ուրիշներ։ Դասախոսական անձնակազմը համալրված էր նաեւ երիտասարդ ասպիրանտներով եւ ավագ դասախոսներով։ Դասախոսական կազմում եղել են Գ. Ղազարյանը, Ռ. Ալիխանյանը, Հ. Դեմիրճյանը, Է. Ասլիկյանը, Մ. Ղարիբյանը, Հ. Ղամբարյանը, Մ. Ազոյանը, Մ. Ամյանը, Վ. Հունանյանը, Վ. Բեգլարյանը, Գ. Մարկոսյանը, Մ. Սարգսյանը, Մ. Չիբուխչյանը, Ռ. Ալեքսանյանը, Ռ. Մանթաշյանը, Յ. Ավանյանը, Վ. Հունանյանը , Ն. Երիցյանը , Հ. Թամամյանը, Կ. Սահակյանը եւ ուրիշներ։

Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը եւ քաղաքի ղեկավարությունն ամեն ինչ անում էին դասախոսների

Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետի դիլիջանյան մասնաճյուղի ղեկավար Միքայել Հովսեփյանը՝ գործընկերների և ուսանողների հետ

բնակարանային ու կենցաղային այլեւայլ կարիքները հոգալու եւ ուսանողներին հանրակացարանային պայմաններով ապահովելու համար։

1973 թ. ամռանը շահագործման հանձնվեց 400 տեղանոց հանրակացարանը, իսկ մինչ այդ ուսանողներին իր հանրակացարանն էր ժամանակավորապես տրամադրել Դիլիջանի N12 շինտրեստը։ «Իմպուլս» գործարանն էլ՝ հանձին տնօրեն Հայրիկո Միրզոյանի, պարտավորություն էր ստանձնել աջակցելու ինստիտուտի մասնաճյուղի ուսումնա-լաբորատոր բազայի ստեղծմանն ու ընդլայնմանը եւ արտադրական պրակտիկայի կազմակերպմանը։ Հետագա տարիներին արտադրական պրակտիկան անցկացվում էր Վիլնյուսի, Ռիգայի, Լենինգրադի, Լվովի, Սիմֆերոպոլի ռադիոտեխնիկական առաջատար գործարաններում, ինչպես նաեւ Երեւանի կապի գիտահետազոտական ինստիտուտում։ Ավարտելուց հետո մասնագետները «Ռադիոսարքավորումների նախագծում եւ արտադրություն» որակավորմամբ աշխատանքի էին անցնում «Իմպուլս» գործարանում եւ միութենական նույն պրոֆիլի հիմնարկ-ձեռնարկություններում։

Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի դիլիջանյան մասնաճյուղն ակտիվորեն մասնակցել է քաղաքի հանրային եւ կրթամշակութային կյանքին, միջբուհական մրցույթներին, դիլիջանյան «Ուսանողական գարուն» փառատոնին, անդամակցել է բուհի ռադիոակումբին, եղել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լավագույն մասնաճյուղերից մեկը։ Ավանդաբար մեծ շուքով մասնաճյուղը նշել է բոլոր մայիսյան տոները, հատկապես Ռադիոյի օրը՝ մայիսի 7-ին։ Այդ օրը Դիլիջանը հյուրընկալում էր ԽՍՀՄ հանրապետություններից ժամանակակից կապի ոլորտի պրոֆեսիոնալ ներկայացուցիչների, եւ օրը վերածվում էր տոնախմբության։ Մասնաճյուղն ուսանողներ է ունեցել նախկին ԽՍՀՄ հանրապետություններից։ 1988 թվականի փետրվար ամսին սկսված Ղարաբաղյան շարժմանը զուգընթաց հայտնի իրադարձությունների (Սումգայիթի ջարդ, Բաքվից մազապուրծ հայեր) հետեւանքով Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոսարքաշինության ֆակուլտետից Դիլիջան է տեղափոխվել շուրջ 300 ուսանող։

Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի Դիլիջանի մասնաճյուղը գործել է մինչեւ 1989 թվականը։ Ժամանակի ընթացքում աննպատահարմար է համարվել մասնաճյուղի հետագա գործունեությունը։

ԴԻԼԻՋԱՆ. 20-ՐԴ ԴԱՐ

Տոներ, փառատոներ, համաքաղաքային խաղեր

Պիոներիայի երթը

Խորհրդային տարիներին գործում էր համամիութենական պիոներական կազմակերպությունը, որը հիմնադրվել էր 1922 թվականի մայիսի 19-ին։ Վերջինս կոչվում էր Վլադիմիր Լենինի անունով եւ նպատակ ուներ «երեխաներին դաստիարակելու կոմունիստական կուսակցության գործին նվիրվածության, սովետական ժողովրդի հեղափոխական, մարտական եւ աշխատանքային ավանդույթներին հավատարմության, սոցիալիստական հայրենիքի հանդեպ սիրո եւ թշնամիների նկատմամբ անհաշտվողականության ոգով»։ Համամիութենական պիոներական կազմակերպությունը Հայաստանում գործել է մինչեւ 1991 թվականը։

Կազմակերպության դրույթները սահմանված էին կանոնադրությամբ եւ ծրագրերով։ Պիոներիայի ղեկավար մարմինը Համամիութենական պիոներական կազմակերպության կենտրոնական խորհուրդն էր։

Պիոներական կազմակերպության մեջ ընդգրկված էին 9-14 տարեկան դպրոցականները։ Պիոներիան ուներ իր խորհրդանիշը՝ կարմիր փողկապը։

Կազմակերպությունն ուներ իր հիմնը, թերթն ու ամսագիրը։ Բոլոր քաղաքներում գործում էին պիոներտներ, մայրաքաղաքում՝ պիոներպալատ։ Ամռան ամիսներին կազմակերպվում էին պիոներական ճամբարներ, զանգվածային բնույթ էին կրում բակային ճամբարները։ Պիոներներին կից գործում էին կիրառական արվեստի, տեխնիկական ուսուցման, ասմունքի, շախմատի խմբակներ։

Կրտսեր դպրոցականներն ընդգրկվում էին հոկտեմբերիկների շարժման մեջ։ Դառնալով 9 տարեկան՝ հանդիսավոր երդմամբ ընդունվում էին պիոներական շարքերը, իսկ 14 տարեկանում՝ կոմունիստական երիտասարդական միության՝ կոմերիտմիության շարքերը։ Կոմերիտականներն ունեին անդամատոմս եւ ընդգրկվում էին լուրջ աշխատանքներում։

Յուրաքանչյուր տարվա մայիսի 19-ին՝ պիոներիայի ծննդյան օրը, կազմակերպվում էին հանդիսավոր տողաններ, հոբելյանական տարելիցներին՝ նաեւ շքերթներ, տրվում էին պիոներական զեկույցներ։ Մայրաքաղաքների պիոներների համար դպրոցական բուֆետներում այդ օրն անվճար քաղցրավենիք էր նախատեսվում, զբոսայգիներում կարուսելներն աշխատում էին անվճար։

Մայիսյան տոներ

Հոկտեմբերյան հեղափոխության հետեւանքով կազմավորված ԽՍՀՄ-ի սահմանած առաջին տոնը Աշխատավորների համերաշխության միջազգային օրն է, որը նշվում է մայիսի 1-ին։ Այդ տոնը լիովին արտահայտել է նորակազմ պետության քաղաքական գաղափարախոսությունը եւ նշվել է մեծ շուքով։ Մայիսի 1-ը դարձավ օրացույցի կարմիր (ոչ աշխատանքային) օր, որի տոնակատարությունը սահմանվում էր հատուկ կանոնակարգով։ Տոնական ծրագիրը կազմված էր շքերթից եւ ժամանցային բաղադրիչներից։

Ըստ այդ կանոնակարգի՝ բոլոր խորհրդային քաղաքները, որոնց շարքում էր նաեւ Դիլիջանը, օրվա կապակցությամբ տոնական

«հանդերձանք» էին ստանում։ Կենտրոնական փողոցներն ու հրապարակները զարդարվում էին կարմիր դրոշներով, սոցիալիստական կարգերին բնորոշ խորհրդանիշներով, ծաղիկներով եւ փուչիկներով։ Բարձրախոսներից հնչում էին պետական հիմնը, տոնական երգեր, քայլերգեր։ Բոլոր աշխատանքային կոլեկտիվները եւ արհմիությունները մեծ մեքենաներով դուրս էին գալիս հանդիսավոր շքերթի, արտադրական ձեռնարկությունները տոնականորեն զարդարված ավտոմեքենաներով ցուցադրության էին հանում եւ ներկայացնում իրենց նվաճումները։ Մեքենաների վրա փակցվում էին տոնի բովանդակությանը բնորոշ պաստառներ՝ «Խաղաղությո՛ւն», «Աշխատա՞նք», «Մայի՛ս», «Բոլոր երկրների պրոլետարներ, միացե՛ք», «Կեցցե՛ սոցիալիզմը» գրառումներով։

Բացօթյա տրիբունաներից հնչում էին ողջույնի խոսքեր, նշանաբաններ եւ տոնական ճառեր։ Իսկ երբ արտադրական ձեռնարկություններն էին անցնում տրիբունայի առջեւից, բարձրախոսով ներկայացվում էին նաեւ նրանց պլանով գերակատարված տնտեսական ցուցանիշները։ Այդ օրվա կապակցությամբ պաշտոնատար անձինք, տոնի բոլոր մասնակիցները՝ նույնպես, հագնում էին տոնական զգեստներ։ Դպրոցականները պարտադիր ներկայանում էին սպիտակ վերնաշապիկով, կարմիր փողկապով, փուչիկներով։ Ընտանիքների չաշխատող անդամները նույնպես մասնակցում էին շքերթին։ Մայիսմեկյան տոնի առթիվ կազմակերպվում էին նաեւ շաբաթօրյակներ, ծառատունկ, խնամվում ու կարգի էին բերվում ծաղկանոցներն ու կանաչապատ տարածքները։

Այդ օրը Դիլիջանի քաղաքային զբոսայգին բացում էր իր դուռը քաղաքացիների առջեւ, աշխատում էին կարուսելները, սննդի բացօթյա կետերը։ Քաղաքային լճի մերձակայքում նույնպես չէր դադարում տոնախմբությունների շարքը։ Երիտասարդները խմբերով նավակ էին վարում, նկարվում բնության գրկում, իսկ ճաշարաններն ու ռեստորանները, սրճարանները լեփ-լեցուն էին այցելուներով։ Ընտանիքները սովորաբար այդ օրը բնության գրկում՝ անտառներում կառուցված տաղավարներում ճաշկերույթներ էին կազմակերպում, եւ հիմնական ուտեստը խորոված էր։ Երրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մայիսի 1-ը նշվել է միայն խորհրդային մայրաքաղաքներում։

Երրորդ համաշխարհային պատերազմում խորհրդային ժողովրդի արձանագրած հաղթանակի կապակցությամբ մայիսյան տոնացույցը համալրվեց եւս մեկ սիրված տոնով՝ Հաղթանակի օրով։ 1965 թվականից մայիսի 9-ը հայտարարվեց կարմիր (ոչ աշխատանքային) օր, եւ դրանից հետո ծագեց «մայիսյան տոներ» հասկացությունը։ Պետությունը նաեւ տոնակատարությունների միջոցով ցանկանում էր խանդավառություն հաղորդել ժողովրդին՝ նպատակ ունենալով ամրապնդել վստահությունը կոմունիստական ապագայի նկատմամբ։

1975 թվականին կառուցվեց պատերազմում զոհված դիլիջանցիների հիշատակը հավերժացնող հուշարձան-կոթողը, որտեղ մինչ օրս անցկացվում են հաղթանակներին նվիրված գլխավոր միջոցառումները։ Ծաղիկներ եւ ծաղկեպսակներ են խոնարհվում Երկրորդ համաշխարհային պատերազմում (ԽՍՀՄ տարիների կոմունիստական կուսակցության ղեկավարների ձեւակերպմամբ՝ Հայրենական մեծ պատերազմ) զոհվածների հուշարձանին եւ Արցախյան ազատամարտում նահատակվածների հիշատակին նվիրված աղբյուր-հուշարձանին։ Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակի հետ մեկտեղ, հետագայում այդ օրը նշվում էին նաեւ Շուշիի ազատագրման եւ Արցախյան բանակի կազմավորման տարեդարձները՝ մայիսի 9-ը վերանվանելով «Եռատոն»։

Երրորդ հանրապետության կազմավորումից հետո մայիսի 28-ին մեծ շուքով նշվում էր Առաջին հանրապետության օրը։ Հանդիսավոր այս միջոցառումները եզրափակվում էին զինվորականների պատվո քայլերթով։

▲ Քաղաքային տոն ներկայիս մարզադաշտի տարածքում

▶ «Ծաղկի տոն»-ի մրցանակաբաշխության արարողությունը, 1962 թ.

Երգի տոն

Դիլիջանում քաղաքային տոներ նշելու ավանդույթը ձեւավորվել է 19-րդ դարի վերջից եւ 20-րդ դարի առաջին տասնամյակից՝ Ռոտոնդայի բուռն գործունեությանը զուգընթաց։ Տարբեր տարիների անցկացված մշակութային միջոցառումներին առնչվող արժանահավատ տեղեկություններ ու լուսանկարներ պահպանվել են։ Միջոցառումները հետեւողականորեն լուսաբանվել են քաղաքային թերթում։ Հետագայում որոշ տոներ դարձել են ամենամյա եւ նշվել մեծ հանդիսավորությամբ։ Թվարկենք՝ Երգի տոնը, Ծաղկի տոնը, Դիլիջան քաղաքի օրը։

Շնորհիվ Էմմա Ծատուրյանի եւ Գառնիկ Կարակոչյանի, Դիլիջանում հիմնադրվեց Երգի տոնը, որը նշվել է 1971 թվականից մինչեւ 1980-ականների վերջերը՝ մայիս-հունիս ամիսների ընթացքում։ Երգի տոներն անցկացվում էին քաղաքային զբոսայգում կամ մարզադաշտում։ Մշտական մասնակիցներն են եղել «Հաղարծին» վոկալ-գործիքային անսամբլը, ժողգործիքների «Հովք» անսամբլը, անհատ կատարողները, Դիլիջանի փողային նվագախումբը, քաղաքի երգչախումբը, «Իմպուլս» գործարանի ժողգործիքների անսամբլը։

Ավանդաբար միջոցառումը սկսվում էր Գրիգոր Հախինյանի «Դիլիջան» երգով։ Հանրության առջեւ ելույթ էին ունենում սիրված երգիչներ Խաչիկ Ղազարյանը, Ֆարիզդա Ոսկանյանը, Քրիստինե Բադալյանը, Ալիկ Մկրտչյանը։

Երգի տոնի մշտական հյուրերն էին Էմմա Ծատուրյանն՝ իր երգչախմբով եւ Հայաստանի երաժշտական ընկերության երաժիշտները։ Տոնախմբությունների ժամանակ ապահովվում էին նաեւ ժամանցային պայմաններ, տեղադրվում էին արագ սննդի եւ առեւտրի ժամանակավոր տաղավարներ։

Տոներ, փառատոներ, խրախճանքներ և խաղեր

Ծաղկի տոն

Հարուստ բնությամբ ներշնչված՝ դիլիջանցիները մշտապես ձգտել են գեղեցկացնել իրենց միջավայրը. բակերում, պարտեզներում, անգամ բազմահարկ շենքերի բնակարանների պատշգամբներում աճեցրել են ծաղիկներ եւ էկզոտիկ բույսեր։ Հատկապես գեղեցիկ ծաղկանոցներ են ունեցել դիլիջանցիներ Գուրգեն Ղազարյանը, Արշալույս Կարապետյանը (Պապանինո թաղամաս), Ռոզա Ուլիխանյանը (Օրջոնիկիձեի փողոց), Վազգեն Դավթյանը, Սիլվա Սահակյանը եւ ուրիշներ։ Դիլիջանում վաղուց բնակություն հաստատած մոլոկանները եւս հատուկ հոգատարությամբ ու խնամքով են մշակել իրենց ծաղկանոցները։

Քաղաքային իշխանություններն այդ ավանդույթը պահպանելու եւ տարածելու նպատակով 1961 թվականից ի վեր կազմակերպել են «Ծաղկի տոն», «Օրինակելի բակ», «Ծառ ու ծաղիկ՝ առողջարանային Դիլիջանին» եւ այլ նմանատիպ խորագրերով միջոցառումներ։ Միջոցառման մասնակից բնակիչները, հիմնարկ-ձեռնարկությունները եւ աշխատանքային կոլեկտիվները պարտադիր խրախուսվել եւ պարգեւատրվել են։

Այսպիսով, 1960-ական թվականներից ավանդաբար քաղաքային սովետի գործկոմը հայտարարում եւ անցկացնում էր մրցույթ՝ նվիրված քաղաքի ծառուղիների ձեւավորմանը, քաղաքային տարածքների կանաչապատմանը, մաքրության պահպանմանը, գործող կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, բուժական հիմնարկների, կրթօջախների բակերի բարեկարգմանը, անհատ քաղաքացիների պատշգամբների, պարտեզների ձեւավորմանը։ Մրցույթը գնահատող հանձնաժողովը շրջում էր քաղաքում, տեղում լուսանկարում, անհրաժեշտ նյութեր հավաքում եւ քաղաքային հրապարակում կազմակերպված միջոցառման ժամանակ ամփոփում արդյունքները։ Տարբեր անվանակարգերով խրախուսական պարգեւներ էին հանձնում հաղթողներին։ Օրինակ՝ ինչպես «Դիլիջան» թերթի 1986 թվականի նոյեմբերի համարում է գրված, մրցույթի արդյունքներն ամփոփելով, ժյուրին նշել է. «Քաղաքի տարածքում տնկվել է 235 հազար ծառ ու թուփ, 85 հազարից ավելի ծաղկի սածիլ, ստեղծվել կանաչ տարածքներ, հանգստի գոտիներ՝ երեք հեկտարի վրա»։ Հաղթողները պարգեւատրվել են բնության պահպանության քաղաքային խորհրդի դիպլոմով, պատվոգրերով, դրամական խրախուսանքով։ Նմանատիպ միջոցառումներն օրինաչափորեն ուղեկցվել են բարձր տրամադրությամբ եւ եզրափակվել տոնական համերգով։

Քաղպաշտպանություն

Ամբողջ ԽՍՀՄ-ի տարածքում, ներառյալ Հայաստանում, գործում էր քաղաքացիական պաշտպանության համակարգ, որի նպատակն էր նվազագույնի հասցնել բնական աղետների ու պատերազմների ժամանակ մարդկային եւ նյութական կորուստները։ Առաջին հերթին անհրաժեշտ էր վտանգավոր գոտուց բնակչությանն արագ էվակուացնել ավելի ապահով վայրեր՝ ռմբապաստարաններ կամ գազապաստարաններ։

Որպեսզի բնակչությունը նման իրավիճակներում արագ գործելու եւ ինքնապաշտպանություն իրականացնելու անհրաժեշտ հմտություններ ու գիտելիքներ ձեռք բերի, տարվա ընթացքում որոշ օրեր անցկացվում էին փորձնական վարժանքներ։ Քաղպաշտպանության ծրագիրը ենթադրում էր նաեւ որոշակի ռազմական պատրաստվածություն։ Աշխատանքային խմբերը, հիմնարկության քաղպաշտպանության պլանին համապատասխան, անցնում էին նաեւ զենքի կիրառմանն ուղղված դասընթացներ։ Դա կատարվում էր դաշտային պայմաններում կամ հրաձգարաններում։

1967 թվականից մանկապատանեկան տարիքի անձանց համար նույնպես հիմնադրվեց քաղպաշտպանության ռազմամարզական խաղաձեւ՝ «Զարնիցա» («Зарница») անվանմամբ։ Տարիներ անց «Զարնիցա»-ի սկզբունքով ձեւավորվեց «Օրլյոնոկ» («Орлёнок») համամիութենական ռազմամարզական շարժում։ Դպրոցականների «Զարնիցա» եւ «Օրլյոնոկ» մրցումներում նկատելի ձեռքբերումներ է ունեցել Դիլիջանի N2 ռուսական դպրոցի «Օրլյոնոկ»-ի թիմը։ 1978 թվականին դպրոցի թիմը հանրապետությունում գրավել է առաջին տեղը, որից հետո Կիեւում մասնակցել է եզրափակիչ փուլին եւ գրավել մրցանակային երկրորդ տեղը։ Մասնակցության եւ ձեռքբերումների համար թիմն արժանացել է ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ կրթության նախարարությունների պատվոգրերի։

Ներկայումս քաղպաշտպանության աշխատանքներն իրականացնում է Արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ տեղական մարմինների հետ համատեղ։

▶ Քաղպաշտպանության պարտադիր ծրագրի շրջանակում անցկացվող դաշտային վարժանքներ

▶ Շախմատի մրցաշար գրադարանում

Շախմատի մրցույթ

Դեռեւս խորհրդային տարիներից Դիլիջանում ամենատարածված մարզաձեւերից էր շախմատը։ Քաղաքի շախմատասեր հասարակությունը հանդիպել է Ռոտոնդայում։ Պիոներտանը նույնպես գործել է շախմատի խմբակ, որտեղ պատանիներին եւ երիտասարդներին հնարավորություն էր ընձեռված ծանոթանալու խաղի կանոններին եւ զարգացնելու իրենց խաղային հմտությունները։ Քաղաքն ունեցել է իր շախմատի ակումբը։ Դիլիջանի սպորտկոմիտեն կազմակերպել է շախմատի առաջնություններ, ապահովել քաղաքի շախմատիստների մասնակցությունը հանրապետական առաջնություններում։ Մարզաձեւի տարածման գործում ծանրակշիռ ավանդ են ունեցել պատանեկան խմբակի ղեկավար Կ. Քոչարյանը եւ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի Դիլիջանի մասնաճյուղի ղեկավարներ Ռ. Գրիգորյանը եւ Ս. Մելյանը։

Ավանդական էր դարձել շախմատի առաջնության ամառային մրցաշարը, որը լուսաբանվում էր «Դիլիջան» թերթում։ 1971 թվականի հունիսի 3-ի համարի «Նվիրված էր ամառային շրջանի բացմանը» խորագրով հոդվածում հիշատակվում է, որ շախմատի կայծակնային առաջնությանը մասնակցել են քաղաքի բարձր կարգ ունեցող 12 շախմատիստներ։ Բացարձակ արդյունք է գրանցել բուժմիավորման աշխատակից Արմեն Ստեփանյանը, իսկ 2-3-րդ տեղերը բաժին են հասել «Իմպուլս» գործարանի ինժեներ Ս. Մելյանին եւ ռադիոտեխնիկական տեխնիկումի դասախոս Ռ. Գրիգորյանին։

Դիլիջան են այցելել եւ վարպետաց դասեր անցկացրել միջազգային կարգի շախմատիստներ, ներառյալ Հայաստանի քառակի չեմպիոն Սմբատ Լպուտյանը։

Ականատեսները պատմում են, որ Տիգրան Պետրոսյանի՝ համաշխարհային գահի համար մրցապայքարին մեծ ոգեւորությամբ հետեւում էր նաեւ Դիլիջանի ողջ բնակչությունը։ 1963 թվականին, երբ անցկացվում էր Պետրոսյան-Բոտվիննիկ մրցամարտը, նախկին «Շիրվանզադե» կինոթատրոնի բակում տեղադրվել էր մեծ էկրան, եւ բոլորին տեսանելի ձեւով ցուցադրվում էին շախմատային պարտիայի քայլերը՝ մասնագետ-շախմատիստի մեկնաբանությունների ուղեկցությամբ։

Նույնպիսի ոգեւորությամբ եւ ջերմությամբ 1964 թվականին Դիլիջանի ողջ հասարակությունը հյուրընկալեց իր ազգի մեծ զավակ, շախմատի արքա Տիգրան Պետրոսյանին։ Ներկայիս արհեստական լճի հարակից տարածքում հանդիսավոր արարողությամբ դիմավորեցին հյուրին, ապա հարյուրավոր մասնակիցների ուղեկցությամբ տոնական թափորը շարժվեց դեպի քաղաքային հրապարակ, որտեղ ջերմ մթնոլորտում կայացավ գլխավոր հանդիպումը։ Ողջ քաղաքը չընդհատվող ծափերով եւ ողջույնի բացականչություններով վայելում էր մեծ շախմատիստի ներկայությունը։ Ոգեւորությունն այնքան մեծ էր, որ հանդիպմանը մասնակցում էին նաեւ նկատելիորեն տարեց համաքաղաքացիներ։ Այդ հանդիպումը դարձավ համաքաղաքային տոն, Տիգրան Պետրոսյանը խոսում էր ոգեւորությամբ՝ ջերմորեն իր շուրջը համախմբելով դիլիջանցիներին։ Պատմում էր նաեւ հետաքրքիր դրվագներ մրցապայքարի ընթացքից։ Հատկապես հետաքրքիր էր թերմոսի պատմությունը. նա պարզել էր, որ լարված մրցապայքարում հետաքրքիր զուգադիպությամբ հաղթանակներ է ապահովել հենց այն օրերին, երբ հետը վերցրել է իր թերմոսը։

▶ Խոտհավաք

Մասնակիցները զվարճանքով եւ մեծ հետաքրքրությամբ լսում էին չեմպիոնի կյանքի հումորային դրվագները։

2013 թվականին Դիլիջանում անցկացվեց ՖԻԴԵ կանանց «Գրան Պրի» մրցաշարի երկրորդ շրջափուլը։ Միջազգային այս մրցաշարը նվիրված էր Տիգրան Պետրոսյանի՝ շախմատի աշխարհի կրկնակի չեմպիոնի տիտղոսին արժանանալու հոբելյանական 50-ամյակին։ Մրցաշարի բացմանը հանրապետության ղեկավարների հետ մասնակցում էր Շախմատի միջազգային ֆեդերացիայի՝ ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովը։ Միջազգային մրցաշարի հանդիսավոր բացումը կայացավ ամֆիթատրոնում, իսկ մրցաշարն ընթացավ Դիլիջանի երկրագիտական թանգարանում։

Խոտհավաք

Խորհրդային Դիլիջանի գյուղատնտեսության հիմնական ճյուղն անասնապահությունն էր։ Ուստի, 1930-ականներին կազմավորված կոլտնտեսությունների, հետագայում դրանց փոխարինած սովխոզների գլխավոր խնդիրներից էր ամռան սեզոնին կերի կուտակումը։ Այդ իսկ պատճառով ամռանը կոլտնտեսությունների, հետագայում սովխոզների ողջ աշխատուժը կենտրոնանում էր սարերում՝ իրականացնելու խոտհնձի եւ խոտի հավաքման աշխատանքներ։

1970-80-ական թվականներին սովխոզները դժվարանում էին սեփական միջոցներով ապահովել կերային անհրաժեշտ պաշարները, որի հետեւանքով հանրապետության ղեկավար մարմինները խնդիր դրեցին ամռան սեզոնին կերի կուտակման աշխատանքներին ակտիվորեն ներգրավել նաեւ հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակազմերին։ Քաղաքային կոմիտեն հստակ աշխատանքային պլան էր դնում անխտիր բոլոր հիմնարկությունների վրա եւ հետեւողականորեն պահանջում էր պլանների կատարումը։ Դեռ ավելին, օգոստոսի վերջին, երբ հասունանում էր Դիլիջանի Արեւահովիտ (Անագյունեյ) եւ Ծաղկոտ ուրթ հանդամասերի խոտը, չորս-հինգ օր ողջ քաղաքը պարտադիր մասնակցում էր խոտհավաքին։ «Իմպուլս» գործարանը եւ այլ արտադրական ձեռնարկություններ ձեռք էին բերել հնձիչ մեքենաներ եւ կազմավորել աշխատանքային բրիգադներ։ Գյուղական դպրոցների մանկավարժական կոլեկտիվները դաշտերում աշխատանքի էին անցնում ավելի վաղ՝ սիլոսացման փուլից։ Սովխոզները հատկացնում էին տրանսպորտային միջոցներ, իսկ մեծ կազմակերպություններն իրենք էին հոգում այդ հարցերը ևս։

Համաքաղաքային խոտհավաքի շաբաթօրյակներն ընթանում էին շատ կազմակերպված, պատշաճ կերպով իրականացվում էին նաեւ անվտանգության եւ բժշկական ծառայություններ։ Հաճախ խոտհավաքն ուղեկցվում էր բնության գրկում, սառնորակ աղբյուրների մոտ կազմակերպած համեղ ճաշկերույթներով եւ ուրախ զրույցներով։ Խոտհավաքի աշխատանքներին 1-2 օր ներգրավվում էին նաեւ քաղաքի ուսանողական ճամբարներում հանգստացող ուսանողները։

▲ Լոտոխաղարկություն Դիլիջանում, 1970-ականներ

Լոտոխաղարկություն

Խորհրդային տարիներին պետական մակարդակով անցկացվող վիճակախաղերը (լոտոխաղարկությունը) զգալի ներդրում են ունեցել տարբեր սոցիալական կարիքների լուծման գործում։

Խորհրդային Միությունում լոտոյի խաղարկությունը բուռն վերելք է ապրել 1956 թվականից ի վեր՝ Համամիութենական երիտասարդական փառատոնին զուգընթաց։ Դրանից հետո վիճակախաղերը մտել են շրջանառության մեջ, եւ դրանք, անշուշտ, նպաստել են տնտեսության զարգացմանը։ Հետաքրքրություն առաջացնելու համար հաջորդ տարիներին ստեղծվել են թեմատիկ վիճակախաղեր, օրինակ՝ 1963 թվականին թողարկվել է Գեղարվեստական վիճակախաղը, իսկ 1965-ին՝ Գրքի եւ Լրագրողների համերաշխության միջազգային վիճակախաղերը։ 1970 թվականին էլ թողարկվեց «Սպորտլոտո» վիճակախաղը, որն արագորեն տարածվեց։

1973 թվականից սկսեց կիրառվել լոտոտրոնը՝ վիճակախաղի ավտոմատացված սարքը։ 1970-ականների վերջին ստեղծվեց «Սպրինտ» վիճակախաղը, որի արդյունքին պետք չէր օրերով սպասել։ Ամեն մի խորհրդային կրպակում վաճառվում էին Սպրինտի քարտեր, եւ բացելով քո ընտրած քարտը՝ անմիջապես կարող էիր տեսնել՝ շահել ես ինչ-որ բան, թե՝ ոչ։ Սպրինտի վաճառքից ապահովված շահույթի շնորհիվ կառուցվեցին մարզական համալիրներ, մարզադաշտեր։

Հայաստանի հիմնարկ-ձեռնարկություններում համապատասխան նախարարությունները նույնպես անցկացնում էին վիճակախաղեր՝ հատուկ մշակված ընթացակարգով։ Հիմնարկություններում ձեւավորվում էին հանձնաժողովներ։ Քաղսովետի կամ հիմնարկի դահլիճում մասնակիցները կատարում էին վիճակահանություն, որը տեխնիկապես իրականացվում էր վիճակախաղի սարքի գործադրմամբ։ Շահումների մեջ հիմնականում կենցաղային իրեր էին՝ ռադիոտեխնիկա, թանկարժեք իրեր, նույնիսկ ավտոմեքենա։ Բացի իրային շահումներից, լինում էին նաեւ դրամային շահումներ, որոնք հասնում էին մինչեւ 2500 ռուբլու։

Դիլիջանում լոտոյի խաղարկության անցկացման սիրված վայրերից էր «Հովք» ռեստորանը։

► «Դիլիջանյան ձմեռ» ավանդական մարզատոնի շրջանակում անցկացվող Ֆուտբոլային խաղ, 1988 թ.

Դիլիջանյան ձմեռ

Խորհրդային Դիլիջանի ավանդական սպորտային միջոցառումներից էր «Դիլիջանյան ձմեռը»։ Մարզատոնը կազմակերպվել է 1960-ականներից ի վեր՝ փետրվար ամսին։ Այս միջոցառումը համաքաղաքային բնույթ էր կրում, կազմակերպում էին քաղաքային սպորտկոմիտեն եւ քաղխորհրդի մշակույթի բաժինը։ Մարզատոնի ընթացքում անցկացվում էր դահուկային վազք, սահնակների մրցույթ, ըմբշամարտ ձյան վրա, պարանի ձգում, իսկ մարզադաշտում՝ ֆուտբոլ ձյան վրա։ Բացի ձմեռային մարզական մրցումներից, կազմակերպվում էին բազմաթիվ խաղեր եւ ժամանցային այլ միջոցառումներ, բնության գրկում տեղադրվում էին բացօթյա սննդի կետեր։ Ներկայացվում էր նաեւ գեղարվեստական ծրագիր՝ փողային նվագախմբի եւ քաղաքի մշակութային համույթների մասնակցությամբ։

Միջոցառման համար ընտրվում էր այնպիսի տարածք, որը հնարավորություն կտար անցկացնելու ավելի բազմազան եւ հարուստ ծրագիր։ «Դիլիջանյան ձմեռ» է անցկացվել Կաղնի Խաչ թաղամասի ստորին հատվածում, այսպես կոչված՝ «Լագռ»-ում (կոլխոզի այգիներում), Կոմպոզիտորների ստեղծագործական տան վերին բացատում, քաղաքային զբոսայգում, մարզադաշտում եւ իր հարակից տարածքում։

Վերջում կատարվում էր մրցույթների եւ խաղերի հաղթողների պարգեւատրման արարողություն։

«Իմպուլս» ֆուտբոլային թիմ

Մինչեւ Դիլիջանի մարզադաշտի կառուցումը, քաղաքի հիմնական մարզադաշտը քաղաքային զբոսայգու լճի տարածքում էր։ Քաղաքը խորհրդային շրջանում ունեցել է իր ֆուտբոլի հավաքականը։ 1950-ականների Ֆուտբոլիստներից ավագ սերնդի համաքաղաքացիները հիշատակում են Եղիշին, Նուբարին, Հակոբյան Սուրիկին, Ղարախանյան Հրանտին։ 1959 թվականին Դիլիջանի հավաքականն արժանացել է արծաթե մեդալի։

1970-ականներին արդեն հանդես էր գալիս Դիլիջանի «Իմպուլս» ֆուտբոլային թիմը։ Թիմը ստեղծվել է 1971 թվականին եւ նույն թվականից սկսել է մասնակցել հանրապետության 2-րդ խմբի ֆուտբոլային առաջնությանը։ «Իմպուլս» գործարանը հովանավորում էր ոչ միայն թիմի մարզական աշխատանքները, այլեւ նոր մարզադաշտի կառուցումը։

Թիմի առաջին մարզիչը Վոլոդյա Ղալեչյանն էր։ «Իմպուլս»-ը լուրջ ձեռքբերումներ է արձանագրել 1970-80-ական թվականներին, 1973-ին դարձել է չեմպիոն եւ տեղափոխվել «Ա» խումբ։ Այդ ժամանակահատվածում տեղացի ֆուտբոլիստներից աչքի են ընկել Մառլեն Ասլանյանը, Սերգեյ Ֆոկինը, Արմեն եւ Աշոտ Բաբայանները, Մարտին Եսայանը, Վովա Հովակիմյանը, Արմեն Փիլոյանը, Միեր Վարդանյանը, Էդիկ Պետրոսյանը, Լյովա Մկրտչյանը եւ ուրիշներ։ 1980 թվականին Միխայիլ Աթաբեկովը եւ Վովա Հովակիմյանը ստեղծել են «Իմպուլս»-ի խաղացողներին փոխարինողների թիմ։

1982 թվականից , երբ թիմի մարզիչն է դարձել Երեւանից հրավիրված հայտնի սպորտի վարպետ Հրաչ Խաչմանուկյանը, «Իմպուլս»-ը հանդես է եկել հանրապետական առաջնություններում՝ դրսեւորելով բարձր վարպետություն։ Նույն տարում ֆուտբոլային թիմը հաղթել է հանրապետական առաջնության 2-րդ խմբում եւ դարձել գավաթակիր։ Դրանից հետո 3 տարի անընդմեջ՝ 1983, 1984, 1985 թվականներին, թիմը պահպանել է Հայաստանի չեմպիոնի պատվավոր կոչումը։ Խաչմանուկյանի թիմում ներգրավված էին դիլիջանցի ֆուտբոլիստներ Կարեն Ղազարյանը, Արայիկ Բաբայանը, Հարութ Բաթմանյանը, Արծրուն Հովհաննիսյանը, Միշա Ղուկասյանը, Ռուդիկ Շահնազարյանը, Գեղամ Մնացականյանը, Համբարձում Իսպիրյանը, Մարտիկ Սարգսյանը, դարպասապահ Հրաչիկ Հարությունյանը եւ այլք։ «Իմպուլս»-ն իր մարզադաշտում անցկացրել է նաեւ բազում ընկերական խաղեր՝ հանդիպելով Մոնղոլիայի սիրողական ակումբի, Ֆրանսիայի հայ համայնքի եւ այլ ֆուտբոլային թիմերի հետ։

1990-ականներից թիմի հովանավորչությունն իրականացնում էին «Հ եւ Տ» ՍՊԸ-ի հիմնադիր, ԱԺ նախկին պատգամավոր Հակոբ Հակոբյանը եւ իր որդին՝ Տիգրան Հակոբյանը, նրանց ներդրումների շնորհիվ նաեւ վերանորոգվեց մարզադաշտը։ 1992 թվականից «Իմպուլսը» տեղափոխվեց Հայաստանի բարձրագույն խումբ։ Թիմի մարզիչն էր Վովա Հովակիմյանը։ 1993 թվականին նորից խաղացել է «Ա» լիգայում, հետո թիմը ցրվել է։ 1995 թվականին թիմն անվանափոխվել ու կոչվել է «Հովք» եւ մասնակցել 1-ին խմբի առաջնությանը։ Դա նույնպես երկար չի տեւել. 2010-2013 թվականներին «Իմպուլսը» մասնակցել է Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությանը։ 2012 թվականին դուրս է եկել ֆուտբոլի Հայաստանի գավաթի խաղարկության եզրափակիչ փուլ։ Այդ տարիներին թիմի մարզիչ է աշխատել Արմեն Գյուլբուդաղյանցը։

Այժմ դիլիջանյան ֆուտբոլը ներկայացված է միայն մանկապատանեկան թիմով։ Մանկապատենական ֆուտբոլի զարգացման գործում լուրջ ներդրում ունի մարզիչ Նարեկ Դավթյանը, իսկ 2005-ից՝ Հայկազ Վիրաբյանը։

«Դիլիջանյան ղողանջներ»-ի մասնակից «Հովք» ժողգործիքների անսամբլը՝ Խաչիկ Ղազարյանի գլխավորությամբ

Խորհրդային ղողանջներ

1986 թվականի հոկտեմբերի 18-ին՝ Հոկտեմբերյան հեղափոխության տարելիցին ընդառաջ, հանրապետության տարբեր շրջաններում եւ քաղաքներում անցկացվում էին հանդիսավոր միջոցառումներ։ Դիլիջանում եւս կազմակերպվել է համաքաղաքային տոնահանդես՝ «Դիլիջանյան ղողանջներ» խորագրով, որն իրականացվել է հայտնի մշակութային գործիչ, «Էրեբունի-Երեւան» տոնակատարության կազմակերպիչ Լաերտ Մովսիսյանի ղեկավարությամբ։ Մեծամասշտաբ այդ միջոցառումն աննախադեպ երեւույթ էր քաղաքի մշակութային կյանքում։ Քաղաքացիների հուշերում դրվագներ են պահպանվել Դիլիջանի հրապարակում ներկայացվող

«Կարմիր բանակի մուտքը Հայաստան» բեմադրությունից, որով բացվել է տոնահանդեսը։ Իսկ միջոցառման ավարտին տեղի է ունեցել տոնական համերգ մարզադաշտում, որը շարունակվել է Կոմպոզիտորների ստեղծագործական տանը։ Համերգին մասնակցել են հանրահայտ գեղարվեստական խմբեր, նվագախմբեր եւ անհատ կատարողներ։

1987 թվականին՝ հեղափոխության հոբելյանական տարեդարձի կապակցությամբ, նույնպես կազմակերպվել է տոնակատարություն՝ «Հոկտեմբերյան», «Քնարական», «Արեւային», «Անմահության եւ բարեկամության ղողանջներ» խորագրերով։ Անցկացման վայրերն էին Դիլիջանի հրապարակը, «Դիլիջան» պատմամշակութային արգելոց-թանգարանը, Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհված դիլիջանցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրի տարածքը, քաղաքային զբոսայգին եւ մարզադաշտը։

Միջոցառման բացումն արվել է քաղաքային հրապարակից՝ ողջույնի խոսքերով, ապա տոնական երթը շարժվել է դեպի «Դիլիջան» պատմամշակութային արգելոց-թանգարան։ Կարպետներով ու գորգերով զարդարված համալիրը նոր կյանք էր առել այդ օրը։

Փողոցում ներկայացվել են թանգարանային նմուշներ, կազմակերպվել է նկարիչ Մամիկոն Ղուլյանի գործերի, ժողովրդական վարպետ Ռեւիկ Հովսեփյանի փայտագործական աշխատանքների, ինքնուս վարպետ Ռոբերտ Կոստանյանի ձեռագործ խաղալիքների հավաքածուների ցուցահանդես-վաճառքը։ Տարածքը զարդարվել է բազմագույն ընտիր ծաղիկներով եւ ծաղկեփնջերով։

Համերգային մասն իր ծրագրով աստղային հրավառություն է հիշեցրել։ Բավական է թվարկել մասնակիցներին՝ պատկերացնելու համար միջոցառման բացառիկությունը. «Երեւան» փողային նվագախումբ, Հայաստանի պարի պետական անսամբլ, Հայաստանի գուսանական երգի անսամբլ, Վրաստանից եւ Ադրբեջանից ժամանած երգի-պարի պետական անսամբլներ, Երեւանի սպայի տան պարի անսամբլ, հայկական նվագարանների «Տկզար» անսամբլ, «Տաղարան» հնագույն երաժշտության անսամբլ, հեռուստառադիոպետկոմի կամերային բալետ, «Էրեբունի» էստրադային անսամբլ, «Եղեգն» պարային անսամբլ, Հայաստանի ժողգործիքների պետական նվագախումբ, Դիլիջանի մշակույթի պալատի «Հաղարծին» վոկալ-գործիքային անսամբլ, կրկեսի արտիստներ, թատրոնի ու կինոյի դերասաններ։
Այդ օրը Դիլիջանում կայացել է նաեւ երեք հարսանեկան արարողություն։

«Դիլիջանյան ղողանջները» քաղաքի ողջ պատմության մեջ ամենամեծ միջոցառումն էր։ Կազմակերպիչների եւ մասնակիցների ցուցադրած բարձր վարպետության շնորհիվ «Ղողանջները» երկար ժամանակ պահպանվել է մեր համաքաղաքացիների հիշողության մեջ։

Ամփոփում

Խորհրդային միության փլուզումից հետո անկախացած բոլոր նախկին խորհրդային հանրապետություններում տնտեսական եւ քաղաքական խնդիրներ ծագեցին։ Հայաստանում դրանք բազմաթիվ էին՝ ավերիչ երկրաշարժ, ղարաբաղյան պատերազմ, մազապուրծ եղած գաղթականներ, եւ այս ամենի հետեւանք՝ տնտեսական ծանրագույն ճգնաժամ։ Դիլիջանը նույնպես ծանր շրջափուլ ապրեց. փակվեցին մի շարք ձեռնարկություններ, թափ հավաքեցին գործազրկությունն ու արտագաղթը։

Զինադադարից հետո երկիրն սկսեց ընդհատ–ընդհատ շնչել, եւ Դիլիջան քաղաքի զարգացման բեկումնային շրջանն սկզբնավորվեց 2000-ականների վերջին, երբ Հայաստանի կառավարությունը որոշեց Դիլիջանը դարձնել ֆինանսական կենտրոն։ 2013 թ.-ից այստեղ սկսեց գործել Հայաստանի կենտրոնական բանկի ուսումնահետազոտական կենտրոնը, չուշացան խոշոր ներդրումները։ Քաղաքում ուրվագծվեց նաեւ ուսումնական կենտրոն դառնալու հեռանկարը։ Բացվեց «Այբ» կրթական հիմնադրամին պատկանող Դիլիջանի կենտրոնական դպրոցը։ Կենտրոնական գրադարանի շենքն արդիականացվեց, բացվեց ժամանակակից գրադարանը։ Հաջորդը «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի դիլիջանյան մասնաճյուղն էր, տեղացիներին նաեւ հասանելի դարձան Հայաստանի ամերիկյան համալսարանի Բաց կրթության մի շարք դասընթացներ ու ծրագրեր։ 2014 թ.-ին բարերարներ Ռուբեն Վարդանյանը եւ Վերոնիկա Զոնաբենդը հիմնադրեցին Դիլիջանի միջազգային դպրոցը (United World College Dilijan), Դիլիջանի համայնքային կենտրոնը, եւ կենսագործվեցին մի շարք կրթական նախաձեռնություններ։

2017 թ.-ին բացվեց Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի նոր համալիրը։ Շնորհիվ արդեն իսկ գործող եւ նոր հիմնադրված կրթական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, երիտասարդական ու համայնքային կենտրոնների, 2016 թ.-ից ի վեր՝ Դիլիջանն ընդգրկված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ուսումնառու քաղաքների համաշխարհային ցանցում։

Ֆինանսական եւ ուսումնական կենտրոն դառնալուն զուգընթաց, Դիլիջան քաղաքը տարեցտարի կրկին սկսել է գրավել ավելի մեծ թվով զբոսաշրջիկների, առաջանցիկ տեմպերով զարգանում է հյուրընկալության ոլորտը, բարելավվում են քաղաքի ենթակառուցվածքները։ Մասնավոր բարերարների աջակցությամբ վերջին տարիներին բարեկարգվել է քաղաքային այգին, ներկայումս կառուցվում է Դիլիջանի եկեղեցին, եւ իրականացվում են բազմաթիվ այլ ներդրումային ծրագրեր։

Սիրելի՛ ընթերցող, սույն հետազոտական աշխատանքի նպատակն էր վերհանել եւ պահպանել Դիլիջան քաղաքի հարուստ պատմական ժառանգությունը։ Գրքում ներկայացված են 19-20-րդ դարերի ամենակարեւոր պատմական իրադարձությունները։ Լիահույս ենք, որ ի մի բերված փաստերն ու պատմական ակնարկները կհետաքրքրեն տեղացիներին, պատմաբաններին եւ պարզապես պատմություն սիրողներին, Դիլիջանում վերաբնակվածներին, զբոսաշրջիկներին եւ ընդհանրապես այն մարդկանց, ում հետաքրքրել է ու հետաքրքրում է Դիլիջան քաղաքի պատմությունը։

Գրականության ցանկ

- Ալբերտ Սիմոնյան, «Դիլիջան», Վանաձոր, 2012 թ., 2014 թ.
- Իսկանդար Էլլարյան, «Աղստեւի հովտի պատմության եւ կուլտուրայի հուշարձանները», Երեւան, 1980 թ.
- «Հայկական սովետական հանրագիտարան»- հատոր 3, Երեւան, 1977 թ.
- Հենրիկ Խառատյան, «Հայրենի երկիր, հարազատ մարդիկ, հայրենանվեր գործեր», Երեւան, 2003 թ.
- Հենրիկ Խառատյան, «Անվանի դիլիջանցիներ» գրքերի կենսագրական ամփոփ բառարան-ժողովածու, Երեւան, 2020 թ.
- Մկրտիչ Գրիգորյան, «Դիլիջան», Երեւան, 1989 թ.
- Ռուբեն Սիմոնյան, «Տավուշի մարզ», Երեւան, 2012 թ.
- Սերիկ Դավթյան, «Դիլիջանի քաղաքային գրադարանը», Երեւան, 1960 թ.
- «Տավուշ, նյութական եւ հոգեւոր ժառանգություն», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երեւան, 2009 թ.
- «Կատալոգ Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի», Երեւան, 1969 թ.
- Արտաշես Մխիթարյան «Էջեր Դիլիջանի անցյալից», «Դիլիջան» ամսաթերթ, 21.08.1971
- Վանիկ Բեգլարյան, «Դիլիջանը որպես հնագույն բնակավայր», «Դիլիջան» ամսաթերթ, 6.11.1980
- «Դիլիջանը Մետաքսի մեծ ճանապարհի երթուղում», «Դիլիջան» ամսաթերթ, 22.02.2016
- «Մեր նախնիները», «Հովք» ամսաթերթ, 23.09.2010
- Есаян, Степан Александрович, Ватинян, Хорен Мкртычевич, «Историко-архитектурные памятники Дилижана», Ереван, 1988
- Есаян, Гайк Степанович, «Материальная культура бассейна реки Агстев в развитом средневековье», Ереван, 1992
- Марине Кочарян, «Дилижанцы», Ереван, 2005 (часть 1), 2010 (часть 2)

Դիլիջանը 19-20-րդ դարերում

«Դիլիջանի արխիվ» ծրագրի ղեկավար՝
Սոնա Բուդաղյան

Հետազոտողներ՝ Ալբերտ Սիմոնյան եւ Նունե Զաքարյան
Խմբագիր՝ Լիզա Ճաղարյան
Սրբագրիչ՝ Էմմա Հովսեփյան

Գրքի ձեւավորում և տպագրական աշխատանքների կազմակերպում՝
W2W.AGENCY
Ղեկավար՝ Ելենա Բարդադիմովա
Կազմի ձեւավորում և պատկերազարդում՝
Սվետլանա Շապիեւա
Էջադրում՝ Անաստասիա Բուբիկինա
Լուսանկարների մշակում՝ Լերա Սվոնկ